



ՋԵԿՈՒՅՑ

ԿԱԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՄԻ 17-30 ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ԵՐԵՎԱՆ 2017

Սույն ուսումնասիրությունը հնարավոր է դարձել իրականացնել «Բաց հասարակության հիմնադրամներ»-Հայաստան և «Ժողովրդավարության ազգային հիմնադրամ» կազմակերպությունների աջակցությամբ:

Ձեկույցի բովանդակությունը և արտահայտված տեսակետները, կարծիքները պատկանում են ուսումնասիրության և զեկույցի հեղինակներին և հնարավոր է, որ չհամընկնեն «Բաց հասարակության հիմնադրամներ» Հայաստան և «Ժողովրդավարության ազգային հիմնադրամ» կազմակերպությունների տեսակետների հետ:

Ուսումնասիրությունն իրականացվել և զեկույցը կազմվել է «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ-ի իրավական փորձագետներ Հայկուհի Հարությունյանի, Արաքս Մելքոնյանի և Հասմիկ Հարությունյանի կողմից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	4
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ.....	6
Կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու խնդիրները Հայաստանի Հանրապետությունում	7
Գլուխ 1: Կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու սկզբունքները.....	9
1.1. Կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ ՄԻԵԴ ձևավորած դիրքորոշումները	9
1.2. Կալանավորման առնչությամբ ՀՀ դեմ ՄԻԵԴ կողմից կայացված վճիռները....	22
1.3. Կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպերը	27
Գլուխ 2: Ուսումնասիրության արդյունքները.....	38
2.1. Հարուցված քրեական գործերի ուսումնասիրություն	38
2.2. Ընդհանուր տեղեկություններ մեղադրյալների վերաբերյալ.....	46
2.3. Ուսումնասիրված դատական ակտերում հանցագործություն կատարած լինելու ողջամիտ կասկածի հիմնավորումները.....	48
2.4. Դատական ակտերում կալանավորման «վերաբերելի և բավարար» հիմնավորումները.....	53
2.5. Գրավի կիրառումը	60
2.6. Վերաբերելի տվյալների և տեղեկությունների ոչ ամբողջական ներկայացում դատարանին	62
2.7. Կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ որոշումների բողոքարկումը.....	62
2.8. Կալանավորման ժամկետի երկարացում.....	66
Ամփոփում.....	71
Առաջարկություններ.....	72

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն հետազոտությունն իրականացվել է «Իրավունքների պաշտպանությունն առանց սահմանների» հասարակական կազմակերպության կողմից՝ «Բաց հասարակության հիմնադրամներ»-Հայաստան և «Ժողովրդավարության ազգային հիմնադրամ» կազմակերպությունների աջակցությամբ:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել և վեր հանել Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքում 2016 թվականի հուլիսի 17-30-ը քաղաքացիների մասնակցությամբ հավաքների ընթացքում կատարված ենթադրյալ հանցագործությունների առնչությամբ հարուցված քրեական գործերի շրջանակներում կալանավորումը՝ որպես խափանման միջոցի կիրառման պրակտիկայի խնդիրները:

Հետազոտության շրջանակը ներառել է 2016 թվականի հուլիսի 17-30-ի ընթացքում տեղի ունեցած իրադարձությունների առնչությամբ հարուցված 4 քրեական գործերով որպես մեղադրյալ ներգրավված 34 մեղադրյալների նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ փաստաթղթերի ուսումնասիրությունը:

Հետազոտության շրջանակներում կատարվել է վարույթն իրականացնող մարմինների միջնորդությունների, առաջին աստիճանի դատարանների որոշումների, ինչպես նաև դրանց դեմ բերված վերաքննիչ, նաև վճռաբեկ բողոքների ու համապատասխանաբար վերաքննիչ ու վճռաբեկ դատարանների որոշումների՝ մարդու իրավունքների միջազգային չափանիշներին համապատասխանության ուսումնասիրություն:

Ուսումնասիրության են ենթարկվել նաև նախաքննության ընթացքում մեղադրյալների նկատմամբ կիրառված կալանքի ժամկետը երկարացնելու մասին վարույթն իրականացնող մարմնի միջնորդությունները և դատարանների որոշումները: Այն չի ներառել դատական քննության ընթացքում ամբաստանյալներին անազատության մեջ պահվելու հետ կապված խնդիրները:

Տվյալ ուսումնասիրության կարևորությունը պայմանավորված է մեղադրյալներին մեղսագրվող հանցագործությունների բնույթով, ինչպիսիք են զանգվածային անկարգություններ կազմակերպելը կամ դրան մասնակցելը և իշխանության ներկայացուցչի դեմ բռնություն գործադրելը, ինչպես նաև այն հանգամանքներով, որոնք նախորդել են անձանց կողմից ենթադրյալ հանցագործությունների իրականացմանը: Այս առնչությամբ կարևորվում է նաև որպես մեղադրյալ ներգրավված անձանց իրավունքների սահմանափակման իրավաչափության նկատմամբ հասարակական վերահսկողության անհրաժեշտությունը:

Հետազոտությունը բաղկացած է երկու բաժիններից, որոնք անդրադառնում են՝

1. կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելուն վերաբերող Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ձևավորած սկզբունքներին և Հայաստանի Հանրապետության դեմ կայացված որոշումներին, ինչպես նաև ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներն,

2. հարուցված քրեական գործերի շրջանակներում մեղադրյալների նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու, կալանավորման ժամկետը երկարացնելու վերաբերյալ որոշումների վերլուծությանը և վերհանված խնդիրներին:

Հետազոտությունն ամփոփվում է արձանագրված խնդիրների լուծմանն ուղղված առաջարկություններով:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության ընթացքում կիրառվել են հետևյալ մեթոդները՝

- Պաշտոնական տեղեկատվական կայքերի ուսումնասիրություն

Տեղեկատվություն է հավաքվել ՀՀ ոստիկանության (www.police.am) և ՀՀ Հատուկ քննչական ծառայության (www.ccc.am), ՀՀ քննչական կոմիտեի (www.investigative.am) ՀՀ Գլխավոր դատախազության (www.prosecutor.am), ՀՀ Ազգային Անվտանգության (www.sns.am), պաշտոնական կայքերից:

- Տեղեկատվություն ստանալու հարցումներ

2016 թ. հուլիսի 17-30 տեղի ունեցած իրադարձությունների առնչությամբ հարուցված քրեական գործերի, մեղադրյալների նկատմամբ կիրառված խափանման միջոցների վերաբերյալ պաշտոնական տեղեկատվության ստացման նպատակով իրականացվել են պաշտոնական հարցումներ ՀՀ հատուկ քննչական ծառայություն, ՀՀ քննչական կոմիտե և այլ մարմիններ:

ՀՀ դատարանների կողմից մեղադրյալների նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ որոշումները ստանալու նպատակով պաշտոնական հարցում է կատարվել ՀՀ դատական դեպարտամենտ, ինչպես նաև Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան:

- Փաստաթղթերի ուսումնասիրություն

Հետազոտության շրջանակներում ուսումնասիրվել են վարույթն իրականացնող մարմնի կողմից մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդություն հարուցելու մասին որոշումները՝ կից փաստաթղթերով, և դատարանի կողմից կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ համապատասխան որոշումները: Կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ դատարանների որոշումները վերլուծվել են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի հիման վրա Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, ինչպես նաև ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպերով ձևավորած չափանիշների հիման վրա: Այդ առթիվ իրականացվել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Կոնվենցիայի 5-րդ հոդվածով կալանավորման կիրառման վերաբերյալ որոշումների, ինչպես նաև ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ նախադեպային որոշումների ուսումնասիրություն:

**ԿԱԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑ
ԿԻՐԱՌԵԼՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Կալանավորումը որպես խափանման միջոց կիրառման պրակտիկան Հայաստանի Հանրապետությունում շարունակում է մնալ որպես մարդու իրավունքների արդիական խնդիր: Մասնավորապես՝ կալանքի իրավաչափությունը, կիրառման հաճախականությունը, կալանքի վերաբերյալ կայացված որոշումների հիմնավորվածությունը մտահոգությունների տեղիք են տալիս:

Վերջին երեք տարիներին Հայաստանի Հանրապետության դատարանների կողմից կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի միջնորդությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ներկայացված միջնորդություններից 94-95% բավարարվել է դատարանների կողմից: Մասնավորապես, 2016 թվականին ներկայացված 2563 միջնորդություններից դատարանի կողմից բավարարվել են 2379, այսինքն միջնորդությունների մոտ 95 տոկոսը, իսկ 2017թ. դատարան ներկայացված 2363 միջնորդություններից դատարանների կողմից բավարարվել են 2220-ը, այսինքն, ընդհանուր միջնորդությունների 94 տոկոսը:

Կալանքի որպես խափանման միջոցի ժամկետները երկարացնելու վերաբերյալ 2016թ. դատարան ներկայացված 1795 միջնորդություններից բավարարվել են 1691, այսինքն՝ մոտ 94%-ը: 2017թ. դատարան ներկայացված 1438-ից բավարարվել են 1339-ը, այսինքն՝ 93%-ը¹:

Կալանավորմանն այլընտրանքային խափանման միջոց կիրառելու դատական պրակտիկան 2016 թվականին գրավը կիրառվել է 13, իսկ 2017 թվականին՝ 12 դեպքում:

Հաշվի առնելով կալանավորման կիրառման նման բարձր ցուցանիշները, ինչպես նաև այն հանգամանքը, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (հետայսու տեքստում՝ ՄԻԵԴ) բազմիցս ընդգծել ու իր մտահոգությունն է արտահայտել Հայաստանի Հանրապետությունում կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու խնդիրների վերաբերյալ: Մասնավորապես՝ ՄԻԵԴ ընդգծել է, որ որոշումներն ունեն ստանդարտացված և կարծրատիպային բնույթ, ինչն ըստ դատարանի կրկնվող խնդիր է Հայաստանի Հանրապետությունում, և 2012 թվականից ի վեր Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի խախտում է ճանաչվել մի շարք գործերով: Մասնավորապես, նման եզրահանգման դատարանը եկել է Փիրուզյանն ընդդեմ Հայաստանի², Մալխասյանն ընդդեմ Հայաստանի³, Սեֆիլյանն ընդդեմ Հայաստանի⁴ գործերով: ՄԻԵԴ արձանագրել է, որ ներպետական դատարանները չեն ներկայացրել վերաբերելի և բավարար

¹ Դատական վիճակագրության ամփոփումն առկա է՝ <http://old.court.am/?l=lo&id=359>

² ՄԻԵԴ, Փիրուզյանն ընդդեմ Հայաստանի (Piruzyan v. Armenia) no. 33376/07, 26 հունիսի 2012:

³ ՄԻԵԴ, Մալխասյանն ընդդեմ Հայաստանի (Malkhasyan v. Armenia) no. 6729/07, 26 հունիսի 2012թ:

⁴ ՄԻԵԴ, Սեֆիլյանն ընդդեմ Հայաստանի (Sefilyan v. Armenia) no. 22491/08, 2 հոկտեմբերի 2012:

հիմնավորումներ, ի լրումն ողջամիտ կասկածի առկայության դիմումատուի նկատմամբ կալանավորումն ընտրելու և դրա ժամկետը երկարացնելու վերաբերյալ որոշումներում:

ՄԻԵԴ մտահոգությունները ընդգծվում են նաև այլ միջազգային կառույցների կողմից Հայաստանի Հանրապետությունում մարդու իրավունքների վիճակի գնահատմանն ուղղված զեկույցներում և փաստաթղթերում՝ ընդգծելով կալանավորման կիրառման բարձր ցուցանիշներն ու այլընտրանքների կիրառման սահմանափակվածությունը, դատարանների կողմից կալանավորման կիրառման համար հիմնավորումների և անհատական հանգամանքների վերլուծության բացակայությունը⁵: Կալանքի կիրառման խնդիրներին անդրադարձել է նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը իր տարեկան հաղորդումներում⁶:

⁵ ՄԱԿ-ի Կամայական ազատագրկման աշխատանքային խմբի զեկույցը Հայաստանի վերաբերյալ, A/HRC/16/47/Add.3, 17 փետրվարի 2011թ.: ՄԱԿ-ի խոշտանգումների դեմ կոմիտեի 4-րդ պարբերական զեկույցի ամփոփում, CAT/C/ARM/CO/4, 26 January 2017:

⁶ Օրինակ, ՄԻՊ, 2016 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, 2015 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում:

ԳԼՈՒԽ 1: ԿԱԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԿՁԲՈՒՆՔՆԵՐԸ

1.1. Կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ ՄԻԵԴ ձևավորած դիրքորոշումները

Անձի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի հիմնական նպատակն է պաշտպանել անձին կամայական կամ չհիմնավորված ազատազրկումից⁷:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածը սահմանում է, որ՝

1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով.

ա. անձին օրինական կերպով կալանքի տակ պահելը իրավասու դատարանի կողմից նրա դատապարտվելուց հետո,

բ. անձի օրինական ձերբակալումը կամ կալանավորումը դատարանի օրինական կարգադրությանը չենթարկվելու համար կամ օրենքով նախատեսված ցանկացած պարտավորության կատարումն ապահովելու նպատակով,

գ. անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմնին ներկայացնելու նպատակով կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար,

դ. անչափահասին կալանքի վերցնելը օրինական կարգադրության հիման վրա՝ դատտիարակչական հսկողության համար, կամ նրա օրինական կալանավորումը՝ նրան իրավասու իրավական մարմնին ներկայացնելու նպատակով,

ե. անձանց օրինական կալանքի վերցնելը՝ վարակիչ հիվանդությունների տարածումը կանխելու նպատակով, ինչպես նաև հոգեկան հիվանդներին, գինեմոլներին կամ թմրամոլներին կամ թափառաշրջիկներին օրինական կալանքի վերցնելը,

զ. անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ նրա անօրինական մուտքը երկիր կանխելու նպատակով, կամ այն անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը, որի դեմ միջոցներ են ձեռնարկվում՝ նրան արտաքսելու կամ հանձնելու նպատակով:

2. Յուրաքանչյուր ձերբակալված իրեն հասկանալի լեզվով անհապաղ տեղեկացվում է իր ձերբակալման պատճառների և ներկայացվող ցանկացած մեղադրանքի մասին:

3. Սույն հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի դրույթներին համապատասխան ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր ոք անհապաղ տարվում է դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ, որն օրենքով լիազորված է իրականացնելու դատական իշխանություն և ունի ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունք կամ մինչև դատաքննությունն ազատ արձակվելու իրավունք: Ազատ արձակումը կարող է պայմանավորվել դատաքննության ներկայանալու երաշխիքներով:

⁷ ՄԻԵԴ, Լուկանովն ընդդեմ Բուլղարիայի (Lukanov v. Bulgaria), no. 21915/93, 20 մարտի 1997, §41, Reports 1997-II; ՄԻԵԴ, Ասսանիձեն ընդդեմ Վրաստանի (Assanidze v. Georgia) [GC], no. 71503/01, 08 մարտի 2004, §171, ECHR 2004-II:

4. Յուրաքանչյուր ոք, ով ձերբակալման կամ կալանավորման պատճառով զրկված է ազատությունից, իրավունք ունի վիճարկելու իր կալանավորման օրինականությունը, որի կապակցությամբ դատարանն անհապաղ որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե կալանավորումն անօրինական է:

5. Յուրաքանչյուր ոք, ով, ի խախտումն սույն հոդվածի դրույթների, ձերբակալման կամ կալանավորման գոհ է դարձել, իրավունք ունի հայցի ուժով օժտված փոխհատուցման:

Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածը, Կոնվենցիայի 2, 3, և 4-րդ հոդվածների հետ համատեղ սահմանում է մարդու առաջնային և հիմնարար իրավունքը և պաշտպանում անձի ազատությունը և ֆիզիկական անվտանգությունը:

Իշխանության կամայականությունից պաշտպանության ապահովման համար Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է այն **սպառիչ դեպքերը**, որոնց պայմաններում անձն իրավաչափորեն կարող է զրկվել ազատությունից, և որոնք պետք է խիստ սահմանափակ մեկնաբանության ենթարկվեն, քանի որ հանդիսանում են անձի ազատության ամենահիմնական երաշխիքներից բացառություններ⁸:

Անձին ազատությունից զրկելու ցանկացած դեպք պետք է լինի **օրինական**՝ ինչպես ներպետական օրենսդրության նյութական և ընթացակարգային նորմերին համապատասխանելու առումով՝ առաջնորդվելով իրավունքի գերակայության սկզբունքով⁹, այնպես էլ Կոնվենցիոն երաշխիքների պահպանման տեսանկյունից¹⁰: Միաժամանակ, ազատությունից զրկելու ցանկացած դեպք պետք է ենթարկվի **անհապաղ և արագ դատական վերահսկողության**¹¹:

Անձի կողմից հանցագործություն կատարած լինելու ողջամիտ կասկածի առկայությունը և դրա պահպանությունը առաջնային պայման է անձի ազատագրկման օրինականության համար: Միաժամանակ, դատարանը պետք է հաստատի կալանավորման հիմքերի առկայությունը, ինչը կարողարացնի անձին ազատությունից զրկելը: Այն դեպքերում, երբ նման հիմքերը վերաբերելի և բավարար են, Դատարանը պետք է հաստատի արդյոք պետական իրավասու մարմինները ցուցադրել են հատուկ ջանասիրություն վարույթի իրականացման շրջանակներում: Նույն կերպ, ցանկացած ժամկետով, նույնիսկ ամենակարճ, ազատագրկման հիմնավորվածությունը իրավասու մարմինների կողմից պետք է համոզիչ կերպով ներկայացվի: Միաժամանակ, անձին կալանավորելու կամ ազատ արձակելու որոշում կայացնելիս, իրավասու մարմինները պարտավոր են հաշվի առնել դատավարությանը անձի մասնակցության ապահովման այլընտրանքները¹²:

⁸ ՄԻԵԴ, Քուինն ընդդեմ Ֆրանսիայի (Quinn v. France), no. 18580/91, 22 մարտի 1995, § 42:

⁹ ՄԻԵԴ, Ուինթերվերպն ընդդեմ Նիդերլանդների (Winterwerp v. the Netherlands), no.6301/73, 24 հոկտեմբերի 1979, § 39, Series A no. 33:

¹⁰ ՄԻԵԴ, Բոզանոն ընդդեմ Ֆրանսիայի (Bozano v. France), no. 9990/82, 18 դեկտեմբերի 1986թ. § 54:

¹¹ ՄԻԵԴ, ՄքԿեյն ընդդեմ Միացյալ Թագավորության (McKay v. the United Kingdom) [GC], no. 543/03, 3 հոկտեմբերի 2006, § 34, ECHR 2006-X:

¹² ՄԻԵԴ, Իդալովն ընդդեմ Ռուսաստանի (Idalov v. Russia) no. 5826/03, 22 մայիսի 2012թ, § 140:

Հանցագործություն կատարած լինելու ողջամիտ (հիմնավոր) կասկած

Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասի «գ» ենթակետի համաձայն՝ անձը կարող է զրկվել ազատությունից միայն քրեական վարույթի շրջանակներում, նրան իրավասու իշխանության մոտ տանելու նպատակով հանցագործություն կատարած լինելու **ողջամիտ (հիմնավոր) կասկածի հիման վրա**¹³:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (հետայսու՝ ՄԻԵԴ) դիտարկմամբ, Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասի «գ» ենթակետի շրջանակներում ողջամիտ կասկածը հաստատելու համար անհրաժեշտ չէ, որ ձերբակալման պահին կամ ձերբակալման ընթացքում ոստիկանությունն ունենա փաստերի կամ տեղեկության այնպիսի ծավալ, որն անհրաժեշտ է անձին դատապարտելու կամ մեղադրանք առաջադրելու համար, որոնք քրեական վարույթի հաջորդող փուլերն են¹⁴: Միաժամանակ, այն դեպքերում, երբ անձին մեղադրանք չի ներկայացվել կամ նա դատարան չի տարվել, չի նշանակում, որ անձին ազատությունից զրկելու նպատակը չի համապատասխանել տվյալ դրույթի պահանջներին:

Սակայն հանցագործություն կատարած լինելու կասկածը պետք է հիմնված լինի ողջամիտ հիմքերի վրա, ինչն էական նշանակություն ունի անձին կամայական ձերբակալումից կամ կալանավորումից պաշտպանելու համար: Այն հանգամանքը, որ ողջամիտ կասկածը հիմնվել է պաշտոնատար անձի բարեխիղճ կամ անկեղծ հավատամքի վրա, բավարար չէ: **Ողջամիտ կասկածը հիմնավորելու համար պետք է առկա լինեն փաստեր կամ տեղեկություններ, որոնք կբավարարեն օբյեկտիվ դիտորդին, որ անձը կարող էր կատարած լինել ենթադրյալ կոնկրետ հանցագործությունը**¹⁵:

ՄԻԵԴ կողմից ողջամիտ կասկածի առկայությունը չի հաստատվել այն դեպքերում, երբ այն հիմնված է եղել միայն տուժողի ցուցմունքի վրա, որը չնայած մատնանշում է ձերբակալված կամ կալանավորված անձին, սակայն չի հաստատվում այլ օժանդակող փաստերով, տեղեկություններով կամ ապացույցներով: Նույն կերպ Դատարանը հաստատել է, որ հետախուզական ծառայության օպերատիվ տեղեկությունը առանց որևէ հայտարարության, տեղեկության կամ կոնկրետ բողոքի չի կարող համարվել բավարար՝ հիմնավորելու կասկածի ողջամտությունը, որոնց հիման վրա անձը ձերբակալվել կամ կալանավորվել է¹⁶, կամ երբ կասկածը հիմնված է եղել ոստիկանության տեղեկատուի հայտարարության վրա (օպերատիվ տեղեկություն), ում ինքնությունը բացահայտված չէ: Դատարանն արձանագրել է, որ նման հայտարարությունները պետք է ուղեկցվեն այլ օժանդակ ապացույցներով կամ փաստերով կամ տեղեկությամբ¹⁷:

¹³ ՄԻԵԴ, Ջեչուսն ընդդեմ Լիտվայի (*Jėčius v. Lithuania*) no. 34578/97, 31 հուլիսի 2000, § 50, ECHR 2000-IX:

¹⁴ ՄԻԵԴ, Մյուրրեյն ընդդեմ Միացյալ Թագավորության (*Murray v. the United Kingdom*), no. 18731/91, 28 հոկտեմբերի 1994, § 55, Series A no. 300-A:

¹⁵ ՄԻԵԴ, Լաբիտան ընդդեմ Իտալիայի (*Labita v. Italy*) [GC], no. 26772/95, 06 ապրիլի 2000, § 155: ՄԻԵԴ, Գուզարդին ընդդեմ Իտալիայի (*Guzzardi v. Italy*), no. 7367/76, 06 նոյեմբերի 1980, §102:

¹⁶ ՄԻԵԴ, Լազորոսկին ընդդեմ Մակեդոնիայի (*Lazoroski v. the Former Yugoslav Republic of Macedonia*) no. 4922/04, 8 հոկտեմբերի 2009, § 48:

¹⁷ ՄԻԵԴ, Լաբիտան ընդդեմ Իտալիայի (*Labita v Italy*) no. 26772/95, 6 ապրիլ 2000, § 157:

Միաժամանակ, կասկածի ողջամտությունը կախված է առանձին դեպքի բոլոր հանգամանքներից¹⁸: Ողջամիտ կասկածի հաստատման համար անհրաժեշտ է, որ փաստերը, որոնց վրա իշխանությունները հիմնվել են ողջամտորեն համարվեն հանցավոր գործողություններ ներպետական օրենսդրության ներքո: Հետևաբար, ողջամիտ կասկած գոյություն ունենալ չի կարող, եթե այն գործողությունները, որոնց համար անձն ազատությունից զրկվել է, դրանց կատարման պահին ներպետական օրենսդրությամբ չեն հանդիսացել հանցագործություն:

ՄԻԵԴ-ը հաստատել է, որ հանցագործություն կատարած լինելու ողջամիտ կասկածը անձի ազատագրկման առաջնային պայմանն է¹⁹: Հետևաբար, չնայած ողջամիտ կասկածը պետք է գոյություն ունենա անձին ձերբակալելու և առաջին անգամ կալանավորելու ժամանակ, սակայն, ողջամիտ կասկածի գոյությունը և դրա շարունակականությունը պետք է հիմնավորվի կալանավորման ժամկետի երկարաձգման բոլոր դեպքերում²⁰:

Ազատագրկման դատական վերանայում

Նույն այդ պահից սկսած Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի առաջին պարբերության ներքո անձն իրավունք ունի անհապաղ տարվելու դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ, ով օրենքով լիազորված է իրականացնելու դատական իշխանություն՝ նախատեսելով նրա անկախության երաշխիքներ գործադիրից և կողմերից: Անձին դատավորի մոտ տանելու ժամկետը հաշվարկվում է նրան ազատությունից զրկելու՝ արգելանքի վերցնելու պահից²¹:

Միաժամանակ, Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասով դատական պաշտոնյայի համար սահմանվում են ինչպես ընթացակարգային, այնպես էլ նյութական պահանջներ: Մասնավորապես, դատավորի կամ այլ պաշտոնյայի կողմից անձամբ լսվելու իրավունք, և նյութական պահանջ ուսումնասիրելու կալանավորման կողմ և դեմ բոլոր հանգամանքները, գնահատելու արդյոք անձի կալանավորումն արդարացնող հիմքեր կան, և եթե նման հիմքերը բացակայում են, ազատման որոշում կայացնելու²²: Ընդհանուր առմամբ, 5-րդ հոդվածի 3-րդ մասը պահանջում է դատական պաշտոնյային **ըստ էության քննություն իրականացնել**²³:

Հանցագործություն կատարելու կասկածանքով ձերբակալված կամ կալանավորված անձի պաշտպանության համար անհրաժեշտ է անհապաղ դատական վերահսկողություն, ինչը կոչված է ապահովելու անձի նկատմամբ վատ վերաբերմունքից պաշտպանության արդյունավետ երաշխիքներ, ինչն առավել հավանական է ազատագրկման սկզբնական շրջանում:

Ըստ Եվրոպական կոնվենցիայի՝ դատական վերահսկողությունը պետք է բավարարի հետևյալ պահանջներին.

Դատական վերահսկողության անհապաղություն

¹⁸ ՄԻԵԴ, Ֆոքսը, Քեմբելը և Հարթլին ընդդեմ Միացյալ Թագավորության (Fox, Campbell and Hartley v. the United Kingdom) 30 օգոստոսի 1990, § 32, Series A no. 182:

¹⁹ ՄԻԵԴ, ՄքԿեյն ընդդեմ Միացյալ Թագավորության, հղում 11, § 44:

²⁰ ՄԻԵԴ, Մամմադովն ընդդեմ Ադրբեյջանի (Mammadov v. Azerbaijan), no. 15172/13, 22 մայիսի 2014, § 90:

²¹ ՄԻԵԴ, Տոմասին ընդդեմ Ֆրանսիայի (Tomas v. France), no. 12850/87, 27 օգոստոսի 1992, § 83, Series A no. 241-A:

²² ՄԻԵԴ, ՄքԿեյն ընդդեմ Միացյալ Թագավորության, հղում 11, § 35:

²³ ՄԻԵԴ, Տ.Վ. ընդդեմ Մալթայի (T.W. v. Malta) [GC], 25644/94, 29 ապրիլի 1999, § 41; ՄԻԵԴ, ՄքԿեյն ընդդեմ Միացյալ Թագավորության, հղում 11, § 35.

Ազատագրված և դատական վերահսկողությունը պետք է լինի նախևառաջ անհապաղ՝ ի երաշխավորումն ցանկացած վատ վերաբերմունքի հայտնաբերման և ցանկացած չհիմնավորված միջամտություն անձի ազատությանը նվազագույնի հասցնելու: Այս պահանջը ենթարկված է խիստ սահմանափակումների, ինչը մեկնաբանության քիչ ճկունություն է տալիս, հակառակ պայմաններում, ընթացակարգային երաշխիքները լրջորեն կյուլանան ի վնաս անձի՝ վտանգելով անձի ազատության իրավունքի ողջ էությունը: ՄԻԵԴ-ը հաստատել է, որ դատավորի կամ այլ պաշտոնյայի մոտ ներկայացվելու չորս օրվանից ավելի ժամկետը հանդիսանում է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-դ մասի խախտում, նույնիսկ ահաբեկչական հանցագործությունների քննության համատեքստում²⁴:

Դատական վերանայման մեխանիզմական բնույթ

Դատական վերահսկողությունը կրում է մեխանիզմական բնույթ և չպետք է կախված լինի ազատագրված անձի բողոքից: Այս պայմաններում անհրաժեշտ է տարբերել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասից, որն իրավունք է տալիս անձին դիմելու ազատ արձակվելու համար: Դատական վերանայման մեխանիզմական բնույթը կոչված է ապահովելու կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը, քանի որ անձը, օրինակ, ով ենթարկվել է վատ վերաբերմունքի կարող է չկարողանալ ներկայացնել դիմում դատարանին վերանայելու իր կալանավորումը, նույնը վերաբերելի է նաև ձերբակալված անձանց այլ խոցելի խմբերին, ինչպիսիք են հոգեկան խնդիրներ ունեցող կամ դատական պաշտոնյայի լեզուն չիմացող անձինք²⁵:

Դատական պաշտոնյայի բնութագիրն ու իրավասությունները

Անձը պետք է ներկայացվի դատավորի կամ դատական իշխանություն իրականացնող պաշտոնյայի մոտ, ով օժտված է անկախության երաշխիքներով ինչպես գործադիրից, այնպես էլ կողմերից: Դատական պաշտոնյան պետք է իրավասություն ունենա անձին ազատ արձակելու: Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասով դատական պաշտոնյայի համար սահմանվում են ինչպես ընթացակարգային, այնպես էլ նյութական պահանջներ: Մասնավորապես, դատավորի կամ այլ պաշտոնյայի կողմից անձամբ լսվելու իրավունք, և նյութական պահանջ ուսումնասիրելու կալանավորման կողմ և դեմ բոլոր հանգամանքները, գնահատելու արդյոք անձի կալանավորումն արդարացնող հիմքեր կան, և եթե նման հիմքերը բացակայում են, ազատման որոշում կայացնելու²⁶: Ընդհանուր առմամբ, 5-րդ հոդվածի 3-րդ մասը պահանջում է դատական պաշտոնյային **ըստ էության քննություն իրականացնել**²⁷:

²⁴ ՄԻԵԴ, Բրոգանն ու այլք ընդդեմ Միացյալ Թագավորության (Brogan and others v. the United Kingdom) 29 նոյեմբերի 1988, § 62:

²⁵ ՄԻԵԴ, Աքուլինան ընդդեմ Մալթայի (Aquilina v. Malta)[GC] no. 25642/94, 29 ապրիլ 1999, § 49:

²⁶ ՄԻԵԴ, ՄքԿեյն ընդդեմ Միացյալ Թագավորության, հղում 11, § 35:

²⁷ ՄԻԵԴ, Տ.Վ. ընդդեմ Մալթայի (T.W. v. Malta) [GC], 25644/94, 29 ապրիլի 1999, § 41; ՄքԿեյն ընդդեմ Միացյալ Թագավորության, հղում 5, § 35.

Վերաբերելի և բավարար հիմնավորումներ

ՄԻԵԴ արձանագրել է, որ չնայած անձին ազատագրվելու համար ողջամիտ կասկածի առկայությունը ազատագրվման պարտադիր պայման է, [որոշ ժամանակ անց] դա բավարար չէ: Ցանկացած ժամանակահատվածով անձի ազատագրվման հիմնավորվածությունը՝ անկախ դրա տևողությունից, պետք է համոզիչ կերպով ցուցադրվի: Միաժամանակ, ի լրումն ներպետական դատարանների կողմից *վերաբերելի և բավարար* հիմնավորումների ներկայացման, ներպետական իրավասու մարմինները պարտավոր են ցուցաբերել հատուկ ջանասիրություն քննության իրականացման առնչությամբ²⁸:

Անձին կալանավորելու համար դատարանի կողմից բավարար և վերաբերելի հիմնավորումների ներկայացման պահանջը, ի լրումն ողջամիտ կասկածի առկայության, գործում է *անձի կալանավորման առաջին որոշման կայացման փուլում*, այն է ձերբակալումից անմիջապես հետո²⁹: Միաժամանակ, անձին կալանավորելու կամ ազատ արձակելու վերաբերյալ որոշում կայացնելիս, իշխանությունները պարտավոր են հաշվի առնել նաև այլընտրանքային միջոցներ, որոնք կարող են ապահովել նրա ներկայությունը դատաքննությանը³⁰:

Ըստ ՄԻԵԴ դատական պրակտիկայի՝ կալանավորման հիմքերը, որոնք պետք է ներկայացվեն վերաբերելի և բավարար հիմնավորումներով, ներառում են հետևյալները՝ անձի փախուստի վտանգը, քննությունը խոչընդոտելու վտանգը, վկաների վրա ճնշում գործադրելու, ապացույցներ կեղծելու կամ պայմանավորվածությունների (դավադրության) վտանգը, հանցագործություն կատարելու վտանգը, հասարակական անկարգություններ հարուցելու և կալանավորվածին պաշտպանելու անհրաժեշտությունը³¹:

Անձին ազատելու առնչությամբ դատարանի կողմ կամ դեմ հիմնավորումները չպետք է լինեն ընդհանուր և վերացական³²: Մասնավորապես, անձի փախուստի վտանգը չի կարող հիմնվել բացառապես անձին սպառնացող պատժի խստության վրա: Այն պետք է գնահատվի վերաբերելի գործոնների համակցությամբ, որոնք կարող են հաստատել փախուստի վտանգի առկայությունը, որ կհիմնավորեն անձի ազատագրվումը կամ նման վտանգը այնքան աննշան կդարձնեն, ինչը չի կարող հիմնավորել նախնական քննության ընթացքում անձի կալանավորումը³³: Պետք է հաշվի առնել անձի անձնական հատկանիշները, նրա արժեքները, բնակության վայրի առկայությունը, զբաղվածությունը, ընտանեկան կապերը և բոլոր կապերը երկրի ներսում, որտեղ հետապնդվում է,

²⁸ ՄԻԵԴ, Լաբիտան ընդդեմ Իտալիայի, § 153, Իդալովն ընդդեմ Ռուսաստանի (Idalov v. Russia [GC], 5826/03, 22 մայիսի 2012, §140:

²⁹ ՄԻԵԴ, Բուզադջին ընդդեմ Մոլդովայի Հանրապետության (Buzadji v. the Republic of Moldova [GC]), 23755/07, 5 հուլիսի 2016, §§ 87 և 102:

³⁰ ՄԻԵԴ, Իդալովն ընդդեմ Ռուսաստանի, § 140:

³¹ ՄԻԵԴ, Բուզադջին ընդդեմ Մոլդովիայի (Buzadji v. the Republic of Moldova), no. 23755/07, § 88, ՄԻԵԴ, Տոմասին ընդդեմ Ֆրանսիայի (Tomasi v. France) 12850/87, 27 օգոստոսի 1992, § 95, ՄԻԵԴ, Թոնհ ընդդեմ Ավստրիայի (Toth v. Austria) 11894/85, 12 դեկտեմբերի 1991, § 70; ՄԻԵԴ, Ի. Ա. ընդդեմ Ֆրանսիայի, 28213/95, 23 սեպտեմբերի 1998, § 108:

³² ՄԻԵԴ, Փիրուզյանն ընդդեմ Հայաստանի (Piruzyan v. Armenia) 33376/07, 26 հունիսի 2012, § 92:

³³ ՄԻԵԴ, Փիրուզյանն ընդդեմ Հայաստանի, § 95; ՄԻԵԴ, Պանչենկոն ընդդեմ Ռուսաստանի (Panchenko v. Russia), no. 45100/98, 08 փետրվարի 2005, § 106:

ինչպես նաև անձի արտասահմանյան հարաբերությունները³⁴: Սպասվող պատժի ծանրությունը և ապացույցների կշիռը կարող են լինել վերաբերելի, սակայն որպես այդպիսին որոշիչ չեն, և երաշխիքների ստանալու հնարավորությունը կարող է օգտագործվել նվազեցնելու այդ ռիսկերը:

Անձի կողմից քննության պատշաճ իրականացմանը խանգարելու վտանգը նույնպես չի կարող հիմնվել վերացական հիմնավորումների վրա, այլ պետք է ուղեկցվի *փաստացի ապացույցներով*³⁵: Այն հիմնավորումները, ինչպիսիք են հետագա քննչական գործողություններ կատարելու անհրաժեշտությունը կամ այն փաստը, որ քննությունը դեռ ավարտված չէ, չեն համապատասխանում Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասով անձին կալանավորելու ընդունելի հիմքերին³⁶:

Մեղադրյալի կողմից հանցագործություններ կատարելու վտանգը նույնպես պետք է գնահատվի գործի փաստերի հիման վրա, որոնք պետք է հավաստվեն և գնահատվեն գործի հանգամանքների լույսի ներքո՝ հաշվի առնելով հատկապես մեղադրյալի անձնական հատկանիշները և անցյալ պատմությունը³⁷:

Հաշվի առնելով որոշ հանցագործությունների ծանրությունը և դրանց նկատմամբ հանրային արձագանքը՝ հանցագործությունների որոշ տեսակներ կարող են առաջացնել հանրային անհանգստություն, ինչը կարող է արդարացնել առնվազն որոշ ժամանակով մեղադրյալի կալանավորումը: Միայն բացառիկ դեպքերում և ներպետական օրենսդրությամբ որպես կալանավորման հիմք նախատեսված լինելու պայմաններում այս գործոնը կարող է հաշվի առնվել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի ներքո անձի ազատագրկման հիմք³⁸: Տվյալ դեպքերում նույնպես վարույթն իրականացնող մարմինը և դատարանները պետք է հիմնվեն առկա փաստերի, տեղեկությունների կամ ապացույցների վրա, որոնք կհիմնավորեն հանրային անկարգությունների առաջացման հնարավորությունը:

Նույնը վերաբերում է նաև մեղադրյալին պաշտպանելու անհրաժեշտության հիմքին, ինչը նույնպես կարող է կիրառվել բացառապես ներպետական օրենսդրությամբ նախատեսված լինելու դեպքում, սակայն այն կարող է կիրառվել բացառիկ հանգամանքներում՝ կախված հանցագործության բնույթից, այն կատարելու պայմաններից և կատարման ենթատեքստից³⁹:

Հատուկ ջանասիրություն

Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի ներքո քրեական վարույթի ցանկացած փուլում անկախ դրա տևողությունից, իրավասու մարմինները կրում են պարտավորություն ցուցաբերել վարույթի իրականացման «հատուկ ջանասիրություն»: Վարույթն իրականացնող մարմնի կամ դատարանի գործողությունները կամ որոշումները, որոնց հետևանքով մեղադրյալը մնում է

³⁴ ՄԻԵԴ, Նեումեյստերն ընդդեմ Ավստրիայի (Neumeister v. Austria), 27 հունիսի 1968, § 10:

³⁵ ՄԻԵԴ, Փիրուզյանն ընդդեմ Հայաստանի, § 96:

³⁶ ՄԻԵԴ, Փիրուզյանն ընդդեմ Հայաստանի, § 98:

³⁷ ՄԻԵԴ, Գալն ընդդեմ Հունգարիայի (Gal v. Hungary), no. 62631/11, 11 մարտի 2014թ. § 42:

³⁸ ՄԻԵԴ, Լետելիերն ընդդեմ Ֆրանսիայի (Letellier v. France), no. 12369/86, 26 հունիսի 1991, § 51:

³⁹ ՄԻԵԴ, Ի. Ա. ընդդեմ Ֆրանսիայի (I. A. v. France), no. 28213/95, 23 սեպտեմբերի 1998, § 108:

կալանավորված ավելին, քան անհրաժեշտ էր, եթե իշխանությունը ցուցաբերեր ջանասիրություն, կհանդիսանա այս սկզբունքի խախտում:

Այլընտրանքային միջոցների կիրառում

Անձին ազատ արձակելու կամ կալանավորելու որոշում կայացնելիս Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի ներքո իշխանությունները պարտավորություն ունեն դիտարկելու այլընտրանքային միջոցները, որոնք կապահովեն մեղադրյալի ներկայությունը դատական քննությանը⁴⁰:

ՄԻԵԴ արձանագրել է, որ գրավը կարող է կիրառվել միայն, եթե կալանավորման անհրաժեշտությունը հիմնավորող պատճառները գերակայում են: Եթե անձի փախուստի վտանգը կարող է կանխվել գրավի կիրառմամբ կամ այլ երաշխիքներով, ապա մեղադրյալը պետք է ազատ արձակվի⁴¹: Իշխանությունների կողմից համապատասխան գրավի որոշման դեպքում նույնպիսի ուշադրություն պետք է դրսևորվի, ինչպես անձի շարունակական կալանավորման անհրաժեշտության հաստատման համար: Մասնավորապես, գրավի կիրառման որոշմամբ գրավի գումարի չափը պետք է պատշաճ հիմնավորվի, և հաշվի առնվեն մեղադրյալի հնարավորությունները: Հետևաբար, ներպետական դատարանների կողմից գրավի վճարման հնարավորությունների ուսումնասիրություն չկատարելը հանդիսանում է Կոնվենցիայի խախտում⁴²:

Դատարանն արձանագրել է, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի լույսի ներքո գրավի գումարի չափը պետք է որոշվի՝ մեղադրյալի անձը և նրա ունեցվածքը հաշվի առնելով: Միաժամանակ, որոշ հանգամանքներում, անձին վերագրվող վնասի չափը կարող է նշանակություն ունենալ գրավի գումարը որոշելու հարցում՝ հաշվի առնելով փախուստի դիմելու հնարավորությունը: Դատարանն ուսումնասիրել է, թե արդյոք ելնելով գործի հանգամանքներից, որտեղ մեծ ծավալի գումարներ են ներգրավված եղել, գրավի չափի որոշումը բացառապես անձի ունեցվածքի հիման վրա, բավարար է անձի ներկայությունը դատաքննությանն ապահովելու համար, ինչը հանդիսանում է գրավի հիմնական նպատակը:

Հետևաբար, Դատարանն արձանագրել է, որ գործի կոնկրետ հանգամանքներում և դրա ծանր հետևանքների լույսի ներքո, գրավի չափը որոշելիս անձին վերագրվող հանցագործության ծանրությունը և վնասը կարող է հաշվի առնվել՝ ի լրումն անձի անձնական հանգամանքների, ունեցվածքի, գրավի գումարը վճարելու հնարավորությունների և այլն⁴³:

⁴⁰ ՄԻԵԴ, Ջաբլոնսկին ընդդեմ Լեհաստանի (Jablonski v. Poland) no. 33492/96, 21 դեկտեմբերի 2000, § 83:

⁴¹ ՄԻԵԴ, Մանգուրասն ընդդեմ Իսպանիայի (Mangouras v. Spain), no. 12050/04, 28 սեպտեմբերի 2010, § 79:

⁴² ՄԻԵԴ, Տոշեվն ընդդեմ Բուլղարիայի (Toshev v. Bulgaria) no. 56308/00, 10 2006, §§ 68 և հաջորդները:

⁴³ ՄԻԵԴ, Մանգուրասն ընդդեմ Իսպանիայի, § 92:

Կալանավորման ողջամիտ ժամկետ

ՄԻԵԴ արձանագրել է, որ գործում է ազատության կանխավարկածը, հետևաբար ներպետական դատարանները պարտավոր են ապահովել անձի ազատագրկման ժամկետի ողջամտությունը⁴⁴:

Ինչպես հաստատել է ՄԻԵԴ-ը, Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի երկրորդ պարբերությունը՝ մինչև դատավարությունն անձին ազատելու առնչությամբ, դատական իշխանություններին ընտրության հնարավորություն չի տալիս կամ անձին ողջամիտ ժամկետում դատարան քննության ներկայացնելու կամ պայմանականորեն ազատ արձակել: Հակառակը, անձի պայմանական կալանավորումն է, ինչը ողջամիտ ժամկետից երկար չի կարող լինել: Նույնիսկ եթե նախնական քննության տևողությունը քննադատության ենթակա չէ, անձի կալանավորման տևողությունը չի կարող անցնել ողջամիտ ժամկետը: Մինչև դատապարտվելը, անձը պետք է համարվի անմեղ, և անձին ազատ արձակելու իրավադրույթի նպատակը նրան ազատ արձակելու պահանջն է, երբ կալանավորումը դադարում է ողջամիտ լինելուց⁴⁵:

Մինչդատական կալանավորման ժամկետի ողջամտությունը չի կարող գնահատվել վերացականորեն: Մեղադրյալի կալանավորման ժամկետի ողջամտությունը պետք է գնահատվի յուրաքանչյուր գործի փաստերի և առանձնահատկությունների լույսի ներքո: Անձի շարունակական ազատագրկումը կարող է համարվել արդարացված կոնկրետ գործում միայն եթե առկա են հանրային շահի (genuine) պահանջի հստակ ցուցիչներ, որոնք, չնայած անմեղության կանխավարկածին, գերակայում են անձի անձնական ազատության իրավունքին⁴⁶: Հաշվի առնելով հատկապես փախուստի վտանգը, անձի բնութագիրը, նրա բարոյականությունը, արժեքները, կապերը պետության հետ, որտեղ հետապնդվում է, ինչպես նաև միջազգային կապերը պետք է հաշվի առնվեն⁴⁷:

Առաջնայնորեն ներպետական դատական իշխանության պարտավորությունն է երաշխավորել, որ կոնկրետ գործով, անձի նախնական կալանավորման ժամկետը չի անցնում ողջամիտ ժամկետը: Հետևաբար, հաշվի առնելով անմեղության կանխավարկածի սկզբունքը, նրանք պետք է ուսումնասիրեն հանրային շահի առկայության պահանջին վերաբերող բոլոր կողմ և դեմ փաստերը, որոնք հիմնավորում են ազատության իրավունքի սահմանափակումը և պետք է հստակ ցուցադրվեն կայացված որոշումներում⁴⁸:

Կալանավորման օրինականության վերանայման իրավունք

Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ *յուրաքանչյուր ոք, ով ձերբակալման կամ կալանավորման պատճառով զրկված է ազատությունից, իրավունք ունի*

⁴⁴ ՄԻԵԴ, ՄքԿեյն ընդդեմ Միացյալ Թագավորության, հղում 11, § 41:

⁴⁵ ՄԻԵԴ, Բուզադջին ընդդեմ Մոլդովայի Հանրապետության (Buzadji v. the Republic of Moldova), 5 հուլիսի 2016թ., § 89:

⁴⁶ ՄԻԵԴ, Լաբիտան ընդդեմ Իտալիայի, § 152; Կուդլան ընդդեմ Լեհաստանի (Kudła v. Poland) [GC], no. 30210/96, §§ 110 և հաջորդները, ECHR 2000-XI:

⁴⁷ ՄԻԵԴ, Նեումեիստերն ընդդեմ Ավստրիայի, § 10:

⁴⁸ ՄԻԵԴ, Կուդլան ընդդեմ Լեհաստանի, § 110; Իդալովն ընդդեմ Ռուսաստանի, § 141:

վիճարկելու իր կալանավորման օրինականությունը, որի կապակցությամբ դատարանն անհապաղ որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե կալանավորումն անօրինական է:

ՄԻԵԴ արձանագրել է, որ չնայած ոչ ամբողջ ծավալով, Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ հոդվածով նախատեսված վարույթը պահանջում է նույն երաշխիքները, ինչ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի ներքո՝ քրեական և քաղաքացիական դատավարությունների համար, մասնավորապես, այն պետք է լինի դատական և ունենա մրցակցային բնույթ, երաշխավորի կողմերի հավասարությունը, իրականացվի պատշաճ ջանասիրությամբ և պետք է ապահովվեն անձի ազատագրկման տեսակին բնորոշ այլ երաշխիքները⁴⁹: Ստորև քննարկենք դրանք առանձին:

Կալանավորման օրինականության վերանայման շրջանակը

Դատարանն արձանագրել է, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասի ներքո օրինականությունն ունի նույն իմաստը, ինչը Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասում, և ձերբակալության կամ կալանավորման օրինականությունը պետք է գնահատվի ոչ միայն ներպետական օրենքի, այլև Կոնվենցիայի հիման վրա՝ դրա սկզբունքների և ազատության սահմանափակման նպատակների լույսի ներքո: Հետևաբար, կալանավորման օրինականության վերանայման շրջանակներում իրավասու դատարանը պետք է ուսումնասիրի ոչ միայն ներպետական օրենսդրության դատավարական պահանջների պահպանումը, այլև ձերբակալության հիմքում ընկած կասկածի ողջամտությունը, ձերբակալության նպատակների իրավաչափությունը և կալանավորման որոշման ընդունումը⁵⁰:

Չնայած Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասը չի պահանջում վերաքննիչ բողոքը քննող դատավորից պատասխանել մեղադրյալի բոլոր փաստարկներին, անձը զրկված կլինի տվյալ դրույթով նախատեսված հիմնական երաշխիքներից, եթե դատարանը, հիմնվելով ներպետական օրենսդրության կամ դատական պրակտիկայի վրա, մեղադրյալի կողմից ներկայացված կոնկրետ փաստեր, որոնք ի գործու են կասկածի տակ դնել ազատագրկման օրինականության համար էական պայմանները, դրանք դիտարկեն ոչ վերաբերելի կամ հաշվի չառնեն:

Կալանավորման վերանայման դատական երաշխիքներ

Կալանավորման օրինականության վերանայման դատավարությունը պետք է հիմնված լինի մրցակցության սկզբունքի վրա և ապահովի կողմերի միջև (մեղադրանքի կողմի և կալանավորված անձի) հավասարությունը:

Մասնավորապես, կողմերի հավասարությունն ապահովված չի լինի, եթե պաշտպանության կողմը զրկված է քրեական գործի այն փաստաթղթերի հասանելիությունից, որոնք էական են

⁴⁹ ՄԻԵԴ, Մոլոտչկոն ընդդեմ Ուկրաինայի (Molotchko v. Ukraine) no. 12275/10 , 26 ապրիլի 2012, §149:

⁵⁰ ՄԻԵԴ, Սվերշովն ընդդեմ Ուկրաինայի (Svershov v. Ukraine) no. 35231/02, 27 նոյեմբերի 2008, § 70; ՄԻԵԴ, Բրոգանն ու այլք ընդդեմ Միացյալ Թագավորության (Brogan and others v. the United Kingdom) no. 11209/84, 29 նոյեմբերի 1988, § 65:

կալանավորման օրինականությունը արդյունավետորեն վիճարկելու համար⁵¹: Անհրաժեշտ է փաստել, որ տվյալ կանոնը չի ենթադրում քրեական գործի ողջ նյութերը պաշտպանության կողմից տրամադրելու պարտականություն, ինչը երաշխավորված է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի ներքո անձի մեղավորությունը հաստատելու վարույթի առնչությամբ, սակայն մեղադրյալի դեմ ներկայացված պնդումները և նրա կալանավորման օրինականությունը արդյունավետորեն վիճարկելու համար, պաշտպանը պետք է հասանելիություն ունենա այն ապացույցներին, որոնք էական են այդ առթիվ, ***ներառյալ անձին արդարացնող ապացույցներին***⁵²:

ՄԻԵԴ հաստատել է, որ կարևոր չէ այն հանգամանքը, թե արդյոք դատական որոշումը կայացվել է ազատ արձակելու առնչությամբ անձի դիմումի հիման վրա կամ կալանավորման դիմումի հիման վրա ներկայացված դատախազի կողմից: ՄԻԵԴ մի շարք գործերով հանգել է եզրակացության, որ անձի կալանավորման ժամկետի երկարաձգման դիմումի քննությունը դատախազության դիմումի հիման վրա նույնպես ներառում է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասի երաշխիքները: Հետևաբար, Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասի կանոնները վերաբերելի են նաև անձի կալանավորման ժամկետի երկարաձգման հարցի քննությանը առաջին աստիճանի դատարանում⁵³:

Վկաների հարցաքննություն

Կողմերի հավասարության սկզբունքը պահանջում է, որ դատարանը լսի այն վկաներին, ում ցուցմունքների վրա, որպես այդպիսին, հիմնվում է շարունակական կալանավորման օրինականության հարցը⁵⁴: Հետևաբար, եթե վկաների ցուցմունքներն ունեն որոշիչ նշանակություն կալանավորման օրինականության, ներառյալ ողջամիտ կասկածի առկայության վիճարկման համար, դատարանը պետք է ապահովի վկայի ներկայությունը:

Մեղադրյալի կամ նրա պաշտպանի ներկայությունը դատական քննությանը

Կողմերի հավասարության և մրցակցության սկզբունքները պահանջում են մեղադրյալի մասնակցության և կալանավորման օրինականության վիճարկմանն արդյունավետ հնարավորության ապահովում: Դատարանն արձանագրել է, որ պաշտպանության կողմը համահավասար պետք է հնարավորություն ունենա ներկայացնելու իր փաստարկներն ու պնդումները: Հետևաբար, ՄԻԵԴ բավարար է գնահատել անձի պաշտպանի մասնակցությունը վերաքննիչ դատարանում գործի քննությանը⁵⁵:

Հետևաբար, կողմերի հավասարության սկզբունքը պահանջում է չի լինի, երբ ոչ մեղադրյալը, ոչ նրա պաշտպանը ներկա չեն գտնվել դատական քննությանը, սակայն մեղադրանքի կողմը

⁵¹ ՄԻԵԴ, Սեֆիլյանն ընդդեմ Հայաստանի (Sefilyan v. Armenia) no. 22491/08, 2 հոկտեմբերի 2012, § 104:

⁵² Նույն տեղում:

⁵³ ՄԻԵԴ, Սեֆիլյանն ընդդեմ Հայաստանի, § 102:

⁵⁴ ՄԻԵԴ, Ա-ն ու այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության (A and others v. United Kingdom) no. 3455/05, 19 փետրվարի 2009, § 204:

⁵⁵ ՄԻԵԴ, Չատալն ընդդեմ Թուրքիայի (Çatal v. Turkey) no. 26808/08, 17 ապրիլի 2012, §§ 34-35:

մասնակցել է⁵⁶: Նույն կերպ, Դատարանը գտել է կողմերի հավասարության սկզբունքի խախտում, երբ պաշտպանը հեռացվել է դատական նիստերի դահլիճից, սակայն նիստը շարունակվել է և մեղադրողը շարունակել է ներկայացնել կալանավորման կիրառման օժանդակող պնդումներ՝ ակնախ այն հանգամանքից, որ լսումներն անց են կացվել վերաքննիչ դատարանում⁵⁷:

Պաշտպանի հետ հաղորդակցության հնարավորությունը կալանավորման ընթացակարգով

Կալանավորման ընթացակարգում կիրառվում են Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված իրավաբանի հասանելիության և արդյունավետ ներկայացուցչության երաշխիքները: Պաշտպանի հետ հաղորդակցության կոնֆիդենցիալությունը պետք է պահպանվի, ինչը երաշխավորում է անձի և պաշտպանի միջև անկեղծ և բաց հաղորդակցությունը⁵⁸:

Կալանավորման արագ վերանայման գործընթաց

Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է ազատազրկված (ձերբակալված և կալանավորված) անձի իրավունքը նախաձեռնելու վարույթ՝ վիճարկելու իր ազատազրկման օրինականությունը, այդ թվում՝ ազատազրկման նյութական և ընթացակարգային կանոնների պահպանման առնչությամբ, որոնք էական են Կոնվենցիայի ներքո ազատազրկման օրինականության համար, և որը կարող է անհրաժեշտության դեպքում հանգեցնել անձի ազատ արձակման⁵⁹: Միաժամանակ, անձի ազատազրկման վիճարկման վարույթի հնարավորությունը պետք է տրամադրվի անձին կալանավորելուց հետո հնարավորին շուտ, և եթե անհրաժեշտ է դրանից հետո ողջամիտ պարբերականությամբ⁶⁰:

ՄԻԵԴ հաստատել է, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասի ներքո ձերբակալված կամ կալանավորված անձն իրավունք ունի ազատազրկման օրինականության վերանայման վարույթ հարուցելուց հետո իր ազատազրկման օրինականության վերաբերյալ արագ դատական որոշման կայացման⁶¹: Սակայն, արդյո՞ք տվյալ կանոնը պահպանվել է՝ պետք է որոշվի կոնկրետ գործի հանգամանքների լույսի ներքո⁶²: Կադեմն ընդդեմ Մալթայի գործով ՄԻԵԴ ճանաչել է խախտում, երբ անձի կալանավորման վերաբերյալ որոշումը առաջին աստիճանի դատարանի կողմից (Magistrates Court of Malta) կայացվել է 17 օրում⁶³:

Պողոսյանն ընդդեմ Հայաստանի գործով ՄԻԵԴ-ը ճանաչել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասի խախտում այն դեպքում, որ վերաքննիչ դատարանը մերժել է իրականացնել կալանավորման ժամկետի երկարաձգման դեմ մեղադրյալի բողոքի քննություն այն հիմնավորմամբ, որ քրեական

⁵⁶ ՄԻԵԴ, Լապուսանն ընդդեմ Ռումինիայի (Lapusan v. Romania) no. 9723/03, 3 հունիսի 2008, § 53:

⁵⁷ ՄԻԵԴ, Ուլոչն ընդդեմ Լեհաստանի (Włoch v. Poland) no. 27785/95, 19 հոկտեմբերի 2000, §§ 129-131:

⁵⁸ ՄԻԵԴ, Իստրատիին ընդդեմ Մոլդովա (Istratii and Others v. Moldova) no. 8721/05, 27 մարտի 2007, §§ 87-91:

⁵⁹ ՄԻԵԴ, Մոլոտչկոն ընդդեմ Ուկրաինայի (Molotchko v. Ukraine) no. 12275/10, 26 ապրիլի 2012, § 147:

⁶⁰ ՄԻԵԴ, Մոլոտչկոն ընդդեմ Ուկրաինայի, § 148:

⁶¹ ՄԻԵԴ, Մուսիալն ընդդեմ Լեհաստանի (Musial v. Poland) [GC] no. 24557/94, 25 մարտի 1999 § 43:

⁶² ՄԻԵԴ, Կադեմն ընդդեմ Մալթայի (Kadem v. Malta) 55263/00, 9 հունվարի 2003, §§ 43-44:

⁶³ Նույն տեղում, § 44:

գործի նախնական քննությունն ավարտվել է, և քրեական գործը փոխանցվել է դատարան՝ ըստ էության քննության⁶⁴:

⁶⁴ ՄԻԵԴ, Պողոսյանն ընդդեմ Հայաստանի (Poghosyan v. Armenia) 44068/07, 20 դեկտեմբերի 2011, § 80:

1.2. Կալանավորման առնչությամբ ՀՀ դեմ ՄԻԵԴ կողմից կայացված վճիռները

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից 2017 թվականի դրությամբ Հայաստանի Հանրապետության դեմ կայացվել են անձի ազատության իրավունքին վերաբերող 29 վճիռներ, ինչը թվով երկրորդն է արդար դատաքննության իրավունքի առնչությամբ կայացված վճիռներից հետո⁶⁵:

Պողոսյանն ընդդեմ Հայաստանի, թիվ 44068/07, 20 դեկտեմբերի 2011թ.

Տվյալ գործով ՄԻԵԴ արձանագրել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի խախտում մի քանի ասպեկտով: Մասնավորապես, դիմումատուի նկատմամբ կալանքը կիրառվել է իր բացակայությամբ դատական նիստի պայմաններում: Դատարանն արձանագրել է, որ անձի բացակայությամբ կալանավորման կիրառման նիստի անցկացումն ինքնին չի հակասում Կոնվենցիայի դրույթներին: Սակայն դիմումատուին ոստիկանության կողմից ձերբակալվել և կալանավորվել է դատարանի կողմից իր բացակայությամբ կայացված որոշման հիման վրա, և երբեք դատարանի մոտ չի տարվել, ինչպես դա պահանջում է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասով:

Նույն որոշմամբ ՄԻԵԴ արձանագրել է նաև Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով նախատեսված իրավունքների խախտում: Մասնավորապես, դատարանն արձանագրել է, որ դիմումատուն պահվել է անազատության մեջ առանց համապատասխան դատական որոշման, երբ նախաքննության ավարտից հետո գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան քննության: Դատարանի կողմից անձի խափանման միջոցի վերաբերյալ որոշումը կայացվել է միայն գործը դատաքննության նշանակելու մասին որոշմամբ, որպիսի պայմաններում դիմումատուն 2007թ. հունիսի 13-ից մինչև հուլիսի 2-ը մնացել էր անազատության մեջ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 138-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, ըստ որի քրեական գործով մինչդատական վարույթում կալանքի տակ պահելու ժամկետի ընթացքը կասեցվում է այն օրը, երբ դատախազը քրեական գործն ուղարկում է դատարան: [...] Այսպիսով, Դատարանն արձանագրել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասի խախտում:

Դատարանն արձանագրել է, որ դիմումատուի՝ գրավով կալանքից ազատվելու դիմումը մերժելու վերաբերյալ վերաքննիչ բողոքը վարույթ չընդունելը այն պատճառաբանությամբ, որ քրեական գործն ուղարկել է դատարան ըստ ուրջան քննության, հանդիսանում է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված իրավունքի անհիմն սահմանափակում և ճանաչել է տվյալ դրույթի խախտում:

Փիրուզյանն ընդդեմ Հայաստանի, թիվ 33376/07, 26 հունիսի 2012թ.

Տվյալ գործում ներպետական դատարանները Դիմումատուի նկատմամբ կալանավորումը՝ որպես խափանման միջոց կիրառելու և դրա ժամկետը երկարացնելու վերաբերյալ որոշումներում,

⁶⁵ ՄԻԵԴ պրակտիկայի ամփոփումը՝ https://www.echr.coe.int/Documents/Stats_violation_1959_2017_ENG.pdf

հիմնվել են փախչելու և քրեական վարույթի իրականացումը խոչընդոտելու վտանգի վրա՝ մեղսագրվող հանցագործության ծանր բնույթի, ինչպես նաև որոշ դեպքերում այն փաստի վրա, որ որոշ քննչական գործողություններ պետք է իրականացվեն և որ քրեական վարույթը դեռ ընթացքում է:

Դատարանն արձանագրել է, որ հիմքերը, ինչպիսիք են հետագա քննչական գործողություններ կատարելու անհրաժեշտությունը կամ այն փաստը, որ քրեական վարույթը դեռևս ավարտված չէ, չեն համապատասխանում անձին կալանավորելու համար Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի ներքո որևէ ընդունելի հիմնավորման:

Ինչ վերաբերում է փախուստի դիմելու կամ քրեական վարույթի իրականացմանը խոչընդոտելու վտանգին, Դատարանն արձանագրել է, որ ինչպես առաջին ատյանի դատարանը, այնպես էլ վերաքննիչ դատարանը սահմանափակվել են միայն տվյալ հիմքերի կրկնությամբ վերացականորեն և կարծրատիպային ոճով՝ առանց նշելու որևէ կոնկրետ պատճառներ՝ ինչու են նրանք գտնում, որ դիմումատուի փախուստի կամ վարույթին խոչընդոտելու մեղադրանքները հիմնավորված են: Միաժամանակ, դատարանները չեն փորձել հերքել դիմումատուի կողմից ներկայացված փաստարկները: Ընդհանուր հղումը մեղսագրվող արարքի ծանրությանը, որին դատարանները հիմնվել են, չի կարող հանդիսանալ նման վտանգների համար բավարար հիմնավորում:

Հետևաբար, Դատարանը գտել է, որ այն պատճառները, որոնց վրա հիմնվել են Լոռու մարզի դատարանը և Քրեական և զինվորական վերաքննիչ դատարանը իրենց որոշումներում դիմումատուի նկատմամբ կալանավորումը՝ որպես խափանման միջոց ընտրելու և դրա ժամկետը երկարաձգելու մասին որոշումներում վերաբերելի և բավարար չեն եղել: Հետևաբար, դատարանն արձանագրել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի խախտում:

Մալխասյանն ընդդեմ Հայաստանի, թիվ 6729/07, 26 հունիսի 2012թ.

Տվյալ գործում Դատարանն արձանագրել է, որ ներպետական դատարանները դիմումատուի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու և դրա ժամկետը երկարացնելու վերաբերյալ որոշումներում հիմնվել են նրա փախուստի և վկաների վրա անօրինական ազդեցություն ունենալու միջոցով արդարադատության իրականացմանը խոչընդոտելու հիմքերի վրա: Դատարանն արձանագրել է, որ ինչպես առաջին ատյանի դատարանը, այնպես էլ վերաքննիչ դատարանը սահմանափակվել են իրենց որոշումներում տվյալ հիմքերը կրկնելով վերացական և կարծրատիպային ձևով՝ առանց նշելու որևէ կոնկրետ պատճառներ, թե ինչու են նրանց գտնում տվյալ պնդումները հիմնավորված: Միաժամանակ, նրանք չեն փորձել նույնիսկ հերքել դիմումատուի կողմից ներկայացրած հակափաստարկները: Դիմումատուին մեղսագրվող հանցավոր արարքի ծանրությանը կատարված ընդհանուր հղումը չի կարող հանդիսանալ ենթադրյալ ռիսկերի բավարար հիմնավորում: Միաժամանակ, դատարանն արձանագրել է, որ դատարանների կողմից դիմումատուին գրավի հիման վրա ազատելու միջնորդությունը մերժելը այն հիմնավորմամբ, որ նրա հանցակիցը կալանավորված է, վերաբերելի չէ դիմումատուի փախուստի վտանգը հիմնավորելու համար: Հետևաբար, դատարանը եզրահանգել է, որ ներպետական դատարանների որոշումները դիմումատուին կալանավորելու և դրա ժամկետը

երկարաձգելու վերաբերյալ և վերաբերելի չեն եղել՝ խախտելով Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված իրավունքները:

Մեֆիլյանն ընդդեմ Հայաստանի, թիվ 22491/08, 2 հոկտեմբերի 2012թ.

Դատարանն արձանագրել է, որ ներպետական դատարանները դիմումատուի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելիս և այն երկարաձգելիս հիմնվել են մեղադրանքի ծանրության և փախչելու և քննությունը խոչընդոտելու ռիսկի վրա:

Դատարանն արձանագրել է, որ ինչպես Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների, այնպես էլ Քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը իրենց որոշումներում սահմանափակվել են միայն տվյալ հիմքերը թվարկելով վերացական և կարծրատիպային ձևով առանց նշելու որևէ պատճառ՝ ինչու են նրանք տվյալ մեղադրանքները համարել հիմնավորված: Միաժամանակ, նրանք չեն փորձել հերքել դիմումատուի փաստարկները: Դիմումատուին մեղսագրվող հանցավոր արարքի ծանրությանը ընդհանրական վկայակոչումը, ինչը օգտագործվել է ներպետական դատարանների կողմից մի շարք դեպքերում, չի կարող հանդիսանալ ենթադրյալ ռիսկերի բավարար հիմնավորում: Ավելին, երբ գործն ուղարկվել է դատարան, այն քննող դատարանը որևէ հիմնավորում չի ներկայացրել դիմումատուի կալանավորման ժամկետը երկարացնելու համար:

Դատարանն արձանագրել է, որ մեկ դեպքում վերաքննիչ դատարանը, մերժելով դիմումատուին գրավով ազատելու միջնորդությունը այն հիմնավորմամբ, որ դիմումատուն օտարերկրա քաղաքացի է, չնայած վերաբերելի գործոն է, սակայն ինքնին բավարար չէ անձին գրավի դիմաց ազատ արձակելը մերժելու համար: Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ դիմումատուն Հայաստանում 1992 թվականից ի վեր ունեցել է մշտական բնակություն, ունեցել է ընտանիք, սեփականություն և ակնհայտորեն ամուր սոցիալական կապեր պետության հետ: Այն հանգամանքը, որ դիմումատուի անձնագիրն առգրավվել է, նույնպես անտեսվել է դատարանների կողմից, չնայած դա էականորեն նվազեցրել է փախուստի ռիսկը:

Դատարանը, անդրադառնալով վերաքննիչ դատարանի նույն որոշմամբ գրավի կիրառումը մերժելու այն փաստարկին, որ դիմումատուի հանցակիցը նույնպես կալանավորված է, Դատարանը փաստել է, որ այն որևէ ձևով վերաբերելի չէ դիմումատուի գործին:

Հետևաբար, այն դեպքերում, երբ անձի շարունակական կալանավորման միակ հիմնավորումը փախուստի վտանգն է և, հետևաբար, դատաքննությանը ներկայանալուց խուսափելը, անձը պետք է ազատ արձակվի, եթե հնարավոր է ստանալ դատաքննությանը նրա ներկայության երաշխիքներ: Տվյալ դեպքում ներպետական դատարանները նույնիսկ չեն քննարկել նման հնարավորությունը և մերժել են գրավի կիրառումն առանց անձի հանգամանքների մանրակրկիտ ուսումնասիրության:

Վերոգրյալի լույսի ներքո, Դատարանն արձանագրել է, որ առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների որոշումները նրան կալանավորելու, կալանավորման ժամկետը երկարացնելու և գրավի կիրառումը մերժելու վերաբերյալ վերաբերելի և բավարար չեն: Հետևաբար, Դատարանն արձանագրել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի խախտում:

Արա Հարությունյանն ընդդեմ Հայաստանի, թիվ 629/11, 20 հոկտեմբերի 2016թ.

Դատարանն արձանագրել է, որ դիմումատուի բողոքները և ազատ արձակման միջնորդությունները, ինչպես նաև քննիչի հետագա միջնորդությունները, որոնցով պահանջվել է դիմումատուի կալանավորման ժամկետի երկարաձգում, ներպետական դատարանների կողմից ուսումնասիրվել են նույն կերպ, միակ բացառությամբ Վերաքննիչ քրեական դատարանի, որը հղում է կատարել սպասվող պատժի խստությանը՝ հիմնավորելու անձի ոչ պատշաճ վարքագիծը: Սակայն միայն սա, ըստ Դատարանի, բավարար չէ դիմումատուի կալանավորումը հիմնավորելու համար: Դատարանը նշել է, որ բավականին հաճախ ճանաչել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի խախտում այն դեպքերում, երբ ներպետական դատարանները անձին կալանավորել են հիմնվելով հիմնականում հանցագործության ծանրության վրա և օգտագործելով կարծրատիպային բանաձևեր առանց անդրադառնալու կոնկրետ փաստերի կամ այլընտրանքային խափանման միջոցները հաշվի առնելու: Միաժամանակ, դատարանը նշել է, որ փաստացիորեն չորս ամիս անց, դիմումատուն գրավի կիրառմամբ ազատ է արձակվել, սակայն որևէ հիմնավորում չի տրվել, թե ինչու հնարավոր չէր ավելի վաղ կիրառել կալանավորման այլընտրանքային միջոցը:

Դատարանը փաստել է, որ անձի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու կամ այն երկարաձգելու որոշում կայացնելիս կարծրատիպային բանաձևի օգտագործումը Հայաստանում կրկնվող խնդիր է և Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի խախտում դատարանի կողմից արդեն ճանաչվել է մի շարք գործերով: Դատարանը հղել է Փիրուզյանն ընդդեմ Հայաստանի, Մալխասյանն ընդդեմ Հայաստանի, Սեֆիլյանն ընդդեմ Հայաստանի գործերով: Դատարանն արձանագրել է, որ ներպետական դատարանները չեն ներկայացրել վերաբերելի և բավարար հիմնավորումներ, ի լրումն ողջամիտ կասկածի առկայության դիմումատուի նկատմամբ կալանավորումն ընտրելու և երկարաձգելու վերաբերյալ որոշումներում:

Տվյալ վճռում Դատարանն անդրադարձել է նաև կառավարության պնդմանը, որ դիմումատուն չի սպառել ներպետական միջոցները, մասնավորապես չի վիճարկել Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի երկու որոշումները, որոնք վերաբերել են դատարանի որոշումներին Դիմումատուի միջնորդությունը կալանավորումը այլընտրանքային խափանման միջոց գրավով փոխարինելը մերժելու մասին, ինչպես նաև քննիչի միջնորդությունը դիմումատուի կալանավորումը երկրորդ անգամ երկարաձգելու վերաբերյալ մասնակի բավարարման մասին:

Տվյալ դեպքում Դատարանը փաստել է, որ դիմումատուն նախորդ դեպքերում վիճարկել է նման որոշումները Վերաքննիչ քրեական դատարանում և նրա բողոքները մերժվել են միշտ կարծրատիպային ձևով առանց կոնկրետ գործին վերաբերելի հիմնավորման: Հետևաբար, կասկածելի է, որ տվյալ երկու որոշումների վերաքննիչ բողոքարկումն այլ արդյունք կունենար:

Ավելին, նույնիսկ եթե նման բողոքարկումը հաջողված լիներ, այն կարող էր ապահովել դիմումատուի ազատ արձակումը տեսականորեն միայն որոշ ժամանակ նոյեմբերի վերջերին կամ դեկտեմբերի սկզբին և չէր ազդի անձի ազատագրկմանը մինչ այդ ժամանակահատվածը: Ինչ վերաբերում է այդ ժամանակահատվածին, ապա դիմումատուն սպառել էր բոլոր ներպետական միջոցները՝ ներկայացվելով բողոքներ համապատասխան որոշումների դեմ: Հետևաբար, կառավարության առարկությունը ներպետական միջոցների սպառման վերաբերյալ ենթակա է մերժման:

Արզումանյանն ընդդեմ Հայաստանի, թիվ 25935/08, 11 հունվարի 2018թ.

Դատարանը ճանաչել է դիմումատուի ազատության իրավունքի խախտում, հղում կատարելով Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի վերաբերյալ ձևավորված սկզբունքներին, և նշել է, որ Դատարանի կողմից արդեն հաստատվել է կարծրատիպային բանաձևի օգտագործումը անձին կալանավորելու որոշում կայացնելիս որպես կրկնվող խնդիր Հայաստանում: Տվյալ դեպքում նույնպես Դատարանը հղում է կատարել Փիրուզյանն ընդդեմ Հայաստանի, Մալխասյանն ընդդեմ Հայաստանի, Մեֆիլյանն ընդդեմ Հայաստանի, և վերջին շրջանում, Արա Հարությունյանն ընդդեմ Հայաստանի գործով վճիռներին: Տվյալ գործը չի տարբերվում. ներպետական դատարանները նույն կերպ հիմնավորել են դիմումատուի շարունակական ազատագրվումը բացառապես մեջբերելով վերաբերելի ներպետական օրենսդրական ձևակերպումը և հղում կատարելով անձին վերագրվող հանցագործության ծանրությունը առանց անդրադառնալու գործի կոնկրետ փաստերին կամ ներկայացնելու որևէ մանրամասներ առ այն, թե ինչու է փախչելու, քրեական վարույթի իրականացմանը խոչընդոտելու կամ նոր հանցագործություն կատարելու ռիսկն արդարացված: Հետևաբար, Դատարանը եզրահանգել է, որ ներպետական դատարանների կողմից չեն ներկայացվել բավարար և վերաբերելի հիմնավորումներ դիմումատուին կալանավորելու և կալանավորման ժամկետը երկարացնելու որոշումներում: Հետևաբար, Դատարանը ճանաչել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի խախտում:

1.3. Կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպերը

Ըստ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի՝ կալանավորումը՝ որպես խափանման միջոց, կիրառվում է բացառապես մեղադրյալի նկատմամբ՝ քրեական գործով վարույթի ընթացքում նրա ոչ պատշաճ վարքագիծը կանխելու և դատավճռի կատարումն ապահովելու նպատակով⁶⁶: Կալանավորումը քրեական գործի քննության ընթացքում կիրառվող խափանման միջոցներից ամենախիստն է, քանի որ սահմանափակում է անձի կարևորագույն իրավունքը՝ ազատությունն ու անձնական անձեռնմխելիությունը, որը «...մարդու այլ հիմնարար իրավունքների հետ մեկտեղ, ՀՀ սահմանադրությամբ ճանաչվում է անօտարելի և բարձրագույն արժեք: Ուստի մարդու այդ հիմնարար իրավունքի սահմանափակման իրավաչափության երաշխիքները կանոնակարգող իրավադրույթները մեկնաբանելիս անհրաժեշտ է ելնել մարդու իրավունքները հարգելու, մարդու իրավունքների սահմանափակման միջոցով հիմնական իրավունքը բովանդակազրկելու անթույլատրելիության սկզբունքներից»⁶⁷:

ՀՀ վճռաբեկ դատարանը հաստատել է, որ կալանավորումը որպես խափանման միջոց պետք է ընտրվի միայն այն ժամանակ, երբ խափանման մյուս միջոցները քրեական գործի վարույթի ընթացքում չեն կարող ապահովել անձի պատշաճ վարքագիծը⁶⁸: Այսինքն, կալանավորումը որպես խափանման միջոց անձի նկատմամբ կարող է կիրառվել որպես բացառիկ միջոց:

Կալանավորման քննության անհապաղությունը

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ձերբակալվածը վարույթն իրականացնող մարմնի որոշման հիման վրա ենթակա է ազատման, եթե (...) լրացել է՝ սույն օրենսգրքով սահմանված առավելագույն ժամկետը, և դատարանը մեղադրյալին կալանավորելու մասին որոշում չի կայացրել: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 129-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ձերբակալումը չի կարող տևել արգելանքի վերցնելու պահից 72 ժամից ավելի: ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ԼԴ/0197/06/08 գործով⁶⁹ արձանագրել է, որ Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված «անհապաղությունը» ՀՀ քրեական դատավարության իմաստով ձերբակալման եռօրյա ժամկետն է, որից ***հետո անձը կամ ազատ է արձակվում, եթե մինչդատական վարույթ իրականացնող մարմնի միջնորդության հիման վրա դատարանի որոշմամբ նրա նկատմամբ որպես խափանման միջոց կալանավորումը չի ընտրվել:***

⁶⁶ ՀՀ ՔԴՕ, հոդված 134:

⁶⁷ ՀՀ վճռաբեկ դատարան, Ա. Ավետիսյանի գործով 2008թ. հոկտեմբերի 31-ի թիվ ԱՎԴ/0022/06/08 որոշում, կետ 18:

⁶⁸ ՀՀ վճռաբեկ դատարան, Ա. Ճուղուրյանի գործով 2007թ. օգոստոսի 30-ի թիվ ՎԲ-132/07 գործով որոշում:

⁶⁹ ՀՀ վճռաբեկ դատարան, Տ. Վահրադյանի գործով 2008թ. դեկտեմբերի 26-ի թիվ ԼԴ/0197/06/08 գործով որոշում, կետ 24:

Կալանավորման կիրառման պայմանները

ՀՀ վճռաբեկ դատարանն ամրագրել է, որ անձի ազատության և անձնական անձեռնմխելիության սահմանափակումը թույլատրվում է միայն բացառիկ դեպքերում՝ օրենքով սահմանված կարգով: Ընդ որում, անձին ազատությունից զրկելու՝ **օրենքով թույլատրված հիմքերի ցանկը սպառիչ է**, հետևաբար՝ անձին ազատությունից զրկելը, որը տեղի չի ունենում օրենքով նախատեսված կարգով կամ սահմանված հիմքերի շրջանակում, կամայական է և անօրինական: Հետևաբար, [...] անձի ազատության և անձնական անձեռնմխելիության սահմանափակման յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է ապահովել այդ սահմանափակման օրինականությունն ու հիմնավորվածությունը:

Հետևաբար, ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «...անձին կալանավորելու միջնորդությունը կարող է բավարարվել այն դեպքում, երբ միջնորդությունը ներկայացրած քրեական հետապնդման մարմնին հաջողվի դատարանի համար համոզիչ հիմնավորել՝

Ա. Անձին մեղսագրվող հանցագործությանը նրա առնչությունը (տվյալ հանցագործության կատարման մեջ հիմնավոր կասկածը) և

Բ. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում, սահմանված հիմքերից որևէ մեկի կամ մի քանիսի առկայությունը»⁷⁰:

Մեկ այլ՝ Վ. Գևորգյանի վերաբերյալ գործով որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ կալանքը որպես խափանման միջոց ընտրելիս դատարանը պարտավոր է անդրադառնալ կալանավորման պայմանների ու հիմքերի առկայությանը: **Կալանավորման պայմանը փաստական տվյալներով հաստատված հանգամանքներ են, որոնց բացակայությունը բացառում է խափանման միջոցի կիրառումը:** Կալանավորման պայմանի թվում հատուկ կարևորություն ունի անձի կողմից իրեն վերագրվող հանցագործությունը կատարած լինելու հիմնավոր կասկածը, որի առկայությունը հավաստելուց հետո միայն հնարավոր է անդրադառնալ կալանավորման հիմքերին:

Հետևաբար, եթե առկա չէ անձի կողմից հանցագործություն կատարած լինելու կասկած, ապա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված կալանավորման հիմքերի առկայության հարցի քննարկումն այլևս անիմաստ է: Միաժամանակ, ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հիմնավոր կասկածի հետ մեկտեղ կալանավորման պայմաններ են նաև համապատասխան քրեաիրավական որակմամբ հարուցված քրեական գործի առկայությունը, գործի նյութերում անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման առկայությունը, ՀՀ քրեական օրենսգրքի 24-րդ հոդվածով սահմանված տարիքը, որոշակի խումբ անձանց համար, օրինակ՝ պատգամավորներ, դատավորներ, անձեռնմխելիության պարտադիր հաղթահարումը⁷¹:

⁷⁰ ՀՀ վճռաբեկ դատարան, Գ. Միքայելյանի վերաբերյալ գործով 2009թ. դեկտեմբերի 18-ի թիվ ԵԱԴԴ/0085/06/09 որոշում, կետ 32:

⁷¹ ՀՀ վճռաբեկ դատարան, Վ. Գևորգյանի վերաբերյալ գործով 2011թ. փետրվարի 24-ի թիվ ԵԿԴ/0678/06/10 որոշում, կետեր 18-19:

Ողջամիտ կասկածը

Մեկնաբանելով հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկածը՝ որպես անձի ազատության իրավունքի սահմանափակման համար անհրաժեշտ պայման՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «անձին ազատությունից զրկելու համար անհրաժեշտ է հիմնավոր կասկած առ այն, որ նա իրավախախտում է կատարել, ընդ որում՝ յուրաքանչյուր դեպքում կասկածը պետք է լինի ողջամիտ: [...] Դիրքորոշում սահմանելով այն մասին, որ կասկածը պետք է լինի ողջամիտ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «հանցագործություն կատարած լինելու ողջամիտ կասկած» ձևակերպումը չի ենթադրում, որ մեղադրյալի մեղավորությունը հաստատված համարելու համար անհրաժեշտ է ունենալ հանցանքը տվյալ անձի կողմից կատարված լինելու բավարար ապացույցներ, ինչն ավելի բարձր ապացուցողական չափանիշ է: Ըստ վճռաբեկ դատարանի՝ ***կասկածը հիմնավոր կհամարվի նաև ենթադրյալ հանցագործության հետ կասկածվող անձի օբյեկտիվ կապը հաստատող որոշակի տեղեկությունների ու փաստերի առկայության դեպքում, ընդ որում՝ անհրաժեշտ է ունենալ նաև բավարար հիմքեր՝ եզրակացնելու, որ դեպքը, իրադարձությունը համընկնում է այն ենթադրյալ հանցանքին, որի կատարման մեջ անձը կասկածվում է:*** Այլ կերպ՝ կասկածը կարող է համարվել հիմնավոր միայն այն դեպքում, երբ անձի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնող պաշտոնատար անձը՝ քննիչը կամ դատախազը, ***կասկածվող անձի կատարած գործողությունների (անգործության) վերաբերյալ կներկայացնի տեղեկություններ, փաստեր կամ ապացույցներ, որոնք ուղղակիորեն կմատնանշեն նրա առնչությունն իրեն վերագրվող ենթադրյալ հանցագործությանը, ինչպես նաև կհիմնավորեն, որ դեպքը, որի կատարման մեջ անձը կասկածվում է, համընկնում է իրեն վերագրվող հանցանքի դեպքին:***

Վճռաբեկ դատարանը հատուկ ընդգծում է, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացվող վերոնշյալ տեղեկությունները, փաստերը կամ ապացույցները պետք է հետազոտվեն մրցակցային դատավարության կանոնների պահպանմամբ, ինչը ենթադրում է, որ այդ տեղեկություններին, տվյալներին կամ ապացույցներին պետք է ծանոթանա նաև պաշտպանության կողմը»⁷²:

Հիմք ընդունելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումները՝ վճռաբեկ դատարանը գտել է, որ կասկածը չի կարող հիմնված լինել սուսկ այն հավաստիացման վրա, որ առկա է ստույգ, բայց և գաղտնի տեղեկություն: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մեկնաբանության համաձայն՝ ողջամիտ կասկածի չափանիշը հիմնվում է փաստերի կամ տեղեկությունների առկայության վրա, որոնք հնարավորություն կտային անաչառ դիտորդին եզրակացնելու, որ տվյալ անձը հնարավոր է, որ կատարած լինե՞ր հանցանքը: Մակայն պարտադիր չէ, որ կասկածը հիմնավորող փաստերը բավարարեն այն նույն սանդղակին, որն անհրաժեշտ է

⁷² ՀՀ վճռաբեկ դատարան, Վ. Գևորգյանի վերաբերյալ գործով 2011թ. փետրվարի 24-ի թիվ ԵԿԴ/0678/06/10 որոշում, կետեր 20-21:

անձի դատապարտումը կամ նրա նկատմամբ մեղադրանք առաջադրելը հիմնավորելու համար, քանի որ այդ փաստերը կարող են հայտնաբերվել ավելի ուշ՝ քրեական գործի քննության փուլում⁷³:

Ընդհանրացնելով իրավական վերլուծությունը՝ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ազատությունից զրկելու համար անհրաժեշտ է հիմնավորված ողջամիտ ենթադրություն առ այն, որ անձը հանցանք է կատարել, ինչպես նաև առկա են մեղսագրվող արարքի իրական լինելը հավաստող բավարար ապացույցներ:

Այդ կասկածները պետք է հիմնված լինեն օրենքով սահմանված կարգով ձեռք բերված որոշակի փաստական տվյալների վրա, որոնք պետք է պատշաճ իրավական ընթացակարգի սահմաններում հետազոտվեն դատական քննության ընթացքում: Դատարանի հետևությունները հիմնավոր կասկածի առկայության կամ բացակայության վերաբերյալ պետք է լինեն հիմնավորված և պատճառաբանված⁷⁴:

Վ. Գևորգյանի վերաբերյալ գործով թիվ ԵԿԴ/0678/06/10 որոշմամբ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ քրեական վարույթն իրականացնող մարմնի՝ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդության քննարկման արդյունքներով դատարանը **պետք է արձանագրի հիմնավոր կասկածի առկայությունը կամ բացակայությունը, պետք է պարզի կալանավորման մյուս պայմանների առկայությունը**, այն դեպքում, երբ դատարանը կհանգի հետևության, որ վարույթն իրականացնող մարմնի ներկայացրած նյութերը բավարար են արձանագրելու, որ առկա է անձի կողմից հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկած, և միաժամանակ կալանավորման մյուս պայմանները նույնպես առկա են, ապա պետք է կայացվի հիմնավորված և պատճառաբանված որոշում այն մասին, թե արդյո՞ք առկա են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված հիմքերից որևէ մեկը կամ մի քանիսը: Ավելին, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված **հիմքերի առկայության վերաբերյալ դատարանի հետևությունը նս պետք է հիմնավորված լինի վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացված համապատասխան տեղեկություններով, փաստերով կամ ապացույցներով**:

Նույն որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը, արձանագրելով խախտում, փաստել է, որ վերաքննիչ դատարանի կողմից դիմումատուի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ որոշման մեջ նշել է, որ ըստ ներկայացված նյութերի՝ առկա է հիմնավոր կասկած, որ դիմումատուն կատարել է իրեն մեղսագրված արարքը: Վերաքննիչ դատարանը, սակայն, բավարարվելով հանցանքի կատարման մեջ հիմնավոր կասկածի առկայության վերաբերյալ օրենսդրական պայմանի պարզ շարադրանքով իր որոշման մեջ չի նշել գործով ձեռք բերված որևէ փաստական տվյալ, որն ուղղակիորեն կմատնանշեր Վ.Գ.-ի առնչությունը կատարված իրավախախտմանը, ինչպես նաև չի պատճառաբանել հիմնավոր կասկածի առկայության վերաբերյալ իր հետևությունը: Վերաքննիչ դատարանը չի մատնանշել նաև

⁷³ ՀՀ վճռաբեկ դատարան, Վ. Գևորգյանի վերաբերյալ գործով 2011թ. փետրվարի 24-ի թիվ ԵԿԴ/0678/06/10 որոշում, կետ 22:

⁷⁴ Նույն տեղում, կետ 23:

բավարար հիմքեր, եզրակացնելու, որ դեպքը, իրադարձությունը համընկնում է այն հանցանքին, որի կատարման մեջ Վ.Գ. կասկածվում է⁷⁵:

Կալանավորման հիմքերը

ՀՀ քրեական դատավարության օրենսդրությունը սահմանել է կալանավորման կիրառման օրինականությունն ու հիմնավորվածությունն ապահովող մի շարք երաշխիքներ, որոնք ներառում են կալանավորման հիմքերը: Դրանք օրենքով նախատեսված այն հանգամանքներն են, որոնք հաստատվում են ապացույցների որոշակի ամբողջությամբ և հնարավորություն են տալիս հիմնավորված ենթադրություններ անել այն մասին, որ անձը, գտնվելով ազատության մեջ, կարող է դրսևորել ոչ պատշաճ վարքագիծ և խոչընդոտել քրեական դատավարության խնդիրների իրականացմանը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը, դատախազը, քննիչը կամ հետաքննության մարմինը խափանման միջոց կարող են կիրառել միայն այն դեպքում, երբ քրեական գործով ձեռք բերված նյութերը բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ կասկածյալը կամ մեղադրյալը կարող է

- Թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից,
- Խոչընդոտել մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալու կամ այլ ճանապարհով,
- Կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք,
- Խուսափել քրեական պատասխանատվությունից և նշանակված պատիժը կրելուց,
- Խոչընդոտել դատարանի դատավճռի կատարմանը:

Ըստ վճռաբեկ դատարանի՝ այս հոդվածի բովանդակությունից հետևում է, որ կալանավորման կիրառման հիմքերն ունեն կանխատեսական, մոտավոր բնույթ, քանի որ ենթադրում են ապագային վերաբերող իրադարձություններ: Ընդ որում, այդ կանխատեսող գործողություններն ***անհրաժեշտ է հիմնավորել քրեական գործով ձեռք բերված որոշակի նյութերով, որով էլ վերջին հաշվով որոշվում է կալանավորման կիրառման հիմնավորվածությունը:***

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածում թվարկված մեղադրյալի հավանական գործողությունների մասին հետևությունները պետք է հիմնված լինեն ***գործի նյութերից բխող ողջամիտ կասկածների կամ ենթադրությունների վրա:*** Դա նշանակում է, որ կալանավորման կիրառման հիմքում բոլոր դեպքերում պետք է դրվեն ***որոշ փաստական տվյալներ:***

Կալանքի կիրառման հիմնավորվածությունը և պատճառաբանվածությունը

⁷⁵ Նույն տեղում, կետ 24:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ խափանման միջոցը կիրառվում է դատարանի, դատախազի, քննիչի կամ հետաքննության մարմնի որոշմամբ: Խափանման միջոց կիրառելու մասին քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշումը պետք է լինի պատճառաբանված, բովանդակի մեղադրյալին կամ կասկածյալին վերագրվող հանցագործության մասին նշումներ և համապատասխան խափանման միջոց ընտրելու անհրաժեշտության մասին հիմնավորում»:

Դատական ակտի հիմնավորվածության և պատճառաբանվածության պահանջը պահպանված լինելու համար բավարար չէ օրենքով նախատեսված հիմքերի պարզ շարադրանքը, այլ անհրաժեշտ է կիրառել դատական ակտի պատճառաբանվածության առավել բարձր չափանիշ՝ դատարանի հետևությունները հիմնավորող գործի փաստական տվյալներով: Ըստ որում, անձի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելիս, ինչպես նաև կալանքի ժամկետը երկարացնելիս պետք է հաստատվի հասարակության ընդհանուր շահի և անհատի հիմնարար իրավունքների միջև արդարացի հավասարակշռություն, և որը պետք է բխի անձի՝ ազատությունից զրկելու հետ կապված կիրառվող միջոցի և հետապնդվող նպատակների միջև համամասնության ողջամիտ հարաբերակցության անհրաժեշտությունից...:

Նշված սկզբունքների հիման վրա Վճռաբեկ դատարանը հանգել է եզրակացության, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածով սահմանված խափանման միջոցի կիրառման հիմքերը չեն կարող այնպես մեկնաբանվել և կիրառվել, որ անձին կալանավորելու կամ կալանքի ժամկետը երկարացնելու մասին դատական ակտը պատճառաբանելու համար ընդամենը բավարար լինի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածով սահմանված իրավական ձևակերպումների վկայակոչումը կամ վերարտադրումը: Հակառակ պարագայում անձի ազատության և անձնական անձեռնմխելիության սահմանադրական իրավունքի սահմանափակման իրավաչափության դատական երաշխիքը կլինի պատրանքային, իսկ հիմնական իրավունքը փաստացի կբովանդակվի:

Հետևաբար, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածում թվարկված մեղադրյալի հավանական գործողությունների մասին հետևությունները, որոնք կարող են առաջ բերել անձի ազատության և անձնական անձեռնմխելիության հիմնական իրավունքի սահմանափակում, պետք է հիմնված լինեն գործի նյութերից բխող ողջամիտ ենթադրությունների վրա⁷⁶:

Իսկ ինչ վերաբերում է անձին մեղսագրվող հանցանքի ծանրությանը, ապա թեև այն էական նշանակություն ունի ազատության մեջ գտնվող մեղադրյալի դրսևորվող վարքագծի հավանականությունը կանխորոշելու հարցում, սակայն այդ հանգամանքը պետք է գնահատվի գործում առկա մնացած, մասնավորապես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 3-րդ մասում մատնանշված հանգամանքների համատեքստում, որը սահմանում է, որ «խափանման միջոց կիրառելու անհրաժեշտության և կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ դրա տեսակն ընտրելու հարցը լուծելիս հաշվի են առնվում՝ անձին վերագրվող արարքի բնույթը և

⁷⁶ ՀՀ վճռաբեկ դատարան, Ա. Ավետիսյանիվ վերաբերյալ գործով 2008թ. հոկտեմբերի 31-ի թիվ ԱՎԴ/0022/06/08 որոշում, կետեր 19-20:

վտանգավորության աստիճանը, կասկածյալի կամ մեղադրյալի անձը, տարիքն ու առողջական վիճակը, սեռը, զբաղմունքի տեսակը, ընտանեկան դրությունը և խնամարկյալների առկայությունը, գույքային դրությունը, բնակության մշտական վայրի առկայությունը, ինչպես նաև այլ էական հանգամանքներ:

Հետևաբար, քրեական վարույթն իրականացնող մարմնի՝ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդության քննարկման արդյունքներով դատարանը պետք է՝

Ա. արձանագրի հիմնավոր կասկածի առկայությունը կամ բացակայությունը,

Բ. այն դեպքում, երբ դատարանը կհանգի հետևության, որ վարույթն իրականացնող մարմնի ներկայացրած նյութերը բավարար են արձանագրելու, որ առկա է անձի կողմից հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկած, և միաժամանակ կալանավորման մյուս պայմանները նույնպես առկա են, ապա պետք է կայացնի հիմնավորված և պատճառաբանված որոշում այն մասին, թե արդյոք առկա են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված հիմքերից որևէ մեկը կամ մի քանիսը, որոնց առկայության վերաբերյալ դատարանի հետևությունը ևս պետք է հիմնավորված լինի վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացված համապատասխան տեղեկություններով, փաստերով կամ ապացույցներով⁷⁷:

Կալանավորման ժամկետի երկարացումը

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածում օգտագործվող «խափանման միջոցի կիրառում» հասկացությունը տարածվում է ինչպես կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, այնպես էլ կալանքի ժամկետը երկարացնելու նկատմամբ: Միննույն ժամանակ, ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը չի սահմանում կալանքի ժամկետը երկարացնելու հիմքերը կանոնակարգող հատուկ նորմ: Ուստի անձին կալանքի տակ պահելու ժամկետի երկարացումն անհրաժեշտ է հիմնավորել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված հիմքերով, ինչպես նաև անհրաժեշտ է հաշվի առնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 3-րդ մասում թվարկված հանգամանքները:

(...) մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետը կարող է երկարացվել հետևյալ երկու պայմանների միաժամանակյա առկայության դեպքում՝

Ա. շարունակվում են առկա լինել կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու հիմքերն ու պայմանները կամ ի հայտ են եկել անձին կալանքի տակ պահելու նոր հիմքեր,

Բ. գործի քննությունն իրականացնող մարմնի կողմից դրնստրվել է անհրաժեշտ ջանասիրություն՝ ապահովելու գործի քննության ընթացքը:

Վ. Բարսեղյանի վերաբերյալ գործով ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ նրան կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին որոշման մեջ Առաջին աստիճանի դատարանը ոչ միայն չի անդրադարձել կալանավորման պայմանների և հիմքերի առկայության

⁷⁷ ՀՀ վճռաբեկ դատարան, Վ. Գևորգյանի վերաբերյալ գործով 2011թ. փետրվարի 24-ի թիվ ԵԿԴ/0678/06/10 որոշում, կետ 22:

հարցին, այլև չի էլ վկայակոչել խափանման միջոց կիրառելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերից որևէ մեկը: Փոխարենը առաջին աստիճանի դատարանը Վ. Բարսեղյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու անհրաժեշտությունը պատճառաբանել է անհրաժեշտ քննչական գործողություններ կատարելու, փորձաքննության եզրակացությունն ու հետախուսահամարների վերծանումները ստանալու և նյութերը կողմերին ծանոթանալու համար տրամադրելու անհրաժեշտությամբ: Վերաքննիչ դատարանը, դատական ստուգման ենթարկելով առաջին աստիճանի դատարանի որոշման օրինականությունը և հիմնավորվախությունը, չի արձանագրել ստորադաս դատարանի թույլ տված խախտումները, այլ հանգել է հետևության, որ դատական ակտը վերացնելու հիմքեր չկան⁷⁸:

Կալանավորման դատական քննությունը

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին պարբերության համաձայն՝ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ միջնորդություն հարուցելու մասին որոշումը ենթակա է անհապաղ քննման նախաքննության կատարման վայրի դատարանում, դատավորի կողմից միանձնյա՝ միջնորդություն ներկայացրած անձի, մեղադրյալի, նրա օրինական ներկայացուցչի, պաշտպանի մասնակցությամբ, եթե նա մասնակցում է գործին: Ժամանակին ծանուցված ազատության մեջ գտնվող մեղադրյալի կամ պաշտպանի չներկայանալը չի խոչընդոտում միջնորդության քննմանը: Դատարանը պարտավոր է դատական նիստի տեղի և ժամանակի մասին պատշաճ ձևով ծանուցել միջնորդություն ներկայացրած անձին, մեղադրյալին, նրա օրինական ներկայացուցչին, պաշտպանին, եթե նա մասնակցում է գործին⁷⁹:

Ինչպես վերը նշվեց մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի միջնորդության դատական քննությունը պետք է ընթանա մրցակցային դատավարության կանոնների պահպանմամբ, ինչը ենթադրում է, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացված տեղեկություններին, տվյալներին և ապացույցներին պետք է ծանոթանա նաև պաշտպանության կողմը⁸⁰: Ավելին, ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վարույթն իրականացնող մարմնի ներկայացրած՝ անձին կալանավորելու վերաբերյալ տեղեկությունները, տվյալները և ապացույցները պետք է պատշաճ իրավական ընթացակարգի սահմաններում հետազոտվեն դատական քննության ընթացքում⁸¹:

Միաժամանակ, ՀՀ վճռաբեկ դատարանը Խ. Հեքիմյանի վերաբերյալ թիվ ԵԱՔԴ/0003/15/19 գործով որոշմամբ⁸² արձանագրել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդվածի

⁷⁸ ՀՀ վճռաբեկ դատարան, Վ. Բարսեղյանի վերաբերյալ գործով 2012թ. նոյեմբերի 1-ի թիվ ԼԴ/0078/06/12 որոշում, կետ 20:

⁷⁹ ՀՀ ՔԴՕ, 285-րդ հոդված, 2-րդ մաս:

⁸⁰ ՀՀ վճռաբեկ դատարան, Վ. Գևորգյանի վերաբերյալ գործով 2011թ. փետրվարի 24-ի թիվ ԵԿԴ/0678/06/10 որոշում, կետեր 20-21:

⁸¹ Նույն տեղում, կետ 23:

⁸² ՀՀ վճռաբեկ դատարան, Խ. Հեքիմյանի վերաբերյալ գործով 2009թ. օգոստոսի 21-ի թից ԵԱՔԴ/0003/15/09 որոշում,

2-րդ մասի 1-ին պարբերությունից բխում է, որ «տարվում է դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ, որն օրենքով լիազորված է իրականացնելու դատական իշխանություն» կոնվենցիոնալ պահանջը ՀՀ ներպետական իրավունքում արտացոլված է դատարանում կալանավորման միջնորդության քննարկմանը վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ գտնվող մեղադրյալի մասնակցությունն ապահովելու՝ այդ մարմնի պարտականության մեջ:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ կալանավորման հարցի քննարկմանը մեղադրյալի մասնակցությունն ազատությունից զրկելու օրինականության ապահովման հիմնական երաշխիքն է, որը չի կարող արհեստականորեն նեղացվել՝ ելնելով դատարանում անձի ներկայությունը ապահովելու դատավարական եղանակից:

Հետևաբար, վճռաբեկ դատարանն անդրադարձել է նաև հետախուզման մեջ գտնվող մեղադրյալի բացակայությամբ նրա նկատմամբ խափանման միջոցի ընտրության հարցին և արձանագրել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդվածի դրույթները չեն բխում անհապաղ դատավորի մոտ տարվելու պահանջից, այլ հնարավորություն են տալիս վարույթն իրականացնող մարմնին անձի նկատմամբ ազատությունից զրկելու հետ կապված խափանման միջոց ընտրել անձի բացակայության պայմաններում՝ առանց հնարավորություն ընձեռելու, որ հետախուզման արդյունքում հայտնաբերված անձը ներկայանա դատարան, և անձի կալանավորման հարցի քննարկումը տեղի ունենա իր ներկայությամբ: Հետևաբար, քրեադատավարական օրենսգրքում ամրագրված նման կարգավորումը կհակասի Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասին և կոպտորեն կխախտի անձի ազատության իրավունքը, եթե հետախուզման մեջ գտնվող անձի ի հայտ գալուց հետո նա անհապաղ դատարանի առջև չներկայացվի:

Հիմնվելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի զարգացրած կարգավորումների վրա՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ ներպետական օրենսդրության մակարդակում ազատության իրավունքի ապահովման անհրաժեշտ երաշխիք պետք է լինի հետախուզման մեջ գտնվող անձին հայտնաբերելուց հետո, արդեն նրա ներկայությամբ, նրա նկատմամբ ընտրված խափանման միջոցի հարցի կրկնակի քննարկումը նախաքննության կատարման վայրի դատարանում: Դա հնարավորություն կտա նվազեցնել կամայական կալանավորման դեպքերը, ինչպես նաև կապահովի Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի՝ ՀՀ համար միջազգային պարտավորություն հանդիսացող պահանջների կատարումը: Հետևաբար, հետախուզման մեջ գտնվող անձին հայտնաբերելուց հետո նա պետք է անհապաղ (72 ժամվա ընթացքում) տարվի դատավորի մոտ⁸³:

Գրավի կիրառումը

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ գրավը համարվում է կալանավորմանն այլընտրանքային խափանման միջոց և կիրառվում է միայն այն

⁸³ ՀՀ վճռաբեկ դատարան, Ս. Վահրադյանի վերաբերյալ գործով 2008թ. դեկտեմբերի 26-ի թիվ ԼԴ/0197/06/08 որոշում, կետեր 33-34:

դեպքում, երբ ստացվել է դատարանի որոշումը մեղադրյալին կալանավորելու մասին: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 137-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ կալանավորման մասին որոշում կայացնելու հետ միաժամանակ դատարանը լուծում է մեղադրյալին գրավով կալանքից ազատելու հնարավորության հարցը, և ճանաչելով նման ազատման հնարավորությունը՝ նշանակում է գրավի գումարը: Հետևաբար, գրավը որպես այլընտրանքային խափանման միջոց կարող է կիրառվել միայն այն ժամանակ, երբ հիմնավորված է մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը⁸⁴:

Միաժամանակ, վճռաբեկ դատարանը հաստատել է, որ մեղադրյալի նկատմամբ ընտրված կալանքը դրա այլընտրանքային խափանման միջոցով՝ գրավով փոխարինելիս դատարանը պետք է քննարկի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածում նշված՝ խափանման միջոց կիրառելու հիմքերի առկայության կամ բացակայության հարցը, իսկ դրանց առկայության մասին հետևության հանգելիս դատարանը պետք է իր հետևությունը հիմնավորի նաև գործի նյութերից բխող որոշակի փաստական տվյալներով:

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ մեղադրյալի նկատմամբ խափանման միջոց կիրառելու հարցը քննարկելիս առաջադրված մեղադրանքում անձի մեղավորության հարցը քննարկման առարկա դարձնելով՝ խափանման միջոցը ձեռք է բերում պատժիչ նպատակ: Մինչդեռ խափանման միջոցը իր կիրառման նպատակով տարբերվում է պատժից: Խափանման միջոցի կիրառման նպատակը քրեական գործի մինչդատական և դատական քննության ընթացքում կասկածյալի կամ մեղադրյալի պատշաճ վարքագիծը, ինչպես նաև դատավճռի կատարումն ապահովելն է: Մասնավորապես, կալանքի՝ որպես խափանման միջոցի, կիրառման վարույթը միտված չէ առաջադրված մեղադրանքի վերաբերյալ փաստական տվյալների հավաքմանը, ստուգմանն ու գնահատմանը: Այդ վարույթի նշանակությունն այն է, որ քննարկվի և լուծվի կալանավորված անձին հասարակությունից ժամանակավորապես մեկուսացնելու և հսկողության ներքո պահելու անհրաժեշտության հարցը՝ ելնելով գործի քննության շահերից: Այլ կերպ՝ կալանավորման նպատակն է՝ նախաքննության և դատական քննության բնականոն գործընթացի ապահովումը, քրեական գործի բնականոն քննությանը մեղադրյալի դիմակայության կանխումը, դատավարական գործընթացին մեղադրյալի մասնակցության ապահովումը, ոչ թե նրան պատժելը կատարած հանցանքի, քննության ընթացքում դրսևորած ոչ պատշաճ վարքագծի համար:

Խափանման միջոցի մասին որոշումն ընդունվում է, եթե գոյություն ունեն այդ որոշումը պարտադրող հանգամանքներ (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մաս), և եթե այդ հանգամանքները վերանում են, ապա քննիչը (դատարանը) մինչև գործն ըստ էության լուծելը պարտավոր է այդ որոշումը վերացնել: Ընդ որում, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածում թվարկված մեղադրյալի հավանական գործողությունների մասին հետևությունները, որոնք կարող են առաջ բերել անձի ազատության և անձնական

⁸⁴ ՀՀ վճռաբեկ դատարան, Ա. Երեմյանի (Գևորգյան) վերաբերյալ գործով թիվ ԵԿԴ/0513/06/10 որոշում, կետ 13:

անձեռնմխելիության հիմնական իրավունքի սահմանափակում, պետք է հիմնված լինեն գործի նյութերից բխող ողջամիտ ենթադրությունների վրա⁸⁵:

⁸⁵ ՀՀ վճռաբեկ դատարան, Ա.Ավետիսյանի վերաբերյալ գործով 2008թ. հոկտեմբերի 31-ի որոշում, կետ 20:

ԳԼՈՒԽ 2: ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

2.1. Հարուցված քրեական գործերի ուսումնասիրություն

Հետազոտության շրջանակներում ուսումնասիրվել են 2016թ. հուլիսի 17-31 Երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների ընթացքում 2016թ. հուլիսի 19-ին, հուլիսի 20-ին և հուլիսի 29-ին տեղի ունեցած հավաքների ընթացքում ենթադրյալ իրավախախտումներ կատարած անձանց նկատմամբ հարուցված քրեական գործերի շրջանակներում կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի և դատարանի որոշումները:

Նշված իրադարձությունների առնչությամբ վարույթն իրականացնող մարմինների կողմից հարուցվել են համապատասխանաբար հուլիսի 19-ի իրադարձության առնչությամբ թիվ 59104616, հուլիսի 20-ի առնչությամբ՝ թիվ 59104716, հուլիսի 29-ի իրադարձությունների առնչությամբ թիվ 69107116 քրեական գործերը, որոնց շրջանակներում դրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ և 225-րդ հոդվածներով:

Մասնավորապես, թիվ 59104616 քրեական գործի շրջանակներում որպես մեղադրյալ ներգրավված են եղել 10 անձինք, որոնց բոլորի նկատմամբ կիրառվել է կալանավորումը որպես խափանման միջոց: Թիվ 59104716 քրեական գործով որպես մեղադրյալ ներգրավված են եղել 13 անձինք, որոնց նկատմամբ ընտրվել է կալանավորում՝ որպես խափանման միջոց: Թիվ 69107116 քրեական գործի շրջանակում որպես մեղադրյալ ներգրավվել են 8 անձինք՝ զանգվածային անկարգություններ կազմակերպելու և դրանց մասնակցելու մեղադրանքով: Բոլորի նկատմամբ քննության սկզբնական շրջանում ընտրվել է կալանավորումը որպես խափանման միջոց:

Զեկույցի շրջանակներում ուսումնասիրվել են նաև 2016թ. հուլիսի 29-ին Սարի Թաղում խուլիգանության գործադրմամբ լրագրողների մասնագիտական գործունեությունը խոչընդոտելու առնչությամբ հարուցված թիվ 61205016 քրեական գործով 4 մեղադրյալների նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ որոշումները:

2016թ. հուլիսի 19-ին Սարի Թաղում տեղի ունեցած իրադարձություններ

2016թ. հուլիսի 19-ին Սարի Թաղում տեղի ունեցած իրադարձությունների առնչությամբ հարուցված թիվ 59104616 քրեական գործի շրջանակներում որպես մեղադրյալ ներգրավվել են 10 անձինք՝ ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 2-րդ մասով: Բոլոր մեղադրյալների նկատմամբ որպես խափանման միջոց ընտրվել է կալանավորումը:

Ըստ առաջադրված մեղադրանքի՝ «2016 թվականի հուլիսի 19-ին՝ ժամը 20:00-ի սահմաններում, Երևան քաղաքի Մ. Խորենացի փողոցին հարող Գլինկայի և Որմնադիրների փողոցների հատման վայրում մի խումբ անձինք առողջության համար վտանգավոր բռնություն են գործադրել իրենց ծառայողական պարտականությունները կատարող, իշխանության

ներկայացուցիչ համարվող ՀՀ ոստիկանության ՊՊԾ գնդի և Երևան քաղաքի վարչության Էրեբունի բաժնի մի շարք ծառայողների նկատմամբ:

Չենթարկվելով ՀՀ ոստիկանության վերը նշված աշխատակիցների՝ հասարակական կարգը պահպանելուն ուղղված օրինական պահանջներին, վտանգավոր բռնություն են գործադրել վերջիններիս նկատմամբ, այն է քարեր, այլ առարկաներ են նետել նրանց ուղղությամբ, որի արդյունքում մարմնական վնասվածքներ են պատճառել ՀՀ ոստիկանության ՊՊԾ գնդի ոստիկաններ Իշխան Ավագյանին, Դավիթ Սահակյանին և այլ աշխատակիցներին:

Այսպես, 2016 թվականի հուլիսի 17-ին զինված խմբի կողմից Երևան քաղաքի Մովսես Խորենացի փողոցի 158 հասցեում տեղակայված ՀՀ ոստիկանության պարեկապահակային ծառայության գնդի տարածքի գրավման կապակցությամբ քաղաքացիների անվտանգությունն ու հասարակական կարգի պահպանությունն ապահովելու նպատակով, 2016 թվականի հուլիսի 19-ին ժամը 20:00-ի սահմաններում ՀՀ ոստիկանության մի շարք ծառայողներ ծառայություն են իրականացրել Երևան քաղաքի Մովսես Խորենացի փողոցին հարող Գլինկա և Որմնադիրներ փողոցների հատման վայրում: Այդ ընթացքում նրանց մոտեցել են [...] մի խումբ այլ անձինք, դժգոհություն են հայտնել ոստիկանության ծառայողներին իրենց ծառայողական պարտականությունները կատարելու հետ կապված ու ներկայացրել անհիմն պահանջներ, ապա չենթարկվելով ՀՀ ոստիկանության ծառայողների՝ հասարակական կարգը պահպանելուն ուղղված օրինական պահանջներին, հանցավոր միասնական դիտավորությամբ, մեկը մյուսի գործողությունները լրացնելով, ձեռքերով և ոտքերով հարվածներ հասցնելով, քարեր և այլ առարկաներ նետելով, առողջության համար վտանգավոր բռնություն են գործադրել և մարմնական վնասվածքներ պատճառել իշխանության ներկայացուցիչ համարվող ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Էրեբունու բաժնի ծառայողներին»:

Անհատականացված մեղադրանք

Իրականացված ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ առաջադրված մեղադրանքը ոչ բոլոր դեպքերում է և անհատականացված: Այսպես, տասը մեղադրյալներից յոթի առնչությամբ առաջին անգամ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի միջնորդությունը, ինչպես նաև դատարանների համապատասխան որոշումները չեն անհատականացնում նրանց վերագրվող հանցագործությունները: Մեղադրանքը ձևակերպվել է ընդհանրական՝ առանց մատնացույց անելու անձի կոնկրետ գործողություններ, և դրա հետևանքը:

Չենթարկվելով ՀՀ ոստիկանության ծառայողների՝ հասարակական կարգը պահպանելուն ուղղված օրինական պահանջներին, հանցավոր միասնական դիտավորությամբ, մեկը մյուսի գործողությունները լրացնելով, ձեռքերով և ոտքերով հարվածներ հասցնելով, քարեր և այլ առարկաներ նետելով առողջության համար վտանգավոր բռնություն են գործադրել իշխանության ներկայացուցիչ հանդիսացող ՀՀ ոստիկանության... [ծառայակիցների նկատմամբ]:»:

Միայն երեք մեղադրյալների առնչությամբ կալանավորումը որպես խափանման միջոց առաջին անգամ կիրառելու վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի միջնորդությունը, ինչպես նաև դատարանի համապատասխան որոշումը պարունակում են անձի կողմից կատարված ենթադրյալ հանցավոր արարքի մասին կոնկրետ տեղեկություն: Նրանցից երկու անձանց առաջադրված մեղադրանքը պարունակել է ոստիկանության ծառայողների ուղղությամբ քարեր նետելը, իսկ մյուս դեպքում՝ ոստիկանների ուղղությամբ քարեր և այլ առարկաներ նետելը:

2016թ. հուլիսի 19-ին Սարի Թաղում տեղի ունեցած իրադարձություններում մեղադրվող 10 անձանցից 4-ի նկատմամբ հայտարարվել է հետախուզում: Բոլոր 4 դեպքերում մեղադրյալի բացակայությամբ տեղի ունեցած դատական քննության արդյունքում կալանավորումը որպես խափանման միջոց կիրառվելու միջնորդությունը բավարարվել է: Բոլոր մեղադրյալներին հայտնաբերելուց հետո կալանավորումը որպես խափանման միջոց վերահաստատվել է:

Կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնելու մասին վարույթն իրականացնող մարմնի որոշումները

Բոլոր 10 մեղադրյալների նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնելու մասին վարույթն իրականացնող մարմնի որոշումը կայացվել է նույն քննիչի կողմից, բոլոր որոշումները նույնական են և ներկայացնում են կալանավորման նույն հիմքերը:

Այսպես, բոլոր մեղադրյալների նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդության մեջ վարույթն իրականացնող մարմնի կողմից որպես կալանավորման հիմք նշվել է հետևյալը՝ «...[անձի] նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդություն հարուցելիս քրեական հետապնդում իրականացնող մարմինը հաշվի է առնում վերջինիս մեղսագրվող հանցագործության բնույթը և վտանգավորության աստիճանը՝ հատկապես այն, որ նա մեղադրվում է ծանր հանցագործության կատարման մեջ, որի համար նախատեսվում է պատիժ բացառապես ազատազրկման ձևով՝ ընդհուպ մինչև 10 տարի ժամկետով, որը բարձրացնում է հավանականությունը, որ վերջինս ազատության մեջ մնալու դեպքում կարող է թաքնվել վարույթն իրականացնող մարմնից, խոչընդոտել մինչդատական վարույթում կամ հետագայում դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու ճանապարհով: Մեղադրյալի կողմից ազատության մեջ գտնվելու դեպքում նշված եղանակներով ոչ իրավաչափ վարքագիծ դրսևորելու հավանականությունը մեծացնում է նաև հատկապես այն, որ քրեական գործում առկա փաստական տվյալների համաձայն՝ վերջինս իրեն մեղսագրվող հանցագործությունը կատարել է այլ անձանց հանցակցությամբ, որոնց ինքնության պարզման և հայտնաբերման ուղղությամբ դեռևս իրականացվում են քննչական գործողություններ»: Այս հանգամանքն առավել ընդգծվում է այն որոշումներում, երբ ենթադրյալ բոլոր այլ հանցակիցներն արդեն հայտնի են, բայց վերստին օգտագործվում է նույն հիմքը:

Վարույթն իրականացնող մարմինը որպես կալանավորման հիմք հիմնականում թվարկել է օրենքով նախատեսված հիմքերը, առանց այդ հիմքերի և անձի հնարավոր գործողությունների միջև տրամաբանական, հավանական կապի հիմնավորման, պատճառաբանության:

2016 թվականի դեկտեմբերի 14-ին, ըստ էության, տվյալ քրեական գործով ներգրավվածվերջին մեղադրյալ Ս.Գ.-ի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդության հիմքում, երբ հայտնի էին ենթադրյալ բոլոր հանցակիցները:

Որպես հանցագործության կատարված լինելու ողջամիտ կասկած՝ ներկայացվել են տուժողների (այսինքն՝ ՀՀ ոստիկանության ծառայողներ), վկայի ցուցմունք (երեք մեղադրյալի դեպքում), դատաբժշկական փորձաքննությունների եզրակացություններ, դեպքի վայրի զննության արձանագրություն, տեսագրությունը զննելու մասին արձանագրություններ և այլ տվյալներ: Չորս մեղադրյալի դեպքում ողջամիտ կասկածի հաստատման հիմքում դրվել է նաև իրենց ցուցմունքը:

2016թ. հուլիսի 20-ին Խորենացի-Քրիստափորի խաչմերուկի իրադարձություններ

2016թ. հուլիսի 20-ին Խորենացի-Քրիստափոր փողոցների խաչմերուկում տեղի ունեցած զանգվածային անկարգությունների առնչությամբ հարուցված թիվ 59104716 քրեական գործի շրջանակներում 13 անձանց մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով այն բանի համար, որ «2016թ. հուլիսի 17-ին կազմակերպված զինված խմբի անդամները պետությանը որոշակի գործողություններ կատարելուն պարտադրելու նպատակով զինված հարձակում են գործել ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության պարեկապահակային ծառայության գնդի վրա՝ զավթելով և պահելով այն: Նույն պահից սկսած՝ հիշյալ և հարակից տարածքներում իրավապահ մարմինները օրենքով սահմանված կարգով կազմակերպել և իրականացրել են հանցագործության բացահայտմանը, կանխմանը, ինչպես նաև պետության շահերի և քաղաքացիների անվտանգության ապահովմանն ուղղված հատուկ միջոցառումներ: Նկարագրված միջոցառումների շրջանակներում ՀՀ ոստիկանության տարբեր ստորաբաժանումների ծառայողներ ժամանակավորապես սահմանափակել են տրանսպորտային միջոցների և քաղաքացիների երթևեկությունը Երևան քաղաքի Մովսես Խորենացու և Քրիստափորի փողոցների խաչմերուկից:

2016թ. հուլիսի 20-ին՝ ժամը 22:30-ի սահմաններում նշված վայրում հավաքվել են բազմաթիվ անձինք, ովքեր փորձել են ներթափանցել հատուկ միջոցառումների իրականացման գոտի: Հիշյալ վայրում ծառայություն իրականացնող ոստիկանության աշխատակիցները հավաքվածներին բազմիցս նախազգուշացրել են իրականացվող միջոցառումների և այդ վայր քաղաքացիների մուտքն արգելված լինելու մասին:

Չնայած դրան՝ մի խումբ անձանց հրահրմամբ սկսվել են զանգվածային անկարգություններ, որի ընթացքում դրա մասնակիցները չեն ենթարկվել նշված վայրում ծառայություն իրականացնող ոստիկանության աշխատակիցների օրինական պահանջներին, այլ վտանգելով հասարակական անվտանգությունը՝ բռնություն են գործադրել ՀՀ ոստիկանության աշխատակիցների նկատմամբ՝ ոտքերով, ձեռքերով, տարատեսակ առարկաներով հարվածներ են հասցրել, քարեր և այլ առարկաներ են նետել նրանց ուղղությամբ, ինչի հետևանքով նշված վայրում ծառայություն իրականացնող ոստիկանության աշխատակիցները ստացել են տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ, վնասվել և ոչնչացվել է վերջիններիս և իրավաբանական անձանց գույքը»:

Հետագոտված որոշումներով ոստիկանության աշխատակիցների նկատմամբ գործադրված բռնությունը դրսևորվել է հետևյալում.

- վեց անձի (6 անձի) մեղադրանք է առաջադրվել ոստիկանության աշխատակիցների վրա քարեր նետելու համար,
- երկու անձի (2 անձի) շշեր և այլ առարկաներ նետելու համար,
- երեք անձի (3 անձի) ոստիկանության ներկայացուցիչներին հարվածներ հասցնելու համար, ընդ որում՝ մի դեպքում ոտքերով և ձեռքերով, մյուս դեպքերում՝ միայն ոտքերով կամ ձեռքերով,
- մեկ անձի (1 անձի) ոստիկանական վահանը քաշելու համար,
- մեկ անձի (1 անձի) մեղադրանք է ներկայացվել ոստիկանական վահանը քաշելու և ոստիկանին հարվածներ հասցնելու համար:

Կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնելու մասին վարույթն իրականացնող մարմնի որոշումները

Մեղադրյալների նկատմամբ կալանավորումը՝ որպես խափանման միջոց կիրառելու մասին միջնորդությունը կայացվել է վարույթն իրականացնող նույն մարմնի (քննիչի) կողմից:

Բոլոր որոշումները հիմնավորվել են նույն կերպ: Մասնավորապես, քննիչի որոշումները պարունակում են հետևյալ բովանդակությունը՝ «նկատի ունենալով, որ [անձի անուն ազգանուն]-ին մեղսագրվող հանցավոր արարքի բնույթն ու վտանգավորության աստիճանը բարձրացնում են հավանական ռիսկերն առ այն, որ ազատության մեջ մնալու պայմաններում կարող է թաքնվել վարույթն իրականացնող մարմնից, խոչընդոտել գործի քննությանը՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալու կամ այլ ճանապարհով, կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք, այսինքն՝ առկա են մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց կալանավորում կիրառելու պայմաններն ու հիմքերը, ինչպես նաև այն, որ մեղադրյալին մեղսագրվող արարքի համար որպես պատիժ նախատեսված է ազատագրվում՝ մեկ տարուց ավելի ժամանակով...»:

Միաժամանակ, 2016թ. հուլիսի 20-ի իրադարձություններին վերաբերող գործերով վարույթն իրականացնող մարմնի որոշումներում բացակայում են մեղադրյալների կողմից հանցագործությունը կատարած լինելու ողջամիտ կասկածի հիմնավորումները:

2016թ. հուլիսի 29-ին Սարի Թաղում տեղի ունեցած դեպքեր

2016 թվականի հուլիսի 29-ին Սարի Թաղում տեղի ունեցած դեպքերի առթիվ հարուցվել է 69107116 քրեական գործը, որի շրջանակներում որպես մեղադրյալ ներգրավվել են 8 անձինք: Ըստ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդություն հարուցելու մասին որոշումների՝ մեղադրանքի էությունը, ըստ վարույթն իրականացնող մարմնի, կայանում է հետևյալում՝ «[...]Անդրիաս Ղուկասյանը, Արմեն Մարտիրոսյանը և Դավիթ Սանասարյանը ստեղծված իրավիճակն ավելի սրելու և Երևան քաղաքում զանգվածային անկարգությունների հրահրելու նպատակով 2016թ. հուլիսի 29-ին՝ ժամը 19:30-ից Ազատության հրապարակում մեկնարկած զանգվածային միջոցառման ընթացքում, հաստատապես տեղյակ լինելով ՊՊԾ գնդին հարակից տարածքներում երթևեկության և հետիոտների ազատ տեղաշարժը սահմանափակված լինելու և իրականացվող հատուկ միջոցառումների մասին, կոչերով, հորդորներով դրդել են հավաքվածներին գնալ դեպի Խորենացի փողոց և անմիջականորեն ստանձնել են երթի ղեկավարումը:

Հանցավոր մտադրությունն իրագործելու նպատակով Անդրիաս Ղուկասյանը, Արմեն Մարտիրոսյանն ու Դավիթ Սանասարյանը զանգվածային միջոցառման մասնակիցների հետ հասնելով Նար-Դոսի փողոց, հանկարծակի երթի ուղղությունը շեղել են դեպի Սարի Թաղ թաղամաս՝ կոչ անելով հավաքվածներին գնալ ՊՊԾ գնդի ուղղությամբ:

Զանգվածային միջոցառման մասնակիցները Անդրիաս Ղուկասյանի, Արմեն Մարտիրոսյանի և Դավիթ Սանասարյանի ղեկավարմամբ, բռնություն գործադրելով՝ քաջջելով և հրելով, ճեղքել են Սարի Թաղի թաղամաս տանող ճանապարհը արգելակած՝ ոստիկանության ծառայողներից կազմված շղթան, շարժվել են առաջ և տեղակայվել Սարի Թաղ թաղամասի՝ ՊՊԾ գնդից առավել պարզ տեսանելի բարձունքում: [...] Արդյունքում, Անդրիաս Ղուկասյանի, Արմեն Մարտիրոսյանի, Դավիթ Սանասարյանի կազմակերպմամբ ու ղեկավարմամբ սկսվել են զանգվածային անկարգություններ, որի ընթացքում դրա անմիջական մասնակիցները, չենթարկվելով նշված վայրում ծառայություն իրականացնող իշխանության ներկայացուցիչների օրինական պահանջներին, վտանգելով հասարակական անվտանգությունը՝ բռնություն են գործադրել ՀՀ ոստիկանության աշխատակիցների նկատմամբ՝ ոտքերով, ձեռքերով, տարատեսակ առարկաներով հարվածներ են հասցրել, քարեր և առարկաներ են նետել նրանց ուղղությամբ, ինչի հետևանքով ծառայություն իրականացնող ոստիկանության աշխատակիցները ստացել են տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ, վնասվել և ոչնչացվել է վերջիններիս գույքը»:

Կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնելու մասին վարույթն իրականացնող մարմնի որոշումները

Այս խումբ գործերով որպես մեղադրյալ ներգրավված 5 անձանց մեղադրանք է առաջադրվել առ այն, որ «նկարագրված զանգվածային անկարգությունների ժամանակ դրա անմիջական մասնակից [...] բռնություն է գործադրել՝ քարեր նետել իրենց ծառայողական

պարտականությունները կատարող, իշխանության ներկայացուցիչ հանդիսացող ոստիկանության աշխատակիցների վրա»:

Նրանցից մեկի դեպքում՝ որպես զանգվածային անկարգությանը մասնակցություն վարույթն իրականացնող մարմնի կողմից դիտարկվել է մեղադրյալի կողմից ոստիկանության **աշխատակիցներին ենթադրաբար մեքենայով վրաերթ անելը** և նրանց առողջությանը դիտավորությամբ տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ պատճառելը:

Երեք անձանց մեղադրանք է առաջադրվել զանգվածային անկարգություններ կազմակերպելու համար՝ ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասով:

Այս խումբ գործերով վարույթն իրականացնող մարմնի կողմից կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին միջնորդություն հարուցելու որոշմամբ անդրադարձ չի կատարվել մեղադրյալների կողմից հանցագործությունը կատարած լինելու ողջամիտ կասկածը հաստատող ապացույցներին:

Կալանավորման հիմքերը բոլոր ութ մեղադրյալների նկատմամբ կրկնվող և նույնական են: Մասնավորապես, քննիչի որոշմամբ նշվել է, որ «նկատի ունենալով, որ [...] մեղսագրվող հանցավոր արարքի բնույթն ու վտանգավորության աստիճանը բարձրացնում են հավանական ռիսկերն առ այն, որ ազատության մեջ մնալու պայմաններում կարող է թաքնվել վարույթն իրականացնող մարմնից, խոչընդոտել գործի քննությանը՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալու կամ այլ ճանապարհով, կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք, այսինքն՝ առկա են մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց կալանավորում կիրառելու պայմաններն ու հիմքերը, ինչպես նաև այն, որ [...] -ին մեղսագրվող արարքի համար որպես պատիժ նախատեսված է ազատագրելում՝ մեկ տարուց ավելի ժամանակով...»:

Ուսումնասիրության շրջանակներում հետազոտվել են նաև Հատուկ քննչական ծառայության վարույթում հարուցված բռնությամբ զուգորդված խուլիգանություն կատարելու և լրագրողի մասնագիտական գործունեությունը խոչընդոտելու մեջ մեղադրվող անձանց նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու առնչությամբ որոշումները: Թիվ 61205016 քրեական գործով ներգրավված բոլոր չորս մեղադրյալները ընդունել են իրենց մեղքը, և բոլորի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանավորումը:

Տվյալ քրեական գործի շրջանակներում մեղադրյալների նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին վարույթն իրականացնող մարմնի միջնորդությունները նույնպես եղել են նույնական:

«նկատի ունենալով, որ մեղադրյալ [...] վերագրվող հանրորեն վտանգավոր արարքների համար նախատեսված է պատիժ ազատագրկման ձևով՝ մինչև 5 տարի ժամանակով, բացի այդ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ քննության ընթացքում դեռևս չեն պարզվել և հարցաքննվել դեպքին ակնատես մյուս վկաները, իսկ արդեն հարցաքննված վկաներն ու մեղադրյալները նրա ընկերներն են, ուստի բարձր է հավանականությունը, որ մնալով ազատության մեջ նա կարող է խոչընդոտել մինչդասական վարույթում գործի քննությանը, ինչպես վերջիններիս, այնպես էլ դեռևս չհարցաքննված մի շարք անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու ճանապարհով, խուսափել քրեական պատասխանատվությունից ու պատժից:

Միաժամանակ, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետ «գ» ենթակետի համաձայն. «անձին ազատությունից զրկելու համար անհրաժեշտ է հիմնավոր կասկած առ այն, որ նա իրավախախտում է կատարել, այդ դեպքում ազատությունից զրկումը համարվում է օրինական և հիմնավորված», իսկ նախաքննության այս փուլում ձեռք բերված ապացույցներով առկա է հիմնավորված կասկած մեղադրյալի կողմից վերը նկարագրված հանրորեն վտանգավոր արարքները կատարելու կապակցությամբ»:

2.2. Ընդհանուր տեղեկություններ մեղադրյալների վերաբերյալ

Ընդհանուր առմամբ հետազոտության շրջանակներում ուսումնասիրվել են 2016թ. հուլիսյան դեպքերով հարուցված քրեական գործերով ներգրավված 34 մեղադրյալների առնչությամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին միջնորդություն հարուցելու մասին վարույթն իրականացնող մարմնի որոշումներ և կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ դատարանների համապատասխան որոշումները:

Ուսումնասիրված գործերով անցնող մեղադրյալների միջին տարիքը կազմում է 33 տարեկան: Ամենաերիտասարդ մեղադրյալը եղել է 1997թ., իսկ ամենատարեցները 1973թ. ծնված անձինք: Մասնավորապես, մեղադրյալներն առանձնացվել են հետևյալ տարիքային խմբերում 18-30՝ 19 մեղադրյալներ, իսկ 31 և ավելի՝ 15 մեղադրյալներ:

Մեղադրյալներից 12-ն ունեն բարձրագույն կրթություն, 13-ը միջնակարգ կրթություն, 6-ն ութամյա կրթություն, 3 մեղադրյալների դեպքում՝ կրթությունն արձանագրված չի եղել:

Մեղադրյալներից 7-ը կալանավորման պահին աշխատել են, 20 մեղադրյալները աշխատանք չեն ունեցել, մյուսների դեպքում աշխատանքի փաստն արձանագրված չէ ինչպես վարույթն իրականացնող մարմնի, այնպես էլ դատարանի համապատասխան որոշումներում:

Ուսումնասիրման ենթարկված որոշումներում բոլոր մեղադրյալները տղամարդիկ են: Նրանցից 13 եղել են ամուսնացած, 17՝ ոչ, մյուս 4 անձանց ընտանեկան դրության վերաբերյալ տեղեկությունները բացակայում են: Մեղադրյալներից միայն 3-ն են ունեցել դատվածություն:

Կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու բոլոր որոշումները կայացվել են Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կողմից: Առաջին անգամ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին որոշումները կայացվել են հետևյալ դատավորների նախագահությամբ՝

Դատավոր	Որոշումների քանակը
Հ. Շահնազարյան	6
Ա. Նիկողոսյան	6
Ա. Ստեփանյան	5
Զ. Նախշբարյան	4
Ա. Մկրտչյան	4
Ա. Մաթևոսյան	3
Մ. Մելքոնյան	3

Ռ. Բունիաթյան	1
Դ. Գրիգորյան	1
Ս. Թադևոսյան	1

Ուսումնասիրված գործերով ներգրավված անձանց մեղադրանք է առաջադրված եղել ՀՀ քրեական օրենսգրքի հետևյալ հոդվածներով՝

Քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածը	Մեղադրյալների թիվը	Պաշտպանի մասնակցություն
225-րդ հոդված 1-ին մաս	2	2
225-րդ հոդված 2-րդ մաս	18	14
316-րդ հոդվածի 2-րդ մաս	10	5
164-րդ հոդված 1-ին մաս	4	0
258-րդ հոդված 3-րդ մաս 1-ին կետ		

Կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու առնչությամբ դատական քննության ընթացքում մեղսագրվող հանցագործության մեջ իրեն մեղավոր են ճանաչել 10 մեղադրյալներ, 2 անձ՝ մասնակի, 18-ը իրենց մեղավոր չեն ճանաչել, 4-ը հրաժարվել են պատասխանել այդ հարցին:

Կալանավորումը՝ որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ առաջին դատական նիստի ընթացքում 21 մեղադրյալներ ունեցել են պաշտպան: Մեղադրյալներից 4-ը գտնվել են հետախուզման մեջ:

Մինչև կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի կողմից միջնորդություն ներկայացնելը մեղադրյալներից բոլորը եղել են ձեռքազրկված: Ըստ ուսումնասիրված դատական ակտերի՝ մեկ անձի դեպքում արգելանքի վերցնելու ժամկետի առնչությամբ արձանագրվել է անհստակություն, որպիսի պայմաններում մեղադրյալը դատական նիստերի դահլիճում ազատվել է արգելանքից և կալանավորումը՝ որպես խափանման միջոց կիրառելու դատական քննության ընթացքում անազատության մեջ չի գտնվել:

2.3. Ուսումնասիրված դատական ակտերում հանցագործություն կատարած լինելու ողջամիտ կասկածի հիմնավորումները

Ուսումնասիրված դատական ակտերում մեղադրյալի կողմից հանցագործություն կատարած լինելու ողջամիտ կասկածի հիմնավորումը ներկայացվել է տարբեր կերպ: Չնայած որոշումներում մեջբերվում են ինչպես ՀՀ վճռաբեկ դատարանի, այնպես էլ ՄԻԵԴ որոշումները, այդուամենայնիվ, դատարանների կողմից չեն արտացոլվում դրանց պահանջները, և դրանք վճռորոշ հատկանիշ չեն հանդիսանում փաստերի իրավական գնահատման համար:

Մասնավորապես, ուսումնասիրված դատական ակտերում արձանագրվել են հետևյալ ընդհանուր խնդիրները.

1. Չեն նշվում այն փաստական տվյալները, որոնք կհիմնավորեն մեղադրյալի առնչությունը կոնկրետ հանցագործությանը:

Ուսումնասիրված դատական ակտերից 21-ում դատարանները մեղադրյալի կողմից հանցագործությունը կատարված լինելու ողջամիտ կասկածը հիմնավորում են միայն վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացված նյութերի վերացական թվարկմամբ: Օրինակ,

«ներկայացված նյութերում առկա է ողջամիտ կասկած, որ [...] առնչություն ունի իրեն վերագրվող ենթադրյալ ծանր հանցագործության վերոհիշյալ դեպքին: Հիմնավոր կասկածը բխում է դեպքի վայրի, առարկաների զննության, ինտերնետային լրատվական կայքերում տեղադրված զանգվածային անկարգությունների տեսագրությունների զննում կատարելու մասին արձանագրություններից»:

թիվ ԵԱՔԴ/0510/06/16 գործով դատարանի որոշում

Մեկ այլ օրինակում,

«Մեղադրյալ [...] առնչությունը իրեն մեղսագրվող հանցագործության կատարմանը հիմնավորված է իր իսկ ցուցմունքներով, տուժողների ցուցմունքներով, դեպքի վայրի զննության արձանագրությամբ, տեսագրությունը զննելու մասին արձանագրությամբ և այլ փաստական տվյալներով»:

թիվ ԵԱՔԴ/0526/06/16 գործով դատարանի որոշում

Ուսումնասիրված որոշումներում որպես ողջամիտ կասկածը հիմնավորող ապացույցներ դատարանների կողմից նշվել են հետևյալները՝

Ապացույցի տեսակ	Որոշումների քանակ
Վկայի ցուցմունք	8
Տուժողի ցուցմունք	14

Անձի՝ կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակով անձի տրված ցուցմունք	20
Առերես հարցաքննություն	3
Առարկաների զննության արձանագրություն	8
Դեպքի վայրի զննության արձանագրություն	11
Տրանսպորտային միջոցների զննության արձանագրություն	7
Տեսանյութի զննության արձանագրություն	14
Ձերբակալման արձանագրություն	6
Բերման ենթարկելու վերաբերյալ արձանագրություն	1
Այլ նյութեր և տեղեկություններ	5

Նման որոշումներում դատարանների կողմից չի արձանագրվել, թե ներկայացված նյութերում կոնկրետ ինչ տվյալներ, տեղեկություններ են հիմնավորում կոնկրետ անձի առնչությունը իրեն մեղսագրվող հանցագործությանը: Ավելին, դատարանի կողմից մատնանշված չէ, թե կոնկրետ որ հանգամանքների հիման վրա է հանգում եզրակացության, որ քննարկվող դեպքը համընկնում է անձին մեղսագրվող հանցագործության դեպքին: Այդպիսով, անհասկանալի է, թե վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացված նյութերում, մասնավորապես՝ դեպքի վայրի զննության, առարկաների զննության, ինտերնետային լրատվական կայքերում տեղադրված նյութերի զննում կատարելու արձանագրություններում ի՞նչ տեղեկություններ և տվյալներ են առկա, որոնք վերաբերելի են կոնկրետ մեղադրյալին և հիմնավորում են նրա կողմից կոնկրետ հանցագործության կատարման ողջամիտ կասկածի առկայությունը:

Նման դեպքերում, մեղադրյալի կողմից հանցագործություն կատարած լինելու ողջամիտ կասկածը հիմնավորված համարվել չի կարող:

Ուսումնասիրված 3 դատական ակտերում դատարանը բավարարվել է միայն վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացված նյութերին հղելով՝ առանց մասնավորեցնելու դրանք: Օրինակ,

«Ներկայացված նյութերում առկա է հիմնավոր կասկած, որ մեղադրյալ [...] առնչություն ունի մեղսագրվող արարքին»:

թիվ ԵԱՔԴ/0979/06/16 գործով որոշում

Ուսումնասիրված դատական ակտերից միայն 9-ն են պարունակում վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացված նյութերից մեջբերումներ, մասնավորապես՝ ցուցմունքներից:

Օրինակ, թիվ ԵԱՔԴ/0523/06/16 որոշմամբ դատարանի կողմից մեջբերվել են վկաների ցուցմունքներից, մեղադրյալի ցուցմունքից հատվածներ:

«(...) Քարեր և այլ առարկաներ նետող անձանց մեջ տեսա [նշում է մեղադրյալի անունը]/(հավելումն իմն է), նա քարը ձեռքին էր պահել և քայլում էր Խորենացի փողոցի ձախ մասով: Որոշ ժամանակ [նշում է մեղադրյալի անունը] այդ քարը պահում էր ձեռքին, քայլում էր առաջ դեպի ոստիկանների կողմից կազմված պատնեշի կողմը, որից հետո ևս մի քանի մետր արագ քայլելով առաջ գնալով ձեռքի քարը նետեց ոստիկանության աշխատակիցների վրա, ապա կրկին հետ գնաց»:

Թիվ ԵԱՔԴ/0523/06/16 գործով դատարանի որոշում

Ուսումնասիրված դատական ակտերում արձանագրվել են 3 դեպքեր, ըստ որոնց հանցագործության կատարման ողջամիտ կասկածը հիմնավորվել է բացառապես մեղադրյալի ցուցմունքով:

Թիվ ԵԱՔԴ/0519/06/16 գործով դատարանի երկու էջանոց որոշումը հղում է միայն առանց պաշտպանի մասնակցության մեղադրյալի կողմից մեղքի ընդունմանը: Որևէ այլ տեղեկություն կամ տվյալ դատարանի կողմից չի մատնանշվել որպես հանցագործությունը կատարած լինելու ողջամիտ կասկածի հիմնավորում:

Նույն կերպ, թիվ ԵԱՔԴ/0518/06/16 գործով որոշմամբ դատարանն արձանագրել է, որ «դատավարության տվյալ փուլում արձանագրված փաստական տվյալները և տեղեկությունները ողջամտորեն բավարար են հիմնավորված համարելու [...] առնչությունն իրեն ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով մեղսագրվող ենթադրյալ հանցագործությանը, որը դասվում է դիտավորությամբ կատարված ծանր հանցագործությունների շարքին, ինչի համար նախատեսված է միայն ազատազրկման ձևով պատիժ մինչև ութ տարի ժամկետով: [...] վկայակոչված ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումների, մարդու իրավունքների եվրոպական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների և քննիչի կողմից ներկայացված [...] կալանքի տակ պահելու վերաբերյալ միջնորդության նյութերի համադրված ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ առկա է հիմնավոր կասկածն առ այն, որ մեղադրյալն առնչվում է կատարված դեպքերին, քրեական գործի մեղադրանքին, փաստական հանգամանքներին, մեղսագրվող հանցագործությանը»: Դատարանը որպես մեղադրյալի կողմից հանցագործությունը կատարված լինելու ողջամիտ կասկածի հիմք մատնանշել է բացառապես նրա տրված ցուցմունքը, ինչը խնդրահարույց է՝ հաշվի առնելով, որ մեղադրյալը պաշտպան չի ունեցել:

2. Դատարանների կողմից չի իրականացվում ներկայացված նյութերի, փաստերի և տվյալների հետազոտություն

Ինչպես վերը նշվեց, անձի կողմից հանցագործություն կատարած լինելու ողջամիտ կասկածը պետք է հիմնված լինի օրենքով սահմանված կարգով ձեռք բերված փաստական տվյալների, տեղեկությունների և ապացույցների վրա, որոնք պետք է պատշաճ իրավական ընթացակարգի սահմաններում հետազոտվեն դատական քննության ընթացքում:

Մինչդեռ, ուսումնասիրված դատական ակտերում արձանագրվել է, որ դատարանների կողմից չի իրականացվում վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացված ապացույցների հետազոտություն և գնահատում: Ավելին, դատարանները չեն գնահատում նաև ներկայացված ապացույցի թույլատրելիությունը և արժանահավատությունը, ինչը անձի ազատության իրավունքի սահմանափակման իրավաչափության տեսանկյունից խնդրահարույց է:

Մասնավորապես, դատարաններն արձանագրում են, որ «դատավարության այս փուլում Դատարանն իրավասու չէ հետազոտել և գնահատել ապացույցները, ապացույցների միջոցով հաստատվող տեղեկությունների ապացուցողական նշանակության չափորոշիչներն այս դեպքում շատ ավելի նվազ են, այդ իսկ պատճառով միջնորդությամբ և կից նյութերով պետք է հաստատվի ոչ թե մեղադրյալի մեղավորությունը, այլ պետք է հաստատվի հիմնավոր կասկածը, ինչն էլ քննարկվող դեպքում առկա է»:

«Քանի որ քննության այս փուլում Դատարանն ապացույց չի հետազոտում և գնահատում, ապա մեղադրյալի՝ գննության արձանագրության մեջ նկարագրված գործողությունները Դատարանն ընդունում է՝ որպես հիմնավոր կասկածը հիմնավորող բավարար փաստ կամ փաստական տեղեկություն (տվյալ): Դատարանն արձանագրում է, որ ողջամիտ կասկածի առկայությունը հաստատված համարվելու պարագայում մնացած բոլոր հանգամանքները կարող են ճշտվել նախաքննության ընթացքում, սակայն միջնորդության քննության այս փուլում Դատարանը հիմնվում է միջնորդությանը կից ներկայացրած ու միջնորդության քննության ընթացքում պարզված տեղեկությունների վրա: Միաժամանակ, դատարանն արձանագրում է, որ ապացույցներ հետազոտելու և գնահատելու լիազորություն դատարանը չունի, ուստի իրավասու չէ ապացույցների **թույլատրելիության** հարց բարձրացնել, իսկ բարձրացնելու դեպքում՝ դա վճռորոշ չի կարող համարվել, քանի որ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու միջնորդության քննության ժամանակ Դատարանը հիմնվում է ոչ միայն քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված «ապացույց» եզրույթի վրա, այլ հիմնավոր կասկածը կարող է հաստատվել փաստերով, տեղեկություններով՝ անկախ դրա ապացույց լինելու տեսակից: Վերը նշված տեղեկությունները համադրելով միջնորդությանը կից Քննիչի կողմից ներկայացված նյութերում առկա տեղեկությունների հետ, իհարկե դրանք չգնահատելով, Դատարանը եկել է այն համոզման, որ մեղադրանքի հիմքում դրված հանցագործության հետ մեղադրյալի առնչակցվելու կապակցությամբ ներկայացվել են բավարար փաստեր, տեղեկություններ կամ ապացույցներ, սակայն ելնելով անմեղության կանխավարկածի պահպանման սկզբունքից՝ Դատարանը գտնում է, որ ներկայացված նյութերն ամեն դեպքում բավարար են, իսկ մեղադրյալի ներկայացրած փաստարկները չեն կարող հերքել վարույթն իրականացնող մարմնի կողմից միջնորդության մեջ նշված, նյութերով հիմնավորված ողջամիտ կասկածն առ այն, որ մեղադրյալն առնչվում է վերջինիս մեղսագրվող հանցագործության հետ»:

Թիվ ԵԱՔԴ/0563/06/16 գործով դատարանի որոշում

Նման դեպքերում, առանց հետազոտելու և գնահատելու վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացված նյութերը և դրանց ստացման կարգի պահպանումը, դատարանը եզրահանգել է, որ առկա է անձի կողմից հանցագործություն կատարած լինելու ողջամիտ կասկած: Նման պատճառաբանությամբ, սակայն, անձի կողմից հանցագործությունը կատարելու ողջամիտ կասկածի առկայությունը հիմնավորված համարվել չի կարող:

3. Անձի կողմից հանցագործությունը կատարված լինելու ողջամիտ կասկածի հիմնավորում նշվում է նրա բերման ենթարկված կամ ձերբակալված լինելու հանգամանքը:

Ուսումնասիրված դատական ակտերում արձանագրվել է, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացված և դատարանի որոշմամբ որպես անձի կողմից հանցագործությունը կատարած լինելու ողջամիտ կասկածի հիմնավորման հիմք հանդիսացող տվյալներ ներկայացվել են նրան բերման ենթարկելու, ձերբակալելու արձանագրությունները, որոնք, ըստ էության, անձի կողմից հանցագործություն կատարելու ողջամիտ կասկածը հիմնավորող տվյալներ համարվել չեն կարող: Դրանք չեն պարունակում որևէ տվյալներ կամ տեղեկություններ անձի կողմից կոնկրետ հանցագործության կատարումը հիմնավորելու համար, ավելին՝ չի բացառվում անձի անօրինական բերման ենթարկելն ու ձերբակալելը:

2.4. Դատական ակտերում կալանավորման «վերաբերելի և բավարար» հիմնավորումները

Ուսումնասիրված դատական ակտերում անձի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու հիմքերի առնչությամբ հիմնավորումները կրում են ընդհանուր և շարժունային բնույթ: Ուսումնասիրված որոշումներում գերակշռում են դատարանների կողմից կալանավորման վերացական և մեխանիկական հիմնավորումները՝ առանց կատարելու կոնկրետ անձի, դեպքի և գործում առկա փաստական հանգամանքների անհատական վերլուծություն: Դատական ակտերի հիմնավորվածությունն ու պատճառաբանվածությունը սահմանափակվում է օրենքով նախատեսված հիմքերի պարզ շարադրանքով, և բացակայում են դատարանի հետևությունները հիմնավորող պատճառաբանությունները գործի փաստական տվյալների հիման վրա:

1. *Դատարանը հիմնավորում է կալանավորման անհրաժեշտությունը բացառապես հիմնվելով մեղադրանքի հանրային վտանգավորության և հանցագործության համար նախատեսված պատժի ծանրության վրա:*

Օրինակ, թիվ ԵԱՔԴ/0519/06/16, ԵԱՔԴ/0514/06/16 որոշումներով կալանավորման հիմնավորումը եղել է հետևյալը. «Դատարանը, քննության առարկա դարձնելով կալանավորումը՝ որպես խափանման միջոց ընտրելու հարցը, հաշվի առնելով մեղադրյալին մեղսագրվող արարքի հասարակական վտանգավորության և ծանրության աստիճանը, գտնում է, որ մեծ է հավանականությունը առ այն, որ մեղադրյալ [...] գործի քննության տվյալ փուլում ազատության մեջ մնալով, կարող է խոչընդոտել մինչդատական վարույթում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալու կամ այլ ճանապարհով, ինչպես նաև կարող է կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք, ուստի միջնորդությունը հիմնավոր է և ենթակա է բավարման...»:

«...դատարանը գտնում է, որ առկա են [...] նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու օրենսդրական հիմքերն ու պայմանները: Մասնավորապես, քննիչի կողմից ներկայացված և սույն փաստական տվյալներն ու տեղեկությունները դատարանի համար դատավարության տվյալ փուլում ողջամտորեն բավարար են հիմնավորված համարելու [...] առնչությունը ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով իրեն մեղսագրվող ենթադրյալ ծանր հանցագործությանը (հանցագործություն կատարած լինելու ողջամիտ կասկած), որի համար **նախատեսվող պատժի խստությունը, մեղսագրվող հանցանքի բնույթը և դրա վտանգավորության աստիճանը մեծացնում է հավանականությունն առ այն**, որ մնալով ազատության մեջ կարող է թաքնվել վարույթն իրականացնող մարմնից, խոչընդոտել գործի քննությանը՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալու կամ այլ ճանապարհով, կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք»:

Թիվ ԵԱՔԴ/0567/06/16 գործով դատարանի որոշում

2. Կայացված բոլոր որոշումներում դատարանների եզրահանգումներն առ այն, որ մեղադրյալը կարող է խոչընդոտել վարույթի պատշաճ իրականացմանը կամ քրեական օրենքով չթույլատրված արարք կատարել անհիմն և վերացական են՝ առանց քննությամբ ձեռք բերված որևէ տեղեկատվության կամ փաստի վրա հիմնվելու:

Օրինակ, թիվ ԵԱՔԴ/0569/06/16 որոշմամբ դատարանը որպես կալանավորման հիմնավորում նշել է հետևյալը. «հաշվի առնելով այն հանգամանքը, որ [...]–ին ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով մեղսագրված հանցանքը դասվում է ծանր հանցանքերի շարքին, որի համար նախատեսված ազատազրկման ձևով պատժի առավելագույն ժամկետը ութ տարի է, ինչպես նաև, որ մեծ է ռիսկայնությունն առ այն, որ մեղադրյալն ազատության մեջ մնալով կարող է թաքնվել վարույթն իրականացնող մարմնից, ինչպես նաև դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու ճանապարհով՝ մասնավորապես գործով հարցաքննված և դեռևս չհարցաքննված անձանց իր օգտին ցուցմունք տալուն հարկադրելու ճանապարհով խոչընդոտել մինչդատական վարույթում գործի քննությանը կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք, ուստի դատարանը մեղադրյալի ազատության իրավունքի սահմանափակումը համարում է լիովին արդարացված»:

Դատարանների նման եզրահանգումները քրեական գործի նյութերում առկա որևէ օբյեկտիվ տեղեկության կամ տվյալի վրա չեն հիմնվում: Ավելին, անհրաժեշտ է փաստել, որ զանգվածային անկարգությունների մեջ մեղադրվող անձանց առնչությամբ ողջամիտ կասկածը հիմնավորելու համար ներկայացվել են միայն կամ հիմնականում ոստիկանության աշխատակիցների ցուցմունքները: Հետևաբար, մեղադրյալի կողմից ոստիկանության աշխատակիցների նկատմամբ անօրինական ազդեցություն գործադրելու հնարավորության հիմնավորումը չի ներկայացվել ոչ վարույթն իրականացնող մարմնի, ոչ դատարանի կողմից:

3. Դատարանների կողմից չի իրականացվում մեղադրյալի անձնական հանգամանքների ուսումնասիրություն և դրանց լույսի ներքո կալանավորման կիրառում

Դատարանների կողմից չի իրականացվում մեղադրյալի անձնական հանգամանքների՝ անձնական բնութագրի, արժեքների, կապերի ուսումնասիրություն:

«Նյութերի ուսումնասիրությամբ պարզել ու հաստատված է համարել, որ [...]–ին] վերագրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործություն կատարելու մեղադրանք, որի համար օրենսդիրը նախատեսում է մեկ տարուց ավելի ժամկետով ազատազրկման ձևով պատիժ (ազատազրկում երեքից ութը տարի ժամկետով), իսկ մեղադրյալը բերման է ենթարկվել: Պատժի չափը և անձը բնութագրող տեղեկությունները դատարանը գտնում է, որ վճռորոշ չեն, սակայն էական են, որպիսի հանգամանքը բարձրացնում է հավանական ռիսկերն առ այն, որ մեղադրյալը, ազատության մեջ մնալով, կթաքնվի վարույթն իրականացնող մարմնից, ըստ այդմ՝ կարող է խոչընդոտել վարույթն

իրականացնող մարմնի գործողություններին»: Միաժամանակ, դատարանի կողմից անձի անձնական հատկանիշներին որևէ գնահատական չի տրվել:

Թիվ ԵԱՔԴ/0527/06/16 գործով դատարանի որոշում

Դատարանները հաշվի չեն առնում մեղադրյալների անձնական հատկանիշները, ընտանեկան և սոցիալական դրությունը, ընտանեկան ու աշխատանքային կապերը, սեփականությունը և այլ հանգամանքներ, որոնք որոշիչ են կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու հարցում:

Օրինակ, թիվ ԵԱՔԴ/0524/06/16 գործով որոշմամբ դատարանի կողմից անհատական ուսումնասիրության և գնահատման չեն ենթարկվել մեղադրյալի անձնական հատկանիշները, ինչպիսին են նրա ամուսնական կարգավիճակը, մանկահասակ երեխա ունենալու, դպրոցում մանկավարժ աշխատելու հանգամանքը, մշտական բնակության վայրի առկայությունը, աշխատանքի վայրից դրական բնութագիրը:

Դատարանի կողմից վերացականորեն հիմնավորվել է, որ նրան «մեղսագրվող հանցագործության բնույթի, դրա վտանգավորության աստիճանի, իր կամքով քրեական վարույթն իրականացնող մարմին չներկայանալու և արդյունքում բերման ենթարկվելու, ինչպես նաև նրան վերագրվող հանցանքի կապակցությամբ սպառնացող հնարավոր պատժի խստության և գործի օպերատիվ քննչական իրավիճակից ողջամտորեն բխում է, որ մեղադրյալ [նշվել է այլ մեղադրյալի անուն ազգանուն] կարող է թաքնվել է վարույթն իրականացնող մարմնից, խոչընդոտել գործի քննությանը՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալու կամ այլ ճանապարհով, կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք»:

Թիվ ԵԱՔԴ/0524/06/16 գործով դատարանի որոշում

Թիվ ԵԱՔԴ/0529/06/16 գործով դատարանն արձանագրել է, որ պատժի չափը, ինչպես նաև անձը բնութագրող տեղեկությունները, որոնց մասին պաշտպանը ներկայացրել է ապացույցներ, Դատարանի համար վճռորոշ չեն, իսկ անձը բնութագրող հատկանիշները բավարար չեն հերքելու կալանավորման հիմքերից որևէ մեկի առկայությունը, և այս մասով Դատարանի մոտ առաջացել է համոզմունք առ այն, որ բավարար հիմքեր կան առ այն, որ Մեղադրյալը կարող է թաքնվել և խուսափել քննությունից, խոչընդոտել քննությանը: Միաժամանակ, Դատարանն արձանագրում է, որ պատժի խստությունը բարձրացնում է հավանական ռիսկերն առ այն, որ մեղադրյալը, ազատության մեջ մնալով, կթաքնվի վարույթն իրականացնող մարմնից, ըստ այդմ՝ կարող է խոչընդոտել վարույթն իրականացնող մարմնի գործողություններին, այդ թվում՝ այդ դեպքին մասնակից այլ անձանց կամ վկաների վրա կարող է ազդեցություն ունենալ, այն դեպքում, երբ դեռ կան անձինք, ում ինքնությունը քրեական գործով դեռևս բացահայտված չէ: Ընդ որում, կալանքի հիմքի առկայության պարզման առումով Դատարանը պատժի չափը դիտել է քննիչի կողմից միջնորդության մեջ նշված մյուս փաստերի ու տեղեկությունների համակցության մեջ»:

Տվյալ որոշման ուսումնասիրությունը փաստում է, որ անձի նկատմամբ կալանավորումը կիրառելու հիմքերի գնահատման համար դատավորի կողմից հաշվի չեն առնվում նրա անձը

բնութագրող հատկանիշները, այդ թվում՝ փախուստի ու վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու հիմքը գնահատելու համար: Դատարանի կողմից հաշվի է առնվել բացառապես մեղադրյալին մեղսագրվող հանցագործության բնույթը և դրա համար նախատեսված պատժաչափը:

4. Կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու հիմքերը բառացիորեն կրկնվում են տարբեր դատական ակտերում

Ուսումնասիրված նույն դատավորի նախագահությամբ կայացված դատական ակտերում արձանագրվել են **կալանավորման հիմքերի բառացի կրկնության մի շարք դեպքեր:**

Այսպես, թիվ ԵԱՔԴ/0518/06/16, թիվ ԵԱՔԴ/0520/06/16, թիվ ԵԱՔԴ/0522/06/16, թիվ ԵԱՔԴ/0523/06/16, թիվ ԵԱՔԴ/0524/06/16, թիվ ԵԱՔԴ/0538/06/16 գործերով նույն դատավորի նախագահությամբ կայացված որոշումներում նշվել են բառացիորեն նույն հիմնավորումները՝

«[...]ին մեղսագրվող հանցագործության բնույթի, դրա վտանգավորության աստիճանի, իր կամքով քրեական վարույթն իրականացնող մարմնին չներկայանալու և արդյունքում բերման ենթարկվելու, ինչպես նաև նրան վերագրվող հանցանքի կապակցությամբ սպառնացող հնարավոր պատժի խստության և գործի օպերատիվ քննչական իրավիճակից ողջամտորեն բխում է, որ մեղադրյալ [...] կարող է թաքնվել վարույթն իրականացնող մարմնից, խոչընդոտել գործի քննությանը՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալու կամ այլ ճանապարհով, կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք»:

Թիվ ԵԱՔԴ/0518/06/16, թիվ ԵԱՔԴ/0520/06/16, թիվ ԵԱՔԴ/0522/06/16, թիվ ԵԱՔԴ/0523/06/16, թիվ ԵԱՔԴ/0524/06/16, թիվ ԵԱՔԴ/0538/06/16 գործերով որոշումներ

Թիվ ԵԱՔԴ/0583/06/16 և թիվ ԵԱՔԴ/0521/06/16 գործերով որոշումներում նույն դատարանի նախագահությամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու որոշումը հիմնավորվել է նույն կերպ՝ բառացիորեն կրկնելով՝ «...դատարանը, քննության առնելով միջնորդությունը, լսելով քննիչին, հետազոտելով նյութերը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայացված նյութերով առկա է հիմնավոր կասկած այն մասին, որ մեղադրյալ [...] կատարել է հանցավոր արարք, որ առկա են նրան կալանավորելու պայմաններն ու հիմքերը, այն, որ նա գտնվելով ազատության մեջ կարող է խոչընդոտել մինչդատական վարույթում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց նկատմամբ անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար կարևոր նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու եղանակով, ինչպես նաև հաշվի առնելով նրան վերագրող արարքի բնույթն ու հասարակական վտանգավորության աստիճանը, այն, որ նա մեղադրվում է ծանր հանցագործություն կատարելու մեջ, որի համար որպես պատիժ նախատեսվում է ազատազրկում մեկ տարուց ավելի ժամկետով, ինչը մեծացնում է նրա կողմից վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու հավանականությունը, հատկապես հաշվի առնելով

այն հանգամանքը, որ ներկայումս նրա գտնվելու վայրը հայտնի չէ, ինչի համար նախաքննական մարմինը հայտարարել է հետախուզում, խուսափում է քրեական վարույթն իրականացնող մարմնին ներկայանալուց, գտավ քննիչի միջնորդությունը հիմնավոր և բավարարման ենթակա»:

Հետազոտությամբ արձանագրվել է բառացիորեն նույն որոշման կրկնությունը տարբեր դատավորների նախագահությամբ կայացված կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ որոշումներում:

2016թ. հուլիսի 29-ի իրադարձությունների առնչությամբ 2016թ. օգոստոսի 1-ին կայացված թիվ ԵԱՔԴ/0534/06/16 և ԵԱՔԴ/0531/06/16 տարբեր դատավորների նախագահությամբ կայացված որոշումները բառացիորեն կրկնում են միմյանց, նույնիսկ՝ տեքստում մեղադրյալների տվյալները: Ավելին, թիվ ԵԱՔԴ/0534/06/16 գործով դատավորը կայացրել է թույլ տրված տեխնիկական վրիպակն ուղղելու մասին որոշում, քանի որ մեղադրյալի անվան փոխարեն նշվել են այլ անձի անձնական տվյալներ՝ նկատի ունենալով, որ *«նշված վրիպակի ուղղումը որևէ կերպ չի փոփոխում որոշման էությունն ու բովանդակությունը»:*

Նույն դատավորի նախագահությամբ կայացված թիվ ԵԱՔԴ/0570/06/16 և թիվ ԵԱՔԴ/0571/06/16 գործերով որոշումներում դատարանը մեղադրյալների նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին որոշումը հիմնավորել է նույնաբովանդակ երկու պարբերությամբ՝

«ներկայացված նյութերում առկա է հիմնավոր կասկած, որ [...] առնչություն ունի իրեն վերագրվող ենթադրյալ ծանր հանցագործության վերոհիշյալ դեպքին: Հիմնավոր կասկածը բխում է մեղադրյալների, տուժողի ցուցմունքները: Դատարանը գտնում է, որ դեպքի կոնկրետ հանգամանքները, մեղադրյալ [...] վերագրվող ենթադրյալ հանցագործության բնույթն ու վտանգավորության աստիճանը բարձրացնում են հավանականությունը, որ նա ազատության մեջ մնալով կարող է խուսափել քրեական պատասխանատվությունից, խոչընդոտել մինչդատական վարույթում գործի քննությանը՝ քրեական դատավարության մասնակիցների վրա անօրինական ազդեցություն գործադրելու ճանապարհով: Մեղադրյալի հավանական վարքագծի վերաբերյալ հետևությունը բխում է այն հանգամանքից, որ քրեական գործի քննությունը դեռևս նախնական փուլում է, չեն պարզվել և հարցաքննվել դեպքին ակնատես մյուս վկաները, իսկ հարցաքննված վկաներն ու մեղադրյալները նրա ընկերներն են, և մեղադրյալ [...] ազատության մեջ մնալով կարող է նրանց ուղղորդել և անօրինական ազդեցություն գործադրել»:

Թիվ ԵԱՔԴ/0570/06/16 և թիվ ԵԱՔԴ/0571/06/16 գործերով դատարանի որոշումներ

5. Որպես կալանավորման հիմքեր դատարանի կողմից նշվում է վարույթն իրականացնող մարմնի ներկայացվածից տարբերվող հիմքեր

Կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու հիմքերում վարույթն իրականացնող մարմնի կողմից նշվել են հետևյալները՝

Թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից	30
Խոչընդոտել մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը	33
Կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք	15
Խուսափել քրեական պատասխանատվությունից և նշանակված պատիժը կրելուց	3
Խոչընդոտել դատական ակտի կատարմանը	0

Որպես մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը խոչընդոտելու տեսակ վարույթն իրականացնող մարմնի կողմից նշվում են՝

Քրեական դատավարության մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործելը	11
Գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելը կամ կեղծելը	8
Վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալու կամ այլ ճանապարհով	19
Խոչընդոտելու տեսակը չի մասնավորեցվել	2

Դատարանի որոշմամբ որպես կալանավորման հիմքեր կիրառվել են՝

Թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից	31
Խոչընդոտել մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը	32
Կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք	13
Խուսափել քրեական պատասխանատվությունից և նշանակված պատիժը կրելուց	4
Խոչընդոտել դատական ակտի կատարմանը	0

Որպես մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը խոչընդոտելու տեսակ դատարանի կողմից նշվել է՝

Քրեական դատավարության մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործելը	16
Գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելը կամ կեղծելը	6
Վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալու կամ այլ ճանապարհով	15
Խոչընդոտելու տեսակը չի մասնավորեցվել	6

Անհրաժեշտ է փաստել, որ վերը ներկայացված տվյալների համաձայն՝ դատարանները որպես կալանավորման հիմք կիրառում են վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացված միջնորդությամբ չվկայակոչված հիմքեր:

«Հաշվի է առնում մեղադրյալին մեղսագրվող հանցագործության բնույթը և վտանգավորության աստիճանը՝ հատկապես այն, որ նա մեղադրվում է ծանր հանցագործության կատարման մեջ, որի համար նախատեսվում է պահիժ բացառապես ազատագրկման ձևով՝ ընդհուպ մինչև 10 տարի ժամկետով, որը բարձրացնում է հավանականությունը, որ վերջինս ազատության մեջ մնալու դեպքում կարող է թաքնվել վարույթն իրականացնող մարմնից, խոչընդոտել մինչդատական վարույթում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու ճանապարհով: Մեղադրյալ [...] կողմից ազատության մեջ մնալու դեպքում նշված եղանակներով ոչ իրավաչափ վարքագիծ դրսևորելու հավանականությունը մեծացնում է նաև հատկապես այն, որ քրեական գործում առկա փաստական տվյալների համաձայն վերջինս իրեն մեղսագրվող հանցագործությունը կատարել է այլ անձանց հանցակցությամբ, որոնց ինքնության պարզման և հայտնաբերման ուղղությամբ դեռևս իրականացվում են քննչական գործողություններ»:

Թիվ ԵԱՔԴ/0979/06/16 գործով վարույթն իրականացնող մարմնի որոշում

Մինչդեռ դատարանի կողմից որպես մեղադրյալի կալանավորման հիմքեր նշվել են հետևյալները՝

«Դատարանը գտնում է, որ մեղսագրվող արարքի ծանրության աստիճանը բարձրացնում է հավանականություն առ այն, որ ազատության մեջ մնալով՝ [...] կարող է թաքնվել վարույթն իրականացնող մարմնից, խոչընդոտել մինչդատական վարույթում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու ճանապարհով, կատարել նոր քրեորեն հետապնդելի արարք, ուստի միջնորդությունը հիմնավոր է և ենթակա է բավարարման»:

Թիվ ԵԱՔԴ/0979/06/16 գործով դատարանի որոշում

2.5. Գրավի կիրառումը

Ուսումնասիրված դատական ակտերով առաջին անգամ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի միջնորդության քննության ընթացքում պաշտպանության կողմի կողմից գրավի կիրառման միջնորդություն ներկայացվել է 17 անձանց պարագայում: Բոլոր դեպքերում դատարանի կողմից գրավի կիրառման միջնորդությունը մերժվել է:

Գրավի կիրառման միջնորդությունների մերժման հիմքում հիմնականում դրվել են կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու հիմնավորումները:

Օրինակ, ԵԱՔԴ/0532/06/16 գործով դատարանն արձանագրել է, որ ներկա պահին խափանման միջոց կիրառելու բավարար հիմքեր առկա չեն, քանի որ մեծ է հավանականությունը, որ մեղադրյալը, ազատության մեջ մնալով հնարավոր է ձեռնարկի այնպիսի քայլեր, որով կխոչընդոտի մեղադրանքի կողմից գործողությունները, այդ թվում՝ կարող է թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից, կարող է քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալու կամ այլ ճանապարհով խոչընդոտել մինչդատական վարույթում գործի քննությանը, ինչպես նաև կարող է կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք, իսկ նման ենթադրություններ կատարելու համար դատարանը հիմնվում է ներկայացված փաստերի, տեղեկությունների, ինչպես նաև կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու հիմքերի առկայության վերաբերյալ ներկայացված հանգամանքների վրա: Դատարանը մեղադրյալին կալանքից գրավով ազատելը ճանաչում է անթույլատրելի և գտնում, որ մեղադրյալի պաշտպանների միջնորդությունը պետք է մերժել անհիմն լինելու և գրավը որպես այլընտրանքային խափանման միջոց կիրառելու բավարար հիմքերի բացակայության հիմքով:

Այդուամենայնիվ, անհրաժեշտ է փաստել, որ դատարանը գրավի կիրառումը մերժելու համար, հիմնվելով բացառապես կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու անհրաժեշտության հիմնավորումներին, գործում առկա որևէ փաստական տվյալներ դրա պատճառաբանության ներքո չեն դրվել:

Որպես գրավի կիրառումն անթույլատրելի համարելու հիմնավորում դատարանների կողմից նշվել են նաև մեղսագրվող հանցագործության բնույթն ու վտանգավորության աստիճանը, քննության սկզբնական փուլը, հիմնավորումների բացակայությունը:

Ավելին, թվով 9 որոշումներով դատարանի կողմից գրավի կիրառման անթույլատրելիությունը որևէ կերպ չի հիմնավորվել, այլ բացառապես նշվել է, որ դրանով հնարավոր չէ ապահովել մեղադրյալի հետագա պատշաճ վարքագիծը՝ վարույթի ընթացքում:

«Գրավի կիրառման միջոցով նույնպես հնարավոր չէ ապահովել մեղադրյալ [...] հետագա պատշաճ վարքագիծը վարույթի ընթացքում: Ուստի, կալանավորման նշված այլընտրանքային խափանման միջոցի կիրառումը նրա նկատմամբ պետք է ճանաչել անթույլատրելի»:

Թիվ ԵԱՔԴ/0522/06/16 և ԵԱՔԴ/0538/06/16 գործերով դատարանի որոշումներ

Դատարանը հղում կատարելու բացառապես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համապատասխան հոդվածների, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին՝ եզրահանգել է, որ «քննության ներկա փուլում մեղադրյալի կողմից գրավի մուծումը չի կարող երաշխիք հանդիսանալ վերջինիս իրավաչափ վարքագիծը կանխորոշելու հարցում»:

Թիվ ԵԱՔԴ/0510/06/16 գործով դատարանի որոշում

Թիվ ԵԱՔԴ/0521/06/16 գործով որոշմամբ դատարանը որպես գրավի կիրառման անթույլատրելիության հիմնավորում շարադրել է, որ «դատարանի գնահատմամբ, տվյալ դեպքում, անհրաժեշտ է նշել, որ վերագրվող հանցավոր արարքի բնույթն ու վտանգավորության աստիճանն ունեն էական նշանակություն՝ նրա հետագա վարքագծի հավանականությունը կանխորոշելու հարցում, որ գործի կոնկրետ հանգամանքներից ելնելով այլընտրանքային երաշխիքն ի գործու չէ կանխել մեղադրյալի ոչ իրավաչափ վարքագիծը նրան ազատ արձակելու դեպքում և առկա է ողջամիտ ենթադրություն, որ ազատության մեջ մնալով՝ մեղադրյալը կարող է խոչընդոտել գործի քննությանը կամ թաքնվել վարույթն իրականացնող մարմնից: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ դատարանը գտնում է, որ մեղադրյալ [...] նկատմամբ գրավի կիրառումն անթույլատրելի է»: Տվյալ դեպքում նույնպես, դատարանի կողմից որևէ հիմնավորում և գործում առկա փաստական տվյալներ չեն նշվել, որոնց հիման վրա դատարանը կառուցել է իր ենթադրությունները մեղադրյալի հետագա հնարավոր վարքագծի վերաբերյալ:

Մեկ այլ օրինակ, թիվ ԵԱՔԴ/0509/06/16 գործով դատարանը մերժել է գրավի որպես կալանավորման այլընտրանքային միջոցի կիրառումը հետևյալ հիմնավորմամբ՝ «ներկա պահին խափանման միջոց կալանքի փոխարեն այլընտրանքային խափանման միջոց՝ գրավ կիրառելու համար հիմքեր առկա չեն, քանի որ մեծ է հավանականությունը, որ մեղադրյալը, ազատության մեջ մնալով, հնարավոր է ձեռնարկի այնպիսի քայլեր, որով կխոչընդոտի մեղադրանքի կողմի գործողությունները, այդ թվում՝ կարող է թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից, կարող է ազդեցություն ունենալ այն անձանց, որոնց հետ դեպքի կապակցությամբ մեղադրյալն ունեցել է առնչություն, ինչպես նաև կարող է թաքցնել կամ կեղծել գործի համար նշանակություն ունենող նյութերը, իսկ նման ենթադրություններ կատարելու համար Դատարանը հիմնվում է ներկայացված փաստերի, տեղեկությունների, ինչպես նաև կալանավորումը որպես խափանման

միջոց կիրառելու հիմքերի առկայության վերաբերյալ վերևում ներկայացված հանգամանքների վրա»: Մինչդեռ, դատարանի կողմից որևէ տեղեկություն կամ փաստ չի ներկայացվել ոչ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու, ոչ գրավի կիրառման դեպքում մեղադրյալի կողմից հնարավոր վարքագծի վերաբերյալ ենթադրություններ կատարելու հիմնավորման առնչությամբ:

2.6. Վերաբերելի տվյալների և տեղեկությունների ոչ ամբողջական ներկայացում դատարանին

Վարույթն իրականացնող մարմնի կողմից դատարանին չեն ներկայացվում մեղադրյալին արդարացնող և նրա մեղավորությունը մեղմացնող տվյալներն ու ապացույցները:

Օրինակ, թիվ ԵԱՔԴ/0531/06/16 գործով դատարանն իր որոշմամբ արձանագրել է, որ միջնորդության քննության ընթացքում քննիչը նշել է, որ «բացի ներկայացված ապացույցներից կան նաև այլ ցուցմունքներ, մասնավորապես՝ դեպքի պահին Մեղադրյալի ավտոմեքենայի մեջ գտնվող անձանց ցուցմունքները, որոնք պնդել են, որ մասնակցել են և գտնվել են այդ վայրում, սակայն գտել է, որ ներկայացված նյութերը բավարար են, քանի որ այդ ցուցմունքների համաձայն հետո դեռևս պետք է կատարվեն քննչական գործողություններ»:

Մինչդեռ, նույն անձի վերաբերյալ վերաքննիչ դատարանի որոշմամբ արձանագրվել է մեղադրյալի ցուցմունքը, որ նա և իր հետ գտնվող անձինք պատահականորեն են հայտնվել Սարի թաղում ենթադրաբար տեղի ունեցած զանգվածային անկարգությունների վայրում և որևէ կերպ կապ չեն ունեցել տեղի ունեցած իրադարձությունների հետ: Այսինքն, դատարանը փաստել է, որ մեղադրյալի կողմից մատնանշած անձանց ցուցմունքները դատարան չեն ներկայացվել:

Այս հանգամանքը եղել է էական անձի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու հարցի լուծման առնչությամբ, քանի որ ինչպես վերաքննիչ քրեական դատարանն է արձանագրել, մեղադրյալն առնչություն չի ունեցել իրեն մեղսագրվող հանցագործության հետ (տե՛ս ստորև):

2.7. Կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ որոշումների բողոքարկումը

Կալանավորումը որպես խափանման միջոց առաջին անգամ կիրառելու մասին որոշումները բողոքարկվել են վերաքննիչ դատարան 25 մեղադրյալների վերաբերյալ գործերով: Կալանավորման կիրառման վերանայումն ընդհանուր առմամբ միջինում տևել է երկու շաբաթ՝ անձի կամ պաշտպանի կողմի վերաքննիչ բողոք ներկայացնելու օրվանից մինչև վերաքննիչ դատարանի կառավարող որոշման կայացումը ներառող ժամկետի անտյուրյամբ: Երկու դեպքում՝ ընդ որում վերաքննիչ քրեական դատարանի նույն դատավորի նախագահությամբ կալանավորման վերանայման ժամկետը տևել է 3 շաբաթից ավելի:

Ներկայացված վերաքննիչ բողոքներից 21-ը մերժվել են ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից: Երկու (2) անձանց վերաքննիչ բողոքները բավարարվել են, ովքեր ազատվել են կալանքից:

Եվս Երկու (2) անձանց առնչությամբ ներկայացված վերաքննիչ բողոքները բավարարվել են մասնակիորեն՝ մեղադրյալների նկատմամբ կիրառելով կալանավորմանն այլընտրանքային խափանման միջոց գրավ:

Մասնավորապես, դեպքերից մեկով վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ «հիմնավորված և պատճառաբանված չէ առաջին աստիճանի դատարանի հետևությունն այն մասին, որ [...] առնչություն ունի իրեն մեղսագրվող ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործությանը»:

Թիվ ԵԱՔԴ/0531/06/16 գործով դատարանի որոշում

Մյուս դեպքում, վերաքննիչ դատարանը հաշվի է առել մեղադրյալի ծանր հիվանդության և հաշմանդամության առկայությունը, որն ընդգրկված է ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 26-ի N825-Ն որոշմամբ հաստատված «Պատիժը կրելուն խոչընդոտող ծանր հիվանդությունների ցանկում»:

Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ հիվանդությունը, հաշմանդամությունը «ողջամտորեն նվազեցնում են հավանականության աստիճանը, որ մեղադրյալը վերագրվող հանցանքի կապակցությամբ սպառնացող հնարավոր պատժի խստությունից ելնելով՝ կարող է թաքնվել վարույթն իրականացնող մարմնից, խոչընդոտել գործի քննությանը՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալու կամ այլ ճանապարհով, կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք: Այս պայմաններում, վերաքննիչ դատարանը գտնում է, որ մեղադրյալ [...] առողջական վիճակի վերաբերյալ վերոնշյալ տվյալների առկայությունը կասկածի տակ է դնում վերջինիս կալանավորման հիմքերի առկայության վերաբերյալ առաջին աստիճանի դատարանի եզրահանգումը և փաստվում է այդ հիմքերի վերաբերյալ կասկածների ողջամիտ չլինելը»:

Թիվ ԵԱՔԴ/0523/06/16 գործով դատարանի որոշում

Երկու անձի առնչությամբ վերաքննիչ դատարանը պաշտպանության կողմի ներկայացված բողոքը բավարարել է մասնակիորեն՝ կայացնելով կալանավորմանը այլընտրանքային միջոց գրավը կիրառելու վերաբերյալ որոշում: Մասնավորապես, ԵԱՔԴ/0538/06/16 և ԵԱՔԴ/0539/06/16 գործերով մեղադրյալների նկատմամբ կիրառվել է գրավ համապատասխանաբար 1.500.000 և 1.000.000 դրամ գումարի չափով: Երկու դեպքում էլ վերաքննիչ դատարանը, հաշվի առնելով մեղադրյալների անձը բնութագրող հատկանիշները և հանգամանքները, հանգել է եզրահանգման, որ «գրավի գումարի վճարման երաշխիքը կարող է ապահովել մեղադրյալի պատշաճ վարքագիծը, ուստի մեղադրյալին գրավով կալանքից արձակելը թույլատրելի է» (ԵԱՔԴ/0538/06/16) և «գրավը կարող է բավարար երաշխիք հանդիսանալ քրեական գործի քննության ընթացքում մեղադրյալի ոչ իրավաչափ հնարավոր վարքագիծը զսպելու համար և ողջամտորեն կչեզոքացնի վերջինիս կողմից

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքներ կատարելու հավանականությունը» (Թիվ ԵԱՔԴ/0539/06/16 գործով որոշում):

Միաժամանակ, անհրաժեշտ է փաստել, որ վերաքննիչ դատարանի կողմից որևէ հիմնավորում չի բերվել, թե ինչու կոնկրետ մեղադրյալի առնչությամբ ընտրվել գրավի կոնկրետ չափը:

«Հաշվի առնելով վերը նշված հիմնավորումները և այն, որ գրավի գումարի սահմանումը չունի վնասը հատուցելու նշանակություն, գտնում է, որ 1.500.000 ՀՀ դրամի վճարումը կարող է ապահովել մեղադրյալի պատշաճ վարքագիծը»:

Թիվ ԵԱՔԴ/0538/06/16 գործով դատարանի որոշում

Մյուս բոլոր դեպքերում վերաքննիչ քրեական դատարանի կողմից կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ որոշումները մնացել են անփոփոխ: Որպես հիմնական պատճառաբանություն՝ վերաքննիչ դատարանի կողմից հղում է կատարվել առաջին աստիճանի դատարանի փաստարկներին (11 անձի առնչությամբ), ինչպես նաև որպես վերաքննիչ բողոքը մերժելու պատճառաբանություն բերվել, որ պաշտպանի հիմնավորումները բավարար հիմք չեն (10 անձի առնչությամբ):

Վերաքննիչ դատարանն արձանագրել, որ «անդրադառնալով պաշտպանի վերաքննիչ բողոքի փաստարկներին այն մասին, որ մեղադրյալն ունի մշտական բնակության վայր, ընտանիք, վերաքննիչ դատարանը գտնում է, որ սույն դեպքում նշված հանգամանքները չեն կարող բավարար հիմք հանդիսանալ մեղադրյալի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը վերացնելու կամ գրավ կիրառելու համար»:

Թիվ ԵԱՔԴ/0521/06/16 գործով դատարանի որոշում

Կիրառված կալանքի ժամկետը երկարացնելու վերաբերյալ առաջին աստիճանի դատարանի որոշումները վերաքննիչ քրեական դատարանում բողոքարկվել են 3 մեղադրյալների կողմից: Ընդ որում 1 անձի նկատմամբ կալանքի ժամկետը երկարաձգվել է 2 անգամ, իսկ 1 մեղադրյալի նկատմամբ՝ 3, ևս մեկի նկատմամբ՝ 4 անգամ:

Մեղադրյալներից մեկի դեպքում, ում նկատմամբ կալանքի ժամկետը երկարաձգվել է երրորդ անգամ, վերաքննիչ դատարանը իր որոշմամբ բեկանել է Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի որոշումը կալանքի տակ պահելու ժամկետը երկու ամսով երկարացնելու մասին քննիչի միջնորդությունը բավարարելու և այն գրավով փոխարինելու մասին պաշտպանի միջնորդությունը մերժելու մասին և որոշում է կայացրել՝ մեղադրյալի նկատմամբ ընտրված խափանման միջոցը վերացնել և նրան ազատ արձակել՝ դատական նիստերի դահլիճից: Դատարանը իր որոշումը հիմնավորել է այն պատճառաբանությամբ, որ «կալանքի տակ պահելու ժամկետը երկու ամիս ժամանակով

երկարացնելու վերաբերյալ միջնորդությանը կից դատարան ներկայացված նյութերը, ինչպես նաև դրանցով արտացոլված գործի հանգամանքները հիմք են տալիս պնդելու, որ դատարանի կողմից մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետը երկու ամիս ժամանակով երկարացնելու մասին որոշումը հիմնավոր չէ» (Թիվ ԵԱՔԴ/0535/06/16 գործով որոշում):

Նույն գործով կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ, ինչպես նաև կալանքի տակ պահելու ժամկետը երկարաձգելու վերաբերյալ որոշումները պաշտպանության կողմից բողոքարկվել են ինչպես վերաքննիչ, այնպես էլ վճռաբեկ դատարան: Վճռաբեկ դատարանը բոլոր դեպքերում կայացրել է «վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշում:

Թիվ ԵԱՔԴ/0532/06/16 գործով մեղադրյալի նկատմամբ կալանքի տակ պահելու ժամկետը երկարաձգվել է 4 անգամ: Բոլոր դեպքերում բողոքարկվել է ինչպես վերաքննիչ քրեական դատարան, այնպես էլ վճռաբեկ դատարան: Միայն վերջին՝ 4-րդ անգամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարաձգելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումը վերաքննության կարգով բողոքարկելու դեպքում վերաքննիչ դատարանի կողմից կայացվել է որոշում կալանավորումը գրավով փոխարինելու վերաբերյալ: Սահմանվել է 1 միլիոն ՀՀ դրամի չափով գրավ: Իր որոշումը վերաքննիչ դատարանը պատճառաբանել է հետևյալով՝

«Գործի քննության ներկա փուլում կասկածի տակ չառնելով հիմնավոր կասկածն առ այն, որ մեղադրյալն առնչություն ունի իրեն վերագրվող արարքի հետ և նրա նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանավորման հիմքերը, վերաքննիչ դատարանը գտնում է, որ թեև դրանք անհրաժեշտ, սակայն արդեն ներկայումս (կոնկրետ դեպքում) բավարար չեն պաշտպանության կողմի միջնորդությունը՝ գրավ կիրառելու վերաբերյալ մերժելու, գրավի կիրառումն անթույլատրելի ճանաչելու համար»:

Թիվ ԵԱՔԴ/0532/06/16 գործով դատարանի որոշում

2.8. Կալանավորման ժամկետի երկարացում

Ուսումնասիրված դատական գործերում կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու ժամկետի երկարաձգման միջնորդություններ ներկայացվել են 5 մեղադրյալի առնչությամբ: Ուսումնասիրման ենթարկված դեպքերը վերաբերում են միայն նախաքննության փուլում մեղադրյալների կալանավորմանը և չեն ներառում դատական քննության ընթացքում ամբաստանյալների՝ անազատության մեջ լինելու դեպքերը:

Նշված 5 անձանցից երկուսի դեպքում կալանավորման ժամկետը գործի նախաքննության ընթացքում երկարաձգելու վերաբերյալ միջնորդություն դատարան ներկայացվել է 1 անգամ, մեկ անձի դեպքում 2 անգամ, իսկ երկու անձանց դեպքում՝ երեք և ավելի անգամ:

Կալանքի ժամկետը երկարացնելու վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի միջնորդությունների վերաբերյալ դատարանների կողմից կայացված որոշումներում արձանագրված հիմնական խնդիրներն են՝

1. *Ողջամիտ կասկածի հիմնավորումը միայն նախկինում՝ կալանավորումը որպես խափանման կիրառելու առնչությամբ ներկայացված տվյալների և տեղեկությունների հիման վրա*

Որպես կալանքի տակ պահելու ժամկետը երկարաձգելու միջնորդության հիմք վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացվել են հիմնականում փաստարկներ, որոնք դրվել են նաև կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդության հիմնավորումներ:

«Քրեական գործով նախաքննության ընթացքում դեռևս շարունակում է առկա լինել հիմնավոր կասկած, որ մեղադրյալ [...] առնչություն ունի իրեն վերագրվող հանցագործության կատարմանը»:

Թիվ ԵԱՔԴ/0528/06/16 գործով կալանքի ժամկետը երկարացնելու վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի միջնորդություն

Նույն գործով, կայացված որոշմամբ դատարանն անդրադարձել է մեղադրյալի կողմից հանցագործությունը կատարելու ողջամիտ կասկածին բացառապես հղում կատարելով նախկինում կայացված որոշմանը:

«Ինչպես հիմնավոր կասկածի, այնպես էլ կալանավորման հիմքերի առկայություն, փաստորեն հաստատված է համարել ՀՀ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանը, երբ քննարկվել է մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց կալանավորումը կիրառելու միջնորդությունը, արդյունքում՝ քննիչի միջնորդությունը բավարարվել է, իսկ այդ որոշումը ստացել է օրինական ուժ: Դատարանն արձանագրում է, որ վերը նշված դատարանի դատական ակտում արդեն իսկ հաստատված միջնորդության մեջ նշված և գործի նյութերում

առկա ապացույցները, փաստերը վերստին ուսումնասիրելու արդյունքում դատարանը մեղադրյալի առնչությունը կոնկրետ վերջինիս մեղսագրվող արարքի հետ կապված, հաստատված է համարում: Դատարանը փաստում է, որ քրեական գործով նախաքննության կողմից ձեռք բերված ու դատարանին ներկայացված տվյալներով ողջամիտ կասկածն առկա է ու չի վերացել»:

Թիվ ԵԱՔԴ/0528/06/16 գործով դատարանի որոշում

Նման պայմաններում, դատարանը որևէ կերպ չի անդրադարձել այն հարցին, թե քրեական գործով նախաքննության կողմից ինչ տվյալներ են ձեռք բերվել և ներկայացվել դատարանին, ինչ տեղեկություններ և տվյալներ են դրված ողջամիտ կասկածի և դրա շարունակականության հիմքում: Դատարանի նման հիմնավորումը չի կարող համարվել հանցագործությունը կատարած լինելու ողջամիտ կասկածի շարունակականության հիմնավորում:

Թիվ ԵԱՔԴ/0531/06/16 գործով մեղադրյալի նկատմամբ կալանքի ժամկետը երկարացնելու վերաբերյալ բոլոր միջնորդություններում և դատարանի համապատասխան որոշումներում որպես մեղադրյալի կողմից հանցագործությունը կատարված լինելու ողջամիտ կասկածի հիմնավորում ներկայացվել է դեռևս առաջին անգամ նրան կալանավորելու հիմքում դրված երկու ուստիկանների ցուցմունքները: Որևէ այլ ապացույց, տեղեկություն կամ տվյալ հիմնավոր կասկածի շարունակական առկայության վերաբերյալ չի ներկայացվել վարույթն իրականացնող մարմնի կողմից:

Այսպես, դատարանը կալանքի ժամկետը երկարացնելու մասին որոշմամբ նշել է՝

«տվյալ դեպքում ներկայացված նյութերի՝ քննչական և դատավարական գորողությունների արդյունքները պարունակող փաստթղթերի, այդ թվում վկաներ [...] և [...] 31.07.2016թ. հարցաքննությունների արձանագրությունների ուսումնասիրությունից պարզ է դառնում, ու դեռևս առկա են հիմնավոր կասկածներն առ այն, որ մեղադրյալը հնարավոր է որ կատարած լինեի իրեն մեղսագրվող արարքը»:

Թիվ ԵԱՔԴ/0531/06/16 գործով դատարանի որոշում

Ավելին, նույն մեղադրյալի նկատմամբ կալանքի ժամկետը երկարաձգվել է 4 անգամ և բոլոր դեպքերում որպես հիմնավոր կասկածի հիմնավորում ներկայացվել են դեռևս 31.07.2016թ. երկու վկաների ցուցմունքների արձանագրությունները:

2. Հատուկ ջանասիրության գործադրման գնահատումը

Վարույթն իրականացնող մարմնի կողմից դրսևորած ջանասիրությունը դատարանի կողմից պատշաճ գնահատականի չի արժանանում:

Թիվ ԵԱՔԴ/0528/06/16 գործով վարույթն իրականացնող մարմինը մեղադրյալի նկատմամբ կալանքի կիրառման ժամկետը երկարացնելու մասին միջնորդության մեջ նշել է, որ «[...] մեղադրյալ [...] նկատմամբ որպես խափանման միջոց կալանավորումը կիրառելուց հետո կատարվել են բազմաթիվ քննչական և դատավարական գործողություններ: Հարցաքննվել են մեղադրյալներ, վկաներ, կատարվել են առերես հարցաքննություններ, նշանակվել և կատարվել են դատաբժշկական փորձաքննություններ և այլն: 2016թ. օգոստոսի 24-ին և հոկտեմբերի 4-ին համապատասխանաբար որոշումներ են կայացվել մեղադրյալներ [...] նկատմամբ դատահոգեբուժական և դատահոգեբանական համալիր ստացիոնար փորձաքննություն նշանակելու մասին, որի կատարման համար վերջիններս տեղավորվել են ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» հոգեբուժական կլինիկայում»:

Դատարանն իր որոշմամբ արձանագրել է՝

Վարույթն իրականացնող մարմնի միջնորդությունը հիմնավոր է և սույն քրեական գործով մեղադրյալի կալանքի տակ պահելու ժամկետը պետք է երկարացնել երկու ամիս ժամկետով, քանի որ վարույթն իրականացնող մարմինը դրսևորել է անհրաժեշտ ջանասիրություն՝ ապահովելու գործի լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննության ընթացքը, այդ մասին են վկայում քննիչի կողմից կատարված քննչական և դատավարական գործողությունները, որոնք մանրամասն ներկայացվել են միջնորդության մեջ, ինչպես նաև կատարվել են ու շարունակվում են կատարվել բազմաթիվ այլ գործողություններ՝ ուղղված քրեական գործով էական նշանակություն ունեցող հանգամանքների և փաստերի բացահայտմանը [...]:

Թիվ ԵԱՔԴ/0528/06/16 գործով դատարանի որոշում

Այլ մեղադրյալի նկատմամբ կալանքի ժամկետը երկարացնելու վերաբերյալ նույն դատարանի նախագահությամբ կայացված որոշումներում ներկայացվել է մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու նույնաբովանդակ հիմնավորումը՝

«... գնահատելով ներկայացված փաստարկները, տեղեկությունները, փաստում է, որ նախաքննական մարմինը դրսևորել է բավարար ջանասիրություն գործի քննության ընթացքն ապահովելու համար՝ կատարել է մի շարք քննչական և դատավարական գործողություններ, իսկ կատարվելիք գործողությունների ճանապարհով ապացույցների հավաքման, ձեռք բերմանն ուղղված դատավարական, քննչական գործողությունների կատարումը տվյալ դեպքում դատարանի համար բավարար և անհրաժեշտ հիմք է հանդիսանում մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետը 2 ամսով երկարացնելու համար, իսկ գործի հանգամանքները բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ մեղադրյալը մնալով ազատության մեջ, կարող է թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից, կարող է քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն

գործադրելու կամ այլ ճանապարհով խոչընդոտել մինչդատական վարույթում գործի քննությանը: Դատարանի վերագրյալ հետևությունները պայմանավորված են նաև այն հանգամանքով, որ մեղադրյալին վերագրվում է այնպիսի հանրորեն վտանգավոր արարքի կատարում ,որ նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով՝ որպես պատիժ նախատեսելով 3-8 տարի ժամկետով ազատազրկում»:

Թիվ ԵԱՔԴ/0532/06/16 գործով դատարանի որոշում

Այդպիսով, դատարանի կողմից որևէ փաստական տվյալ չի ներկայացվել, թե ինչ գործողություններ են կատարվել վարույթն իրականացնող մարմնի կողմից, որոնք ուղղակիորեն վերաբերելի են կոնկրետ մեղադրյալին և կարող են գնահատվել անձին անազատության մեջ պահելու հարցի քննարկման շրջանակներում: Ավելին, որպես մեղադրյալի նկատմամբ կալանքի ժամկետի երկարացման հիմք դատարանի կողմից դրվել է առաջիկայում քննչական և դատավարական գործողությունների կատարումը, ինչը, ինչպես վերը նշվեց, անձի կալանավորման իրավաչափ հիմք չէ:

3. Դատարանին չեն ներկայացվում վերաբերելի փաստաթղթերը և տեղեկությունները

Հիմք ընդունելով վարույթն իրականացնող մարմնի կողմից հատուկ ջանասիրության գնահատման կարևորությունը կալանքի ժամկետը երկարացնելու հարցում՝ ուսումնասիրելով դատական ակտերը և դրանց կից ներկայացված փաստաթղթերը՝ փաստվում է, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից դատարանին չեն ներկայացվում նախաքննության ընթացքում ձեռք բերված ապացույցները՝ ամբողջության մեջ, այլ միայն գրավոր ապացույցների տիտղոսաթղթերը, ինչը բացառում է դատարանի կողմից որևէ փաստական տվյալի և տեղեկության անմիջական ուսումնասիրությունը և գնահատումը:

4. Վերաբերելի և բավարար հիմքեր

Ինչպես և կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ որոշումներում, այնպես էլ կալանավորման ժամկետը երկարացնելու վերաբերյալ որոշումներում դատարանների կողմից չեն բերվում բավարար և վերաբերելի հիմնավորումներ: Դրանք վերացական և ընդհանրական են, հաճախ նաև՝ կրկնվող:

Դատարանների կողմից չեն բերվում քրեական գործում առկա բավարար փաստական տվյալներ և տեղեկություններ, որոնք կարող են հիմնավորել անձին անազատության մեջ պահելու հիմքերի առկայությունը: Հիմնականում շեշտը դրվում է հանցագործության բնույթի և վտանգավորության վրա՝ ընդգծելով դրանց համար նախատեսված պատժի խստությունը:

«Հաշվի առնելով, որ առկա և չեն վերացել մեղադրյալին կալանքի տակ պահելու հիմքերն ու պայմանները, նրան մեղսագրվող արարքի բնույթը և վտանգավորության աստիճանը, այն է, դասվում է ծանր հանցագործությունների շարքին, որի համար նախատեսված առավելագույն պատիժը մեկ տարուց ավելի է, ինչպես նաև այն, որ քրեական գործով ձեռք բերված նյութերը բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ նա ազատության մեջ մնալով, կարող է խոչընդոտել մինչդատական վարույթում կամ դատարանում քրեական գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց, հարցաքննված վկաների վրա անօրինական ազդեցություն գործադրելու՝ այն է իր օգտին հետագայում ցուցմունքներ տալուն, իր մեղավորությունը հաստատող ցուցմունքներից հրաժարվելուն և դեպքի հանգամանքները խեղաթյուրելու հարկադրելու միջոցով, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալու կամ այլ ճանապարհով...»:

Թիվ ԵԱՔԴ/0532/06/16 գործով դատարանի որոշում

Մեկ այլ գործով, դատարանն արձանագրել է, որ մեղադրյալին շարունակվում են մեղսագրվել հանցագործություններ, որոնցից առաջին հանցագործությունը դասվում է ծանր հանցագործությունների շարքին, ինչը դատարանի գնահատմամբ վճռորոշ չէ, սակայն էական է, և այս հանգամանքը բարձրացնում է հավանական ռիսկերն առ այն, որ Մեղադրյալը, ազատության մեջ մնալով, կարող է խոչընդոտել մինչդատական վարույթում գործի քննությանը, այդ թվում՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու ճանապարհով, որը կարող է դրսևորվել տարբեր ձևերով, այն դեպքում, երբ քրեական գործով կան նաև քրեական գործի հետ առնչություն ունեցող այլ անձինք, որոնք ազատության մեջ են և նրանց անձը դեռևս բացահայտված չէ»:

Նման պայմաններում, դատարանի հիմնավորումն ընդհանրական, վերացական բնույթ է կրում, որևէ փաստական տվյալներ և տեղեկություններ առ այն, որ մեղադրյալը կարող է խոչընդոտել գործի քննությանը չեն ներկայացվել: Հետևաբար, դատարանի նման եզրահանգումն անհիմն է:

ԱՄՓՈՓՈՒՄ

Սույն հետազոտությունն ուղղված էր 2016 թվականի հուլիսի 17-30-ը Երևան քաղաքում քաղաքացիների մասնակցությամբ հավաքների ընթացքում կատարված ենթադրյալ հանցագործությունների առնչությամբ հարուցված քրեական գործերի շրջանակներում մեղադրյալների նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու խնդիրների ուսումնասիրմանն ու վերհանմանը:

Հետազոտությամբ փաստվում է, որ չնայած Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումների առկայության՝ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառվել է առանց պատշաճ հիմնավորվածության և անհրաժեշտության՝ ի խախտումն մեղադրյալների ազատության իրավունքի: Դատարանների որոշումները կրել են ստանդարտացված բնույթ, հիմնավորումները եղել են ընդհանրական և վերացական:

Մասնավորապես, դատական ակտերով պատշաճ չի հիմնավորվել անձի կողմից հանցագործությունը կատարված լինելու ողջամիտ կասկածը, չեն ներկայացվել դա հիմնավորող տեղեկությունները և փաստերը, վարույթն իրականացնող մարմնի ներկայացրած նյութերը դատարանների կողմից պատշաճ ընթացակարգի շրջանակներում չեն հետազոտվել, կալանավորման անհրաժեշտությունը չի հիմնավորվել բավարար և վերաբերելի հիմնավորումներով, չեն նշվել դրանք հիմնավորող ապացույցները:

Ավելին, ինչպես փաստվում է, դատարանները կրկնում են կալանավորման նույն հիմնավորումները տարբեր անձանց վերաբերող որոշումներում՝ առանց գործի հանգամանքների և մեղադրյալի անձնական բնութագրիչների անհատական ուսումնասիրության և որոշումների անհատականացման: Ուսումնասիրությունը փաստում է, որ գրավը որպես կալանավորմանն այլընտրանքային խափանման միջոց դատարանների կողմից պատշաճ կիրառման չի ենթարկվում՝ գրավի կիրառման միջնորդությունները մերժելով կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու հիմնավորումներից ելնելով:

Կալանքի կիրառման ժամկետը երկարացնելու վերաբերյալ դատարանի որոշումները հիմնավորվում են նախկինում կայացված որոշումներով հաստատված տեղեկությունների և տվյալների վրա՝ առանց պատշաճ գնահատելու մեղադրյալի կողմից հանցագործությունը կատարած լինելու ողջամիտ կասկածի շարունակականությունը: Դատարանի կողմից պատշաճ չի գնահատվում վարույթն իրականացնող մարմնի ջանասիրությունը, և մեղադրյալը շարունակում է պահվել անազատության մեջ առանց պատշաճ հիմնավորումների՝ հիմնականում առաջիկայում, այդ թվում՝ մեղադրյալի հետ որևէ առնչություն չունեցող քննչական և դատավարական գործողությունների կատարման անհրաժեշտությամբ պայմանավորված:

Բացահայտված խնդիրները կրում են համակարգային բնույթ, ինչը բացասական հետևանքներ է ունենում հանցագործության կատարման մեջ մեղադրվող անձանց ազատության իրավունքի պաշտպանվածության վրա:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հիմք ընդունելով հետազոտության արդյունքները՝ առաջարկում ենք

Վարույթն իրականացնող մարմիններին

1. Ապահովել մեղադրյալի նկատմամբ կալանավորման՝ որպես խափանման միջոցի կիրառումը միայն որպես բացառիկ միջոց:
2. Ապահովել կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդությանը կից դատարանին ներկայացվող գործի նյութերի ամբողջականությունը՝ ներառելով ինչպես մեղադրյալի մեղավորությունը հիմնավորող, այնպես էլ արդարացնող առկա ապացույցները:

Դատարաններին

3. Գործի նախնական քննության ընթացքում խափանման միջոց կիրառելու վերաբերյալ որոշում կայացնելիս ապահովել կողմերի հավասարությունը, վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացված նյութերի պատշաճ հետազոտումը և գնահատումը:
4. Մեղադրյալի կողմից կոնկրետ հանցագործությունը կատարված լինելու ողջամիտ կասկածը գնահատել և հիմնավորել կոնկրետ փաստերի և տեղեկությունների հիման վրա:
5. Բացառել կալանավորման կիրառումը՝ բացառապես հիմնվելով անձին մեղսագրվող հանցագործության ծանրության ու վտանգավորության աստիճանի վրա:
6. Խափանման միջոց կիրառելիս և դրա ժամկետը երկարացնելիս ապահովել որոշումների հիմնավորվածությունը և պատճառաբանվածությունը:
7. Խափանման միջոց կիրառելիս և դրա ժամկետը երկարացնելիս ապահովել որոշումների անհատականացվածությունը՝ մեղադրյալի անձնական հանգամանքների պատշաճ գնահատման հիման վրա:
8. Կալանավորման ժամկետի երկարացման միջնորդությունները քննելիս հետազոտել և գնահատել մեղադրյալի կողմից ենթադրյալ հանցագործությունը կատարած լինելու ողջամիտ կասկածի շարունակականությունը հիմնավորող ապացույցների առկայությունը հարցի քննարկման կոնկրետ փուլում:
9. Ապահովել վարույթն իրականացնող մարմնի դրսևորած հատուկ ջանասիրության պատշաճ գնահատում: